




ԱՐԴՎԻՔԻ



907801993 2pus երանելիթ 2013 ՎԱԼԵՐԻԱՆԻ

ՆՈՐ
ՀՐՁԱՆ 1957

LA-
SUPR

«سيون» مجلة أرمنية شهرية، دينية، أدبية، ثقافية، لغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ

— Երեսնամեայ վաստակ

ԵՐԵ

1

ԿՐՈՆԱԿԱՆ

— «Սիոն» ուղակա կրօնական ամսագիր

ՇՆՈՐՀԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՅ

6

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

— ՀՆԱՐԵԿ

ԱՐԺԱՄ ՏԱՏՐԵԱՆ

14

— ԱԵՋԱՐ . . .

» »

15

— Երեկոն Արարատեան դաւում

ԱՐԺԱԼՈՅԱՆ ՄԱՐԴԱՐԵԱՆ

15

— Աղաշանք

Մ. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

16

— Քառեակենք

» »

16

— Զգայնուրիւն

ԶԱԻԷՆ Վ. Զ.

17

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Վարդան Այգեկցիի վերագրուած խոաս մը

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԻՇԽԱՆ

18

ՊԱՏՄՈ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

— Պատ Արակունի

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ

22

ԵՐԱՋՆԱԳԻՏԱԿԱՆ

— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

26

Գրական բաժինն «Սիոն»ի մէջ

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

31

Փոքր բայց օրինակելի հայ գաղուր մը

Կ. Վ. Գ.

36

Քաղուածք Գերազոյն Հոգեւոր Խորնուրդի նիսերի արձանագրութիւնից

38

ԵՐԵՍՈՒԻՆ ՏԱՐԻ ԱՐԱՅ

— Դպրոցական արդիւնք

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

39

— Օրմանեանի կարծիքը 1866—1877ի ՍԻԹ ՆԻ մասին

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

39

Հաղորդագրութիւն Ս. Արուոյ Դիւմենէն

40

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

— Հեռագիրներ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

41

— Եկեղեցական-Բեմական

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

42

— Պատօնական

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

44

— Ս. Խնճեան արարողութիւնները Երուսալէմի մէջ

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

45

— Կորին Վ.Ր. Մանուկելեան Փառ. Վարժարանի Փոխ - Տեսուչ

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

46

Երուսալէմի Յունաց Պատրիարքի ընտրութիւնը

46

ՏԻՐՈՒԻՆ

— Գերենիկ Դեմիրնեան

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

47

— Շաւարց Միասեան

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

47

— S. Խորեն Ա. Քինյ. Շուշանեան

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

48

— S. Գեորգ Ա. Քինյ. Գեորգեան

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

48

— S. Յովհաննես Ա. Քինյ. Կելիերեան

ԹՈՐԴՈՄ Վ.Ր. ՄԱՆՈՒԿԻԵԱՆ

48

تصدرها - بطريركية الارمن الاندونيزية - المدير والمحرر المسؤول - صاحب النشرة الاسقف هايكازون أبراهميان

طبع في مطبعة دير الارمن - القدس العدد ٢ - ١٩٥٧

بيان - فبراير ١٩٥٧

ՍԻՐԱՆ

Լ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ


1957

ՑՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԵՍՆԱՄԵԱՅ ՎԱՍՏԱԿ



Ներկայ թիւով ՍԻՐՈՆ կը բեւակոխէ իր «նոր ըշան»ի ՅԵՐԴ ՏԱՐԻՆ : Կարելի է ըսել որ ՍԻՐՈՆ ունեցած է երկու ծնունդ . առաջինը 1866ին , եւ ապրած լոկ 12 տարի , մինչև 1877 : Խոկ երկրորդը՝ 1927ին : Թէեւ սոյզ է որ նորը նինին յաջորդն է թէ՝ անունով (գրի մը ՏԱՐԵԵՐՈՒՔԵԱՄԲ , զի նինը կը գրուի ՍԻՐՈՆ) եւ թէ իրեւ պատմաքերը մէկ եւ նոյն պատրիարքութեան , այսուհանդերձ դժուար է մին միւսին շարունակութիւնը համարել : Բացի ուղղութեան եւ պարունակութեան ՏԱՐԵԵՐՈՒՔԵՆԻՆ , լման 50 ՏԱՐԻՆԵՐՈՒ անջրդպես մը կայ երկութին միջեւ զոր դժուար է լեցնել նոյնացնելու համար երկու հրատարակութիւնները : Հետեւարար 1927ի ծնունդը պէտք է նկատել նոր սկիզբ մը , իրեւ յլացումը նոր ժամանակներու , նոր պայմաններու , եւ նոր մտայնութեամբ անձերու :

Ցիւատակելով այս երեսնամեակը մեր նպատակը չէ երեխ ՑՈՒՆԻՒԱԿԱՆ կամ նման ակնկալութիւններ նետապնդել պատմաքերիս համար : ՍԻՐՈՆ զիտէ թէ տակաւին չէ հասած պահանջուած այն հասուն ՏԱՐԻՒԹԻՆ որ անձերը եւ Հաստատութիւնները պատկառեի կ'ընծայէ , ոչ ալ դեռ կը զգայ թէ տեմարանած է իր ծոցին մէջ այնքան մը արդիւններ որոնք իրենք զիւենք պարտադրեն հանրային յարգանքի : Այսուհանդերձ կը փափաքինք պարծանիով յետահայեաց ակնարկ մը նետել 30 ՏԱՐԻՆԵՐՈՒ ընթացքին շահուած վաստակին վրայ , նման մշակին , որ երբ օրուան սկիզբը կրկին ձեռքը կը դնէ մանին վրայ՝ կանգ կ'առնէ պահ մը զինուակ աչով չափելու համար երեկի եւ նախորդ օրերուն կատարած ներկը , եւ երեսը տեսնագրելով կը վերսկսի նոր եռանդով իր արօրագրութեան արդար աշխատանիքին :

Բաց ասի նման անդրադարձումներ կը նետապնդեն նաեւ ուրիշ նպատակներ : — Ցառաջդիմութեան եւ յաջորդութեան նիմնական օրէնքներէն մէկն է երեմն եւ նայիլ անցեալին վրայ՝ աւելի յստակ տեսնելու համար ապագան : Անդրադարձալ իր գոյութեան կրուաններուն՝ վսահ ըլլալու համար որ չեն

19368ահ

169-58

խախտած անոնք: Վերջապէս աչքի անցնել յառաջադրուած նպատակները ոչ միայն սուզգելու համար որ շեղում չէ կատարուած անոնցմէ, այլ հաստատելու համար որ անոնք իրենց գործադրութեան նամրուն մէջ են:

Նպատակն է որ տրուած Հաստատութեան մը կամ ձեռնարկի մը տեսակը եւ իննուութիւնը կը նեղէ. եւ անոր հաւատարմօրէն գործադրութիւնն է որ նախ առաջը կ'առնէ թերումներու եւ ալասերումներու, եւ ապա կ'ապահովէ անոր գոյութեան տեսականացումը:

ՍԻՌՆ որու նպատակներով հրապարակ դրուած ձեռնարկ մըն է: Անոր նիմնադիրը, Եղիշէ Պատրիարք Դուռեան, **ՍԻՌՆԻ** առաջին թիւի առաջին էջը զարգարող իր պատրիարքով, ուղղեալ անոր առաջին խմբագրապէս Բարգեն Եպս. Կիւլէսէրեանի, կ'ուրուազգծէ ՍԻՌՆԻ նպատակները: Այդ պատրիարքին մէջ նախ կը մատնանուին այն աղդակները որոնք մղիչ պատճառը հանդիսացած են նման գործ մը սկսելու: — Միաբանութեան բաղնանիք, ընթեցաւէր նայ հասարակութեան խնդրանիք, եւ Ս. Արոռոյ Տնօրէն ժողովոյ որոշմոնիք: Ապա կը նեղուին ՍԻՌՆԻ նպատակները:

ա) **Գոհացում** տալ նոգեւոր այն պէտին՝ զոր կը զգայ մեր բարեպաշչ ժողովուրդը, ո՞ւր եւ ինչ պայմաններու մէջ աշ որ ապրի: — ՍԻՌՆ մեր ժողովուրդի զարգացած մասին ալ տրամադրուած է խունդու, Աւետարանին բխող խաղաղիկ ու փրկարար ներշնչումներ տարու համար անոնց՝ որոնք խմատութիւնն ունին իրենց մտի հայեցողութիւններուն հետ հաշտ ու համարձակ լծորդելու մարդկային զգացումներուն անենէն նույրականին, կրօնին համայականը:


բ) **ՍԻՌՆ** պիտի ցանայ մշակել նաեւ տոհմային նին մատենագրութիւնը, մանաւանդ անոր եցերուն վրայ աւելցնելով անձանօր կամ անձիս մնացած գործեր կամ գրուածներ: — Հայ Եկեղեցազիտական եւ բանափրական հարցերում վերաբերեամբ ալ ՍԻՌՆ պիտի ունենայ իր կարեւոր բաժինը:

գ) **ՍԻՌՆ** իր գրական դերը պիտի ամփոփէ ... որոշ շշանակի մը մէջ, որ քնականարար մուս չեն կրնար գտնել զուս գրականութեան նույրուած բոլոր սեռերը: (Ընդգծութեալ Խմբագրութեանս են):

Այս նպատակները իրագործելու համար **ՍԻՌՆԻ** առաջին կորովի խըմբագրապէտին իրենց բանկազին աջակցութիւնը բերին ժամանակակից Եկեղեցական ու աշխարհական յայտնի մատորական անձնաւորութիւններու նոյակապ փաղանգ մը, որոնք արդարեւ այնպիսի առողջ եւ ուժեղ մղում մը տուին ՍԻՌՆԻ որուն քամփը կը զգացուի մինչեւ այսօր իրենց առ յաւէտ մեկնելէ վերջ անզամ: Անոնց խնկելի յիշատակին ի յարգանս, եւ անոնց գործը շարունակողներու յերախտազիտութիւն կ'ըլլան յետազայ անդրադառները:



Մարդեր կան որոնց զործը կ'անցնի զիրենք կ'ըսեն, դարձեալ, զործեր կան որոնք կ'անցնին զիրենք երկնողները, Այսօք երբ ընդհանուր ակնարկմը կը նետենք Սիրնի երեսնամեայ հատորներու շարքին վրայ, որ ոհէ բարեպաշտ



ընտանիքի մը զբաղարանին մէջ աւելի է քան զարդ մը ըլլալէ, կը համոզուինք թէ գործեր կ'անդրանցնին զիրենք երկնողները։ Քաղցը ու բարի այն հոգիները որոնք տքնեցան Սիոնի իրազործման համար, մեծ մասով այսօր ոչ ևս են. և ինչ որ հաւաքով ու սիրով երկնեցին անոնք, կը մնայ ժառանգութիւն մեզի։

Երեսուն տարիներ առաջ, վերսկսաւ Սիոնի նոր շրջանը, Երանաչնորհ եղիշէ Դուրեկան Պատրիարքի նախաձեռնութեամբ, որ Ս. Յակոբեանց դարաւոր ու արդարե պանծալի Ս. Աթոռին համար ընդհանրապէս և Պաշտօնական Ամսագրին համար մասնաւորապէս, իր և իր գործակիցներուն աջակցութեամբ նոր ընջան մը կը բանար, կրօնական, կրթական և դաստիարակչական արթնութեամբ։ Վասնզի բազմանմուտ պատրիարքին պաշտօնավարութեամբ, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը պայծառ դէմքով, մտաւորական արժանիքներով զահակալի մը ներկայութեամբ կը բախտաւորուէր։ Իրթական և իմացական բարգաւաճ կեանքի մէկ երեսն էր անտարակոյս հրատարակութիւնը Պատրիարքարանիս Ամսագրին, մամուլի և խօսնակի կրկնակ հանգամանքներով։ Կանխող քանի մը տարիներուն՝ Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց վարժարանն ու Ընծայարանը վերակազմուած էին ու Ս. Յակոբեանց տպարանը վերաբացուած էր։ Տնտեսական պայմաններու յուսալից առաւելութեամբ ու խելացի մատակարարութեամբ, պատկառելի այս գործը իր ընթացքը առաւ և բարւոք ճամբու մը մէջ մտնելով շարունակուեցաւ։ Զարթօնքի այս շարժումին մաս կազմեց նաև Սիոնի վերահրատարակութիւնը։

Հիմնադիրն ու գործակիցները հաւատացին իրենց գործին վեհութեան և կարեւորութեան, տեսանողի ներշնչումով յուսացին արդիւնքին, Տէրը օրհնեց զիրենք ու հասնցուց իրենց հունձքը։ Մեր հոգիներուն մէջ իրենց մասնաւոր տեղը ունեցող, բայց տակաւ առ տակաւ պատմութեան անցնող պատկառելի այդ մարդոց արգասիքը շարունակուեցաւ ահաւասիկ երեսնամեակ մը, իրենց իսկ պատրաստած յաջորդներուն կողմէ։ Սիոնի սեղմ էջերէն ամսէ ամսի Հայ ժողովուրդին տրուեցաւ մոքի և հոգիի մնունդ, Ս. Աւետարանի սրտազրաւ դրուազներուն ընդելուզուած սփոփարար ու կենսաւորող խոսքը մեր Տիրոջ, — Քրիստոնէական վարդապետութեան ճշմարտութիւնները, մեզի յատուկ ազգայնացած ոլորտի մը ընդմէջէն։ Հայ տուներէն ու Հաստատութիւններէն ներս Սիոն տարաւ Աւետարանին Լոյսը, թշնամիներէն բռնադատեալ ընդհանուր խաւարին մէջէն գուրս բերելու և լուսաւորելու համար Հայ ժողովուրդի գաւկըներուն միտքն ու հոգին։ Երախտավիտութեամբ, պատկառոնքով ո՛ն երջանկութեամբ կը կենանք գործին և ապա բոլոր գործաւորներուն յիշատակին դիմաց։

Կրօնաբարոյական, պատմական իր զիմաւոր դերին քովը ի վեր Սիոն միշտ ունեցաւ նաև — ամբողջ նոր ընջանի երեսնամեակի ընթացքին — բանասիրական և զրական իր բաժինները, որոնք եթէ զիմաւոր դերը չքոնեցին (և արդէն պէտք չէ որ բանէին), կարեւոր տեղ մը զրաւեցին սակայն ընդհանուր մարմնին մէջ, և ունեցան հանգամանաւոր և հմուտ զրիչներ, արդէն իսկ հեղինակութիւն եղող մտքի մշակներ։

Սիոն, տակաւին իր նոր շրջանի առաջին տարիներուն մէջ էր երբ Ա. Աթոռոյս ժառանգաւորաց վարժարանն ու Ընծայարանը կուտար իր առաջին հունձքը : Հայաստանեայց Եկեղեցւոյ ընծայուած նոր զինուորազրեալներ, ուրոնք իրենց մատաղ ոյժերը պիտի ի սպաս դնէին բազմակարօտ ժողովութզի մը կարիքներուն և ատոր հետ մէկտեղ նուիրուէին կրթական մշակութային աշխատանքներու, Սիոնը իրենց համար գտնելով բեմ՝ ուր պիտի երեւէին մտքի և զրչի իրենց փորձերով, հմուտ և փորձառու խմբագիրները՝ ունենալով իրենց առաջնորդ: Գեղեցիկ ներդաշնակութեամբ մը իրար քով կուզան, շատ անզամ, հին և նոր զրիչներ, հեղինակաւոր խօսքն ու առաջին թռիչքները ընող կամ խիզախ խոյանքով երիտասարդ ոյժեր :

Գլխաւոր այս երեսները Ամսագրին սակայն, ունին իրենց ստորաբաժանումները, որոնց մէջ կը մանեն բանասիրական զանազան հարցեր, Ա. Գրական մեկնութիւններ, աստուածաբանական, եկեղեցագիտական, պատմական, պաղեստինագրական, լեզուական, ստուգաբանական, մատենագրական ինդիքներ, քննական ակնոցով գիտուած, ընդհանրապէս լոյս կը սփռեն աւանդական կամ կիսամութ մնացած խնդիրներու վրայ և կուտան զանոնք յաճախ մասնագիտական և երբեմն ալ ընթացիկ սեւեռումներով :

Սիոնի առաջին տասնամեակին, հեղինակաւոր աշխատակիցներ եղած են, Գուրեան Պատրիարք, Բարգէն Եպս., Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Թորգոմ և Մեսրոպ Պատրիարքներ, Գարեգին Արքեպս. Յովսէփեանց, Գարեգին Եպս. Տրապիզոնի, Ղեւոնդ Եպս. Գուրեան, Գ. Մխարեան, Տիրան Վրդ., Յ. Օշական, Ն. Պէրպէրեան, Ն. Աղբալեան, Մինաս Զերազ, Վահան Թէքէեան, Վահան Մալէզեան, Գ. Ֆընտրզեան, Մ. Յ. Թիրեաքեան, Մեսրոպ Նուպարեան, Տամատեան, Նահէ Յ. Վրդ. Պասպարեան, Խ. Պ. Քարտաշ և շատ մը ուրիշներ, որոնք համաձայն իրենց նախասիրութեանց և խառնուածքին բերած են իրենց մասնակցութիւնը :

Սիոն հաւատարիմ մնալով հանդերձ զլիաւորաբար իր կրօնաբարոյական, բանասիրական և պատմական ուղեգծին, շարունակեց իր ընթացքը, հակառակ նիւթական և քաղաքական տագնապալի շրջաններու: Երկրորդ տասնամեակին, Համաշխարհային Բ. պատերազմի օրերուն, ինչպէս նաև Ա. Աթոռոյ ներքին տագնապներուն կարելի կանոնաւորութեամբ շարունակուեցաւ, աշխատակիցներ ունենալով առաւելաբար եկեղեցական նորահաս սերունդէն: Մեսրոպ և Կիւրեղ Պատրիարքներու օրով Սիոն ունեցաւ դարձեալ նշանակելի և հեղինակաւոր աշխատակիցներ, ինչպէս օրինակ Արտաւազդ Արքեպս. Ոիւրմէեան, Ն. Վ. Ծովական, Եղիվարդ, Հայկազուն Վրդ., Ծնորհք Վրդ., Թորգոմ Վրդ., Մերովբէ Վրդ., Յարութիւն Վրդ., Խսահակ Վրդ., Հ. Աճառեան, Յ. Քիւրեան, Ա. Ալպօյաճեան, Ն. Աղոնց, Արսէն Երկաթ, Ն. Կատար, Ակիւլինէ, Հ. Երեմեան, Գր. Մ. Ֆաթիմի, Գէորգ Մորլեան, Յ. Բասմաճեան, Վահէ-Վահեան, Բ. Եղիաեան և շատ մը ուրիշներ :

Համաշխարհային Բ. պատերազմը իր աշխարհաւեր կործանումով և Ա. Աթոռոյ ներքին տագնապը տկարացուցին մշակութային աշխատանքները, սա-

կայն սկսուած զործը երբեք կանգ չառաւ, այլ ընդհակառակը շարունակուեցաւ անխափան։ Այսուհանդերձ 1948ին երեւան եկաւ Պաղեստինի ծանօթ Հրեայ-Արաբ պատերազմը՝ որուն հետեւանքով թէև ընկերային-մշակութային մեր զործը վերին աստիճանի տուժեց բայց դարձեալ չկասեցաւ։

Սակայն ժամանակի ընթացքին, Սիոն ամսագիր՝ տակաւ առ տակաւ կորսնցուց իր աշխատակիցները։ Խորունկ ցաւով կը յիշենք այն պայծառ առունները որոնք առ յաւէտ փակեցին իրենց աչքերը այս աշխարհին . . . այդպէսով զգալի բաց մը ձգելով մեր հոգիներուն՝ ինչպէս նաև Սիոնի էջերուն մէջ։ Սակայն երախտազիտութեան և գեղեցիկ զգացումներու պատմուճանովը կը յիշենք զանոնք, Սիոնի երբեմնի աշխատակիցները, կորովի և տքնաշան զրիչները, Երանաշնորհ Թորզոմ Պատրիարքն ու յաջորդ երկու զահակալները Ս. Ռոռին, Գարեգին Կաթ. Յովսէփեանց, Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան, Ակադեմիկոս Հրաչեայ Աճառեան, զրագէտ-քննադատ Յ. Օշական, Շահան Պէրպէրեան, իր անստզիւտ իմաստասիրական յօդուածներով, Պարզեւ Եպս. Վրթանէսեան։ Եթէ մէկ կողմէն վերոյիշեալները իրենց բացակայութեամբ զգալի բաց մը զոյացուցին, միւս կողմէն սակայն Սիոն ապահովեց աշխատակիցութիւնը ուրիշ բազմարեղուն աշխատակիցներու, օրինակ, Հրանդ Ք. Արմէն, Հայկ Պէրպէրեան, Օր. Սիրարքի Տէր Ներսէսեան, Մ. Մանուկեան, Գր. Արկ. Գալուստեան, Արամ Երեմեան, Գր. Ա. Սարաֆեան, Աշտիշատ, Զաւէն Եկէնեան, Մարի Աթմաճեան, Վահրամ Մավեան, Անել և շատ մը ուրիշներ։

Երբ այսօր, երեսնամեակի առիթով, պահ մը կանգ կ'առնենք յետադարձ ակնարկով մը նայելու այս վաստակին, երախտազիտութեան և յարգանքի՝ պարտականութեան զգացումներ կը լեցնեն մեր սրտերը հանդէպ հոյակապ կամ համեստ այն բարի հոգիներուն՝ որոնք յոյսով և մանաւանդ սիրով փարեցան իրենց քրիստոնէական, աստուածահաճոյ, ազգօգուտ այս զործին և իրենց անունները և երկերը անջնջելի կերպով ժառանգ ձգեցին զալիք սերունդներուն։ Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Երեսնամեայ այս վաստակին առիթով և թուականի մը առջև, յանուն երուսաղիմայ Ս. Յակոբեանց Պատրիարքութեան, Սիոն իր չերմազին շնորհակալութիւնները կը յայտնէ իր հին և նոր բոլոր աշխատակիցներուն, մաղթելով անոնց արեւատ տարիներ, որպէսզի Հայ գիրին միջոցաւ մեր ժողովուրդին և Աստուծոյ ծառայելու գոհունակութիւնը և երջանկութիւնը իրենց և Սիոնի ընթերցողներունը ըլլայ զալիք երեսնամեակներու ընթացքին։



ԿՐՈՆԱԿԱՆ

“ՍԻՐՆ” ՈՐՊԵՍ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Սիրն ըլլալով պաշտօնական ամսաւթերթը Հայց. Եկեղեցւոյ նուիրապետական մեծ կեղրոններէն մէկուն, ամէն բանէ առաջ կ'ակնկալուէր որ ըլլար հանդէս մը՝ նուիրուած կրօնքի և քրիստոնէական կեանքի և բարոյականի ծաւալման: Ո՞րչափով Սիրն արդարացուցած է այս ակնկալութիւնը. հետևեալ տողերը փորձ մըն են պատասխանելու այս հարցումին, ընդհանուր ակնարկ մը նետելով անցնող 30 տարիներու ընթացքին անոր էջերուն մէջ լոյս տեսած կրօնական յօդուածներու վրայ:

Նախ գնենք հարցը թէ ի՞նչ է կրօնքը: Բառեր ունին իրենց լայն և նեղ իմաստները: Պէտք է ըսենք որ կրօնքը շատ աւելի ընդարձակ սահման մը կ'ընդգրկէ քան ի՞նչ որ առհասարակ կը կարծուի: Կրօնքը լոկ «խղճի խնդիր» չէ. կրօնքը կեանիի խնդիր է, և ոչինչ այնքան խոր է և ընդգարձակ՝ որ քան նոյնինքն կեանքը: Բաց ասուի կրօնքը լոկ անհատական հարց ալ չէ. կրօնքը առաւելաբար ընկերալին երեւոյր և ընկերային հարց է:

Մարդ ապրած է և կրնայ ապրիլ առանց «Քաղաքակրթութեան». բայց չէ ապրած և չի կրնար ապրիլ առանց կրօնքի: Մինչև իսկ այսպէս կոչուած «անկրօնո կամ «անհաւատ» անհատներ — որովհետեւ նման ցեղ կամ ժողովուրդ զոյութիւն չունի մեր երկրագունութին վրայ — շարունակ կ'ապրին կրօնքի մթնոլորտի և մզձաւանդի մէջ: Այն պայքարը զոր այս կարգի մարդիկ հարկադրուած են մղել, իրենցմէ ներս և իւրենցմէ գուրս, կրօնքը մերժելու կամ հերքելու համար, թէև ժխտական՝ բայց ի՞նքնին կրօնական արարքներ են:

Մարդ որչափ ատեն որ բանաւոր արաւած է, նոյնչափ ատեն կրօնական արարած պիտի մնայ: Մին կամ միւսը ըլլալէ դադ-

րիլ, կը նշանակէ ի՞նքզի՞նք մարդկութեան սահմաններէն գուրս նետելու անկարելին փորձել: — Մարդ ի՞նչ բանի որ կը ծառայեցնէ իր բանականութիւնը և կամքը այդ իր կրօնքն է: Մարդ կեանքի ի՞նչ վերջնական նպատակ որ կը գնէ իրեն համար, կամ ի՞նչ բանի մէջ որ կը փնտոէ իր վերջնական երջանկութիւնը, այդ իր երկինքն է, այդ իր գրախոտն է: Վերջապէս, կեանքի մէջ հետապնդուած նպատակներու և միջոցներու երկար կամ կարճ չգթայի վերջին ոգակը մարդուն աստուածն է: Հետևաբար «հաճայա-պատուրիւն», «եսա-պատուրիւն», «ցեղա-կրօնուրիւն», «գաղափարա-պատուրիւն» և նման բառեր այնքան կրօնական գրութիւններ են — թէեւ սիսաւ — որքան ալևսուած - պատուրիւնը: Ի զուրտեղը չէ որ առաքեալը կ'ըսէ. «Որոց աստուած որովայնն իւրեանց է» (Փիլ. Գ. 19): Հետևաբար վիճելի հարցը կրօնք ունենալու կամ չունենալու մասին չէ, այլ տեսակի մասին է: Այս իմաստով, ի՞նչպէս ամէն անհաւատ, նոյնպէս ամէն թերթ կրօնքի մը կը ծառայէ: Սիրն կը ծառայէ նումարիս ԱՍՏՈՒԱԾՊԱԾՏՈՒԹԵԱՆ կրօնքին:

Աստուած պաշտութիւնը կրօնական այն զգացումն է որ ամէն բանէ գերադաս կը նկատէ երկինքի և երկրի արարիչ Աստուածոյ մը պաշտամունքը, այսինքն սէրը, և Անոր կամքին համակերպութիւնը: Որսէ օստարոտի նկատում չի հաշտուիր մաքուր և ճշմարիտ Աստուած պաշտութեան հետ: Այս է որ Առաքեալը կը յանձնաբարէ իր աշակերտին. «Կրթիա զանձն քո յաստուած պաշտութիւնը ըսելով, և զայն կը նկատէ «ամենայն ինչի օգտակար» (Ա. Տիմ. Գ. 7):

Բայտ այսմ քիչ բան կայ կեանքին մէջ որ չմտնէ կրօնքի սահմաննեն ներս, այն

աստիճան որ կեանք և կրօնք խորքի մէջ կը նոյնանան, և իբրև մարդ ապրիլը կ'առնէ իմաստը կրօնական արարած ապրելու:

«Մի՛՛ն»ի ԿՐՈՆԱԿԱՆ ՅՈՒԹԻՍԾՆԵՐԸ. — Եթէ կրօնքի մասին վերև դրուած սահմանը կիրարկուի Սիոնի յօդուածներուն համար, քիչ գրութիւններ գուրս կը մնան այդ սահմանէն: Հոգ չէ թէ անոնք ո՞ր ընդհանուր խորագրի ներքե դրուած ըլլան — խմբագրական, բանասիրական, պատմական և լն. — եթէ այդ յօդուածով ներկայացուած հարցը հեռուէն կամ մօտէն, ուղղակի կամ անուղղակի առնչութիւն ունի Աստուծոյ և իր գործելու կիրաբերուն հետ, մարդուն և իր հոգեկան ու բարոյական կեանքին հետ, կ'իյնան կրօնական յօդուածներու շարքին մէջ: Աւելի մասնաւորելով ըսուածը, բոլոր Ա. Գրական նիւթեր (մեկնաբանութիւն, ներածութիւն, հնախօսութիւն, և լն.) բոլոր աստուածաբանական հարցեր (դաւանաբանական, ջատագովական, եկեղեցաբանական, և լն.), եկեղեցական պատմութեան վերաբերեալ դէպքերու, գէմքերու և շարժումներու ուսումնասիրութիւններ, քրիստոնէական պաշտամունքի և կարգապահութեան հետ կապ ունեցող հարցեր (ծիսական, ժամապաշտական, կանոնական, և ն.), վերջապէս եկեղեցական արուեստներ (ճարտարապետութիւն, սրբազննկարչութիւն, շարականագիտութիւն, և ն.) կը մտնեն կրօնական գիտելեաց այս լայն սահմանին մէջ:

Այս հասկացողութեամբ, Սիոնի պարունակութիւնը իր ստուար մեծամասնութեամբ կը գտոնայ կրօնական: — Գրեթէ բոլոր խմբագրականները, բոլոր բանասիրական յօդուածները (բացի լեզուական մանր ուսումնասիրութիւններէ), բոլոր պատմական նիւթերը (բացի ինչ ինչ զուտ աշխարհիկ պատմութեան վերաբերեալ լուսաբանութիւններէ), գրական կոչուած յօդուածներու մեծ մասը (աշխարհիկ գրական գէմքերու նույրուած ուսումնասիրութիւններ և Օչականնեան վերլուծումներ են մասցածները), բանաստեղծականներուն մեծագոյն տոկոսը (գուրս կը մնան զուտ ոռմանթիք ապրումներու տաղաչափութիւնները) կ'իյնան այս կալուածին մէջ:

Սակայն երբ մենք կը ձեռնարկենք ակնարկ մը նետել Սիոնի 30 տարուան

կրօնական վաստակին վրայ, արժեորելու համար անոր կրօնական սպասը մեր ժողովուրդին, ի մտի չունինք բառին լայն առումով կրօնական յօդուածները: Այլ նկատի ունինք սովորաբար ըմբռնուած և Սիոնի մէջ կիրարկուած նեղ և սահմանափակ իմաստով կրօնական գրութիւնները:

Սիոնի մէջ ԿՐՈՆԱԿԱՆ խորագրի ներքե դրուած են առհասարակ այն բոլոր յօդուածները՝ որոնք քրիստոնէական կարգ մը ձշմարտութիւններ կ'ընդլայնեն գրական և քարոզչական մեթոսներով:

Սիոնի հիմնագիրը, Երանելի Եղիշէ Պատրիարք Դուռեան, Սիոնի առաջին թիւի առաջին էջին մէջ, հետևեալ բառերով կ'ուրուագծէ անոր կատարելիք կրօնական գերը: «Երկար տարիներէ ի վեր լուած Սիօնի ձայնը վերատին լսեցնելով՝ Ա. Աթոռու այն համոզումը ունի թէ զոնէ մասսամբ պիտի կրնայ գոհացում տալ հոգեւոր այն պէտքին՝ զոր կը զգայ մեր բարեպատճեամբ մէջ ալ որ ապրի:

«Սիոնը սակայն՝ մեր ժողովուրդին զարգացած մասին ալ տրամադրուած է խօսելու, Աւետարանին բխող խաղաղիկ եւ փրկարա ներենչումներ տալու համար անոնց՝ որոնք իմաստութիւնն ունին իրենց մտքի բոլոր հայեցողութիւններուն հետ հաշտ ու համարձակ լծորելու մարդկային զգացումներուն ամենէն նույրականին, կրօնական հրամայականը»: (Բնդգծումները մերն են):

Բարգէն եպս ., ստանձնելէ ետք Սիոնի խմբագրապետութիւնը՝ անոր կրօնական գերը և ուղղութիւնը կը լուսաբանէ այսպէս: «Մէնք կը հաւատանք որ հայ ժողովուրդը խորունկ կարօտութիւն մը ունի Աւետարանի մաքուր սնունդին և յստակ լոյսին: Այդ կարօտութիւնը կ'աղաղակէ այսօր, մանաւանդ մեր գաղութներուն մէջ: Անոր վիշտով կը զիտենք որ կրօնքի ներշնչումներէն զրկուած են իրենց բնաշխարհէն տարագիր մեր եղբայրները, որոնք կը տառապին հոգեկան անհանգստութիւններով:

«Սիոն պիտի ջանայ տալ անոնց այդ ներշնչումներուն կազդոյրը»:

Եւ արգարե Սիոն 30 տարիներու ընթացքին շարունակաբար տուած է կրօնական նիւթեր ահանելի պէսպիտութեամբ: Անոր ամէն մէկ թիւին մէջ, առանց բացա-

ռութեան, գտնուած են 3-9 էջ զուտ կրօնական և քարոզիսական կտորներ։ 30 տարիներու ընթացքին հրատարակուած է աւելի քան 10,400 էջ Սիոնի, որուն չուրջ 2000 էջը զուտ կրօնական է։

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ. — Սիոնի իր սկզբնական շրջանին իր չուրջ հաւաքած է կրօնական գրողներու լաւագոյն փոքր խումբ մը։ Մեծ հոգիներու այս խումբը կը գլխաւորուի օրուան պատրիարք Եղիշէ Դուրեանով։ Դըժախտարար անոր հիւանդութիւնը և յառաջացեալ տարիքը թոյլ չեն տուած որ աւելի լայն չափով մասնակցի Սիոնի կրօնական բաժնին։ Իրմէ կը մնայ խորհրդածութեանց շարք մը, բաղկացած 5 յաջորդական յօդուածներէ և զրուած 1928ի Ծննդեան տօնին առթիւ «Աստուածպաշտութեանխորհուրդը» ընդհանուր վերնագրով։ (Ա. Տիմ. Ա. 6)

Սկզբնական շրջանին Սիոնի գլխաւոր կրօնական յօդուածագիրն է Բաբկէն նպա։ Կիւլեսերան (ապա Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) որ եղած է նաև Սիոնի առաջին խմբագրապետը 1927-1930։ Իր յօդուածները լոյս տեսած են «Դասեր Աւետարաննեն» ընդհանուր խորագրին տակ։ Իր մերձեցումը կրօնական նիւթերուն, իր նկարագրին նման պարզ է և անկեղծ։ Երբեմ շեշտակի է և մինչև իսկ յախուռն։ Աւետարանական այս դասերը 1934ին լոյս տեսած են 188 էջնոց առանձին գրքոյկով մը՝ վերև յիշուած անուան տակ։

Սիոնի առաջին թիւէն իսկ կրօնական գրութիւններով աշխատակցած է Թոորզով նպա։ Գուշակեան, որ Ա. Աթոռոյս պատրիարք ընտրուելէ վերջ 1931ին, դարձաւ անոր կրօնական բաժնի տիրական գրողը մինչև իր մահը (1939)։ Եղած են տարիներ, օրինակ 1937, երբ կրօնական բոլոր յօդուածները, 18 կտոր, եղած են իր գրչէն։ Թորգոմ պատրիարքի կրօնա-բարոյական այս կարճ խորհրդածութիւնները, որոնք ռածաշու Առաքելական ընթերցումներու առթիւ կիրակնօրեայ խոկումները էին, իր մահէն վերջ, 1939ին հրատարակուեցան 240 էջնոց գրքոյկով մը, «Առաքելոց Շաւալով» անուան տակ։ Իսկ Սիոնի մէջ երեցած իր աւելի երկարաշունչ քարոզները ապա մաս կազմեցին՝ իր ամբողջական երկերու շարքին մէջ 1940ին առանձին հատու

րով լոյս տեսած՝ «Քարոզներ» զրքին։ Ասոնցմէ զատ ան Սիոնի առաջին թիւերուն մէջ տուած է նաև աւելի երկարաշունչ զրութիւններ, ուր Ս. Գրական ինչ ինչ գէպքեր իրեւ թեզան գործածելով, անոնց վրայ բանած է, կարելի է ըսել, մարգարէշչունչ մտածումներ, թելադրուելով մեր ժողովուրդի այդ ժամանակ ներկայացուցած ընկերային պայմաններէն։ Ասոնց կարգին է օրինակ «Բեթօսամիւսի Սայլը» (1927 տարուան մէջ) որ առանձին պրակով ալ հրատարակուած է։

Առաջին տարիներու Սիոնի կրօնական յօդուածագրերու կարգին է նաև Պետոնի նպա։ Դուրեան։ Իր զրութիւնները երեցած են «Պարզ Քարոզներ» ընդհանուր խորագրով։

Կրօնական յօդուածագրերու կարգին չենք կրնար չյիշել Մեսրոպ նպա։ Նեանեանը (ապա պատրիարք Ա. Աթոռոյս) և Մկրտիչ նպա։ Աղաւնուենին (Հանգուցեալ), որոնք երկուքն ալ առաջին օրէն մինչև իրենց մահը աշխատակցած են Սիոնի։ Ասոնց յօդուածները թէս չեն զրուած «կրօնական» բաժնի տակ, այնուհանդերձ առաջինը Ս. Գրական յոյժ շահեկան գիտելիքներով և երկրորդը Ա. Երկրի հայ վանքերու, աւանդութիւններու և ուժատարոններու մասին օգտաշատ պրատումներով նպաստած են «մեր բարեկալաշտ ժողովուրդի հոգեոր» պահանջման։

Սիոնի հրատարակութեան յաջորդ տարին, 1928ին, Դուրեան պատրիարքով սկսուած կրթական գործը, Ժառ. վարժարանը, տուաւ իր երախայրիքը՝ յանձինս Տ. Նորայր և Տ. Տիրան աբեղաններու։ Երկուքն ալ ստորագրած են կրօնական յօդուածներ։ Տիրան Վ. Ր. (այժմ Արքեպս.), Սիոնի 1931-1935 տարիներուն մէջ ունի 15 զրութիւններ, կրօնական տարողութեամբ։ (Անկէ վերջ արդէն մեկնած է արտասահման, հովուական և առաջնորդական պաշտօններով)։

1931 տարուան մէջ Ընծայարանի երկրորդ հունձքէն (ձեռնազրուած 1930ին) մէկական կրօնական զրութիւններ ունին հետեւեալները, յօդուածներու զրութեան կարգով։ Զգօն Վ. Ր., որ գրեթէ միակն է որ կը շարունակէ պարբերաբար երեւնալ Սիոնի նաև յաջորդ թիւերուն մէջ։ Հայկազուն Վ. Ր.

(այժմ Եպս.), Նաւարք Վ. Րդ. (այժմ Եպս., Դամասկոս), որ կրօնքի իմաստասիրութեան մասին երկայնքեւ յօդուածաշարք մըն ալ ունի, Պարզեւ Վ. Րդ. (ապա Եպս. և վախճանեալ անցեալ Հոկտեմբերին), որ կը վերերեւի կրօնական յօդուածներով 1953-55 տարիներուն մէջ. Սերովիք Վ. Րդ. (այժմ Եպս., Փարիզ), որ կը վերերեւի 1940-48 տարիներու մէջ, եւ Սիոն Վ. Րդ. (այժմ Արքեպս., Պուէնս Այրէս):

1933-1936 տարիներուն կը հրատարակուի Աթուուսի կեանքը և ուսուցումը ըստ համատեսական Աւետարաններու 37 կտորներէ բաղկացեալ շատ շահեկան յօդուածաշարքը Ֆ. Պ. ստորագրութեամբ, և թարգմանութեամբ (թէն որևէ տեղ չէ յիշուած) թորգում պատրիարքի:

1936 տարուընէ սկսեալ կրօնական յօդուածներով կ'երեին Գ. դասարանէն (ձեռնադրուած 1932ին) Եղիշէ Վ. Րդ., Հայրիկ Վ. Րդ. և Տիրայր Վ. Րդ. (իրենց միւս ընկերը, Ասողիկ Վ. Րդ. մեկնած է Զինաստան և զրադած է Աւետարանը քարոզելով, քան քարոզ զրելով), Ասոնցմէ առաջինը 1939էն սկսեալ մինչև 1955 գրեթէ անխափան մէկ կամ աւելի կրօնական յօդուածներ ունի Սիոնի ամէն թիւի մէջ

Գ. դասարանէն (ձեռն. 1934ին) Պատկ Վ. Րդ. (այժմ Եպս., Լոնտոն) կրօնական յօդուած ունի 1941 և 1946 տարիներուն:

1938ին կրօնական գրութիւններով հրապարակ կ'իջնեն ե. գասարանի ընծայեալները (ձեռնադրուած 1935ին) Ենորիմ Վ. Րդ. (այժմ Եպս.) որ մինչև 1940 (երբ մեկնած է Ս. Աթոռէն կըթական և հովուական գործով) մէն մի տարուան մէջ ունի երեքական կրօնական յօդուած: Արքուն Վ. Րդ. (ապա կարգաթող) ունի իր աւարտաճառէն (Բ. Կորնթ. Թուլթ) մասեր:

(Զ. դասարանէն, ձեռնադրուած 1936ին և է. դասարանէն, ձեռնադրուած 1938ին, կրօնական յօդուած զրողներ չունինք):

Ը. դասարանէն (ձեռնադրուած 1939ին) Թորգում Աբդ. Մանուկեան հաւատարմօրէն կրօնական գրութիւններ ունի 1940-1945 տարիներու մէջ (անկէ վերջ հովուական գործով մեկնած է Ամերիկա): Նոյն դասարանէն Բարզէն Վ. Րդ. Ապահեան երկու կտորներ ունի 1942ի և 1948ի թիւերուն մէջ:

Թ. դասարանէն (ձեռնադրուած 1941ին) Խամակ Վ. Րդ. (այժմ Աթէնք) ունի կրօնա-

կան գրութիւն մը 1942ի և երեք կտորներ 1956ի թիւերուն մէջ:

Ժ. գասարանէն (ձեռնադրուած 1950ին) Դարեկին Աբդ. Դազաննեան (այժմ Մ. Վ. Րդ., Պոլիս) նոյն տարւոյն մէջ ունի յօդուածաշարք մը Ամոնգս մարգարէի մասին:

Ժ. Ա. գասարանէն (ձեռն. 1951ին) Զաւեն Աբդ. ունի կրօնական յօդուածներ 1953-1955 տարիներու մէջ:

(Ժաննագ. վարժարանէն չըջանաւարտ ցարդ վերջին դասարանէն, ձեռնադրուած 1954ին, գեռ չունինք կրօնական յօդուած):

Բացի Ա. Աթոռոյս Միաբաններէն, կրօնական յօդուածներ տուած են Սիոնին, Արևաւազդ Արքեպս. Սիւրմէեան (վախճանեալ), Ներակա Քի. Թափուզնեան (վախճանեալ), Հայկազուն Քի. Ասկերիչեան (Աղեքսանդրիա), Գրիգոր Մրկ. Գալուստեան (Նիւեռք) և Գրիգոր Սարաֆեան (Ֆրէզնօ):

Աւրեմն երեսնեակ մը յօդուածագրեր Սիոնի երեսուն տարիներու ընթացքին բերած են իրենց կրօնական նպաստը Ս. Աթոռոյս պաշտօնաթերթին:

Նիիթը. — Կրօնական այս գրութեանց մէջ շօշափուած գաղափարները և մասձումները այնքան այլազան են որքան կրօնական նիւթը ինքնին կրնայ ըլլալ:

Առհասարակ Աւետարանական բնաբաններու վրայ բանուած ընդլայնումներ են անոնք: Երբեմն Աւետարանի էջերէն վերցըւած թթիւմորներ կը հաջմակեն գրողին խոր կամ ծանծաղ մտածումի զանգուածը: Ուրիշ պարագաներուն Աւետարանի սիմէնթթը և ազգային կեանքի աւազը իրարու միանալով կը կազմեն փափաքելի շաղախը ծրագրուած կառուցումներու համար:

Բաւական միծ թիւ կը կազմեն այն յօդուածները որոնք գրուած են ազգային եկեղեցական տօներու առթիւ. (Վարդանանք, Թարգմանիչք, Ան.): Ասոնք գրուած են առաւելաբար անոնց գործը և ողին մեծարելու մտահոգութեամբ քան զանոնք կենդանագրելու և մեզի կրկին խօսեցնելու նպատակով: Այս տեսակէտէն աւելի բախտաւոր են «Աւագ Տօներու սուրբերը՝ որոնց գէմքերը առաւել յստակութեամբ կը վերաբակառուցուին, համաձայն հեղինակներու վրձինին և իրենց երանգապնակին մէջ ունեցած գոյներուն:

Այսպէս ըստնք զուտ հոգեւոր նիւթեր, այսինքն մեղք, ապաշխարանք, աղօթք, հոգիի կեանք, ևայլն, ըստ բաւականին լայն տոկ գրաւած են Սիոնի բոլոր տարիներուն մէջ. բայց անոնց մերձեցումը, կարեոր և յարգելի բացառութիւններով, առասարակ եղած են կրօնա-բարոյական և քարոզխօսական սովորական մեթոսներով քան ուժական մերձեցումներով:

Կան ուսումնասիրական գրութիւններ Աստուածառունչի զանազան գրեթերու մասին. օրինակ, Ա. և Բ. Կորնթացւոց Թուղթերու, Յակոբու Ընդհանրական Թուղթի, Եսայիայ մարգարէութեան, Գործք Առաքելոցի և այլ գիրքերու մասին: Ասոնցմէ որմանք ըստ բաւականին մշակուած և լաւ համադրուած աշխատութիւններ են, իսկ ուրիշներու վրայ զգալի է թարմօրէն թարգմանուած ըլլալու իրողութիւնը: Ա. Խորհուրդներու մասին կան գրութիւններ, սակայն ոչ ակնկալուած յաճախութեամբ:

Գրութիւններ կան Տանաբանիայի, Հայր մերի և լինանեկան առաքինութեանց մասին:

Կան նաև մեր ժամերգութեանց վերաբերեալ վերլուծական քանի մը գրութիւններ, որոնք թարմութեան և ինքնատպութեան բոյր մը ունին իրենց վրայ. գժրախտաբար սակայն, բացուած այս սքանչելի ճամբան աւելի յաճախ չէ ոտնակոնուած:

Դաւանաբանական յօդուածներ շատ չկան. եղած քանի մը հատն ալ ելած են Տիրան Վ. բ. ի. գրչէն, որոնք իրենց վրայ կը ցոլացնեն որոշ ուժականութիւն մը, և խիզախ մերձեցումներ են անճառելի կարգ մը խորհուրդներու:

Տաղաւար Տօնիերու առթիւ գրուած, բայց տօնական մտահոգութիւններէ չեշտօրէն չեղած գրութիւններ են Շ. Ռ. Պէրպէրեանի ցիրուցան տրամախօսութիւնները՝ որոնք տօնին խորհուրդը իրենց իրբու լժակ գործածելով, բարոյագէս բարձր գեղագիտական և իմաստասիրական հարցեր շարժման մէջ կը դնեն և մեզի կը բերեն նոր և գրաւիչ տարագներով:

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Նորութեանց սիրահար գարաշըանի մը մէջ կ'ապրինք. ասսիկա շեշտուած ձեռվ կ'երեխ ոչ միայն կառնանց հագուածքի և արդուզարդի մէջ, այլ

նաև գիտութեանց և արուեստներու բոլոր մարգերուն մէջ: Մեծ է այն հեղինակը, զիտնականը կամ արուեստագէտը որ «նոր տկօս» մը կը բանայ իր մասնագիտութեան մէջ: Կրօնքը բացառութիւն պիտի չկազմեր այս ընդհանուր երեսոյթէն: Կրօնքի մէջ ալ այսօր կը փնտութիւնները՝ «որոնք համապատասխան ըլլան ամեր ներկայ ժամանակներու ոգիին, մտածելու եղանակին և ճաշակներուն»: — Խորքին մէջ ընտական և օգտակար ձգտում մը և յառաջգիւմելու գլխաւոր ազգակ մըն է նորութեան պահանջքը և հետապնդումը: Թաչուններ միայն կը բաւականանան, իւրաքանչիւրը իր տեսակին համաձայն, միշտ միեւնոյն ձեր բոյն չինելով: Մեծուն է որ երբեք չի չեղիր երկրաչափական նոյն կաղապարի վրայ պատրաստելի իր մեղքամոմը և անոր մէջ լեցնելէ առաւել կամ նուազ նոյն համով մեղքը: Ասոնք նորութիւններու հետամուտ չեն, և հետեւարար զուրկ կը մնան քաղաքակրթութիւն կոչուած անէծքէն կամ օրհնութենէն:

Քրիստոնէական կրօնքը իր ծագման մէջ և ծաւալման ընթացքին մեծագոյն նորութիւնն էր կրօնական աշխարհի մէջ: Նորութիւնն էր իր հիմնադիրը — Աստուած մարգացած: Նորութիւնն էր «փրկութիւն» եզրին — որ բանալի բառ է բոլոր կրօնքներու մէջ — մէջ քրիստոնէութեան լեցուցած իմաստը: Նորութիւնն էր «հաւատք», չնորհք և սէր» բառերուն վրայ զրուած շեշտը: Այս նորութեանց հետեւանքով նորութիւնն էր «կեանքը» որ անոր հետեւողները կ'ապրինն: Այս իսկ պատճառով, այսինքն իրբեկ ապրելու նորութիւն ուշադրութիւն գրաւեց: Նորութեան մը հարազատութիւնը փաստող երեսոյթը այս է — ուշադրութիւն գրաւել: Մարգիկ անտարբեր չեն կրնար ըլլալ անոր նկատմամբ. կամ պէտք է հաւենին, կամ մերժեն: Ասով բացատրելի է առաջին երեք դարերուն քրիստոնէական կրօնքի շարքերը խտացնող մեծ բազմութիւններու յարումը անոր առանց որևէ բանութեան, և այն ուժեղ և բիբու հալածանքը՝ որուն նշաւակ եղաւ ան աւելի քան 300 տարիներ:

Քրիստոնէական կրօնքը Աստուծոյ վերջնական յայտնութիւնն է մարգկութեան. հետեւարար անոր մէջ այլ և նորութեան

տեղ չկայ. ինչ որ անհրաժեշտ էր մարդկանց թեան վրա անդեմ գութեան գրական և կատարելութեան համար ամբողջապէս յայտնուած էն. այսուհետեւ մեր կրօնքը երբեք չէ գաղրած ինքինքը նորոգելէ: Մեզքնական և աճման շրջանին մանաւանդ անիկա գժուար ճանաչելի ըլլալու աստիճան նորոգումի ենթարկուեցաւ. իրականին մէջ սակայն այդ բոլորը նորութիւններ չէին, այլ կատարելագործումներ, նման մանկան մը. որ ինքզինքին հետ նոյն մեալով հանդերձ, կ'աճի և կը կերպարանափոխուի տարիներու ընթացքին: Ինչ որ նորութիւն կը թուի իր վրայ անոնք իր մէջն էին, իր բնութեան մասն էին՝ որոնք տարիներու ընթացքին և պարագաներու բերումով տակաւ առ տակաւ արտաքնացան: Այնպէս որ Ե. գարուն գրեթէ վերջնականօրէն կաղապարուած էր Քրիստոնէական Եկեղեցին: Յատակուած և բանաձեռուած էին իր գաւանութիւնը, Աստուծոյ մասին, Քրիստոսի բնութեան մասին, Ա. Հոգիի գործունէութեան շուրջ: Եկեղեցւոյ Ա. Խորհուրդները գրեթէ բիւրեղացած էին: Նուիրապետութիւնը և եկեղեցական կարգը հաստատ կերպարանք առած էին: Կանոնները ճշգուած էին:

Ասով մէկանգ սակայն եկեղեցին ըլլալով կենդանի գործարանաւորութիւն մը երբեք չէ գաղրած նորոգուելէ, նման գարաւոր ձիթենիլ մը որ առած ըլլալով իր վերջնական ձեւ կը մեայ սակայն մշտագալար և կենսունակ: Տարուէ տարի նոր տերեներ կը ծնին և հիները կը թափին և ինք կը շարունակէ իր պատուլը: Տարուէ տարի նոր տերեներ կը ծնին և հիները կը թափին և ինք կը շարունակէ իր պատուլը:

Նորութիւնը որ ասկէ վերջ պիտի պահանջուի Եկեղեցիէն և մեր սուրբ կրօնքէն պիտի ըլլայ շեօք, ունչը և քափը որ կը գրուի կենաց Բանին քարոզութեան մէջ: Մօտեցումը և ներկայացման եղանակը քրիստոնէական ճշմարտութեանց: Դարերով երբեմն կղպւած հոգեսոր գանձարաններ պիտի բացուին և մէջը պահուած անսպառ գանձը պիտի բաշխուի ամենքին: Դարերու ժանդէն աղօտացած գեղեցկութիւններ պիտի փայլեցուին և պիտի գրուին հաւատացեալին առջև ի հոգեսոր վայելումն անոր: Դարերու փաշին պիտի առնուի սուրբերու գէմքերուն և կեանքերուն վրայէն և անոնք պիտի ներկայացուին իրենց առողջ և առոյդ գոյներով: Տարունակ մէկ կողմէն գիտուած

ճշմարտութիւններ պիտի գարձուին երբեմն որ անոր անտես մեացած կողմին գեղեցկութեան ալ հաղորդ ըլլանք:

Սիոն որչափո՞վ յաջողած է նման նորութիւններ բերել: Այս հարցումին սպառուած պատասխան մը տալու համար հարկ էր հանգամանօրէն աչքէ անցնել Սիոնի աւելի քան 600 կրօնական յօդուածները: Մէկ իրողութիւն անվարան կարելի է հաստատել. — եղած է անկեղծ ճիզզը ժամանակի բանաւոր, իմացական պահանջքներու համաձայն ընդլայնելու, բաղադրելու և վերլուծելու այնպիսի սկզբունքները որոնք ներքին սերտ կապ ունին հայ ժողովուրդի կեանքին և կենցազին հետ:

Բարգէն Եպոսի «Դասերը» տաքուկ և սնուցիչ կերպակուր է բոլոր անոնց՝ որոնք անօթի են քրիստոնէական կեանքի և Աւետարանի սնունդին: Այս մասին ամբողջ ըսուածները կրնան խտացուիլ հետեւալ պարզ տողերուն մէջ. «Մատածէ», սիրելի ընթերցող, որ տասապել չէ Աւետարանը: Եկարագիրն է ան Աւելի Կեանեին, գասն է ան Կատարեալ Կեանեին, և գուն կրնասիւրացնել այդ կեանքը՝ նմանելով Քրիստոսի և շինելու բուն արժէքը կեանքիդ:

Թորգում Պատրիարքի կրօնա-բարոյական սիոնկումները քրիստոնէական ճշմարտութեանց մասին՝ կարծես գրուած են առաւելաբար ըմբռնելի և ըմբռշխնելի ըլլալու համար մշակուած միտքերէ՝ որոնք կը պահեն տակաւին սիմաստութիւնը յարգանք և յարում տածելու սմարդկային զգացումներէն ամենէն նուիրականին, կրօնականի հրամայականին և կատամամբ: — Իր «Կիրակնօրեայ Խոկումները» կրնան համագրուիլ, իբրև ձեւ և իբրև խորք, հետեւեալ մէկ նախադասութիւն-պարբերութեան մէջ. «Որքան աւելի ուշիւ և երկիւղածութեամբ քննենք Երիսոնէակալան կեանեին խորիւրդը, այնքան աւելի խորապէս պիտի համոզուինք արդարէ թէ Աւետարանով կատարուած յայտնութիւնը ճշմարիտ օրհնութիւն մը եղած է մարդուն համար, նախ և գերազանցապէս հոգեսոր տեսակէտով, որ, անստարակոյս, ատով իսկ կ'ըլլայ աւելի թանկապին, և յետոյ կեանքի ընկերային և բարոյական ոլորտներու մէջ հետզհետէ աւելի ընդարձակորէն երեան եկած այն արդիւնքներով, որոնք անով պատգամուած

կրօնքին գործն են կատարելապէս» (Սիոն, 1928, էջ 10):

Հեռող եպս. Դուրեանի «Պարզ Քարոզները ամենօրեայ հացն է զոր անօթի անձը անձանձրոյթ պէտք է գտնէ իր ճոխ կամ աղքատիկ սեղանին վրայ:

Նկատելի նորութիւն կարելի է համարել Տիրան Վերդի կարգ մը աստուածաբանական հարցերուն, օրինակ Յայտնութեան և Յարութեան բերած իր բացառական նպաստը: Երբ իր մտքի զօրաւոր հեռազիւտակով, միգամածի վերածուած այս խորհութեան բարդութերը որոշ կերպարանք կը ստանան, պահպանողական մտքեր այն պատրանքը կ'ունենան, թէ տրուած պատկերը տարբեր էր Եկեղեցին ընդունած աւանդական դաւանաբանական տեսութիւններէն: Սակայն ըմբռնուած ընթերցում մը — դժբախտաբար քիչերու մատչելի — պիտի փարատեն նման պատրանքներ: Իր նպատակն է եղած ուչ թէ դաւանանք բանաձեւել, այլ արդէն եղածին խմաստին թափանցելու համար բացատրութիւն տալ» (Սիոն 1935, էջ 221): — Ահաւասիկ նմոյշ մը իր «Բացատրութիւններէն. և Աստուածայայտնութեան ակըր, խտացումը, մանրանկարը, երիտոն է Համագոյքի լինելութեան պատմութեան՝ ի յաւիտենից ի յաւիտեանս երկարոց: Նոր Մարդուն ստեղծագործութեն է այն անհունին սեղմումովը՝ հունաւորին մէջ: Տիեզերքի ճակատագրին մէջ՝ մարդուն քալել անցնելու համար սահմանուած ճանապարհին անհուն երկայնքն է որ տեսարան կը բերէ մարդեղութիւնը, իր սկզբով, մէջտեղով ու վախճանով» (Սիոն, 1935, էջ 9):

Հոգեւորական կեաներ առհասարակ կը նկատուի մեր մէջ վերացական գաղափար մը, կամ առ առաւելն կրօնական տարագ մը զոր պէտք է գործածեն քարոզիչներ՝ սովորական ապրուած կեանքէն տարբեր կենցաղ մը ըսել ուղելու համար: Արեւելահայեր զայն կը չփոթեն մտքի մշակութային գործութիւններութեան հետ: Սակայն խորքին մէջ զերբնական կեանքը այնքան իրական է որքան բնականը: Ն. Արեւայի հայացումները փորձեր են այդ կեանքին էութիւնը, զօրութիւնը և գործելու պայմանները բացատրելու համար: Ստեղծումներ չեն այս գրութիւնները, այլ ջրաբաշխական մեթոդներով ուրիշ ջրամբարներէ կենդանի

ջուր բերել մեր երբեմն չորսալու վատանգին ենթակայ հոգեսոր աւագաններուն: Ահա նմոյշ մը ահոգեսոր զօրութեան սահմանումի մասին: «Հոգեսոր զօրութիւնը այն կարողութիւնն է որով մարդ կրնայ զործնականութեան և իրապէս աստուածապաշտ ըլլալ, վարելով երկիւղած և առաքինի կեանք որով արգիւնաւոր և տեական ծառայութիւն մատուցանել ընկերութեան: Այս զօրութեան ազգիւրը մենք մէջ չունինք: Անիկան աստուածային ոյժ մըն է որ կը գտնուի Քրիստոսի մէջ, և հո՛ն է բոլոր իր Մարմինին — Եկեղեցիին — անզամներուն համար . . . և չենք կրնար ստանալ զայն առանց կենսական միութիւն մը ստեղծելու Քրիստոսի հետ: Այս ոյժին ստացումը չի նմանիր մոմէ մը ուրիշ մոմ վասելու: Այսպիսի պարագային նոր վասուած մոմը իրին յատուկ առանձին բոցն ունի և կը վասի առանց նախոկին մոմէն կախում ունենալու: Հոգեսոր զօրութիւնը չի հաղորդուիր մարդկային հոգիին այս եղանակով, այլ մշտական և տեական միութիւն մը հաստատելով հոգեսոր կեանքի կերպունական ազգիւրին, Քրիստոսի հետ» (Սիոն 1940, էջ 52):

Թորգոմ Արեւայ, մեր շարականներու և ժամերգութեանց գրական վերլուծութեամբ, գիտակից ընթերցողին վրայ կը թողու սքանչելի հանք մը զտած ըլլալու տպաւորութիւնը, ուրիշ ոչ միայն կարելի է հանել քարիւղ և քարածուխ մեր հոգիները ջերմացնելու համար խաղաղութեան և երջանկութեան կրակով, այլ նաև կարելի է զարնել սոկիի երակներուն և հանդիպիլ թանկագին քարերու բիւրեղացումներուն, որոնք պիտի հարստացնեն մեր հոգիի գանձարանը: Գրեթէ կոյս և ընդարձակ գետին մըն է սա որուն մէջ եթէ ուրիշներ ալ գործեն կրնան երեան հանել ուրանիումի նման անգին հանքեր: Ահա թէ ինչ կ'ըսէ այդ մասին թորգոմ Արեւան: Ներք փարձուինք քիչ մը աւելի նիւթացնել «կրօնական բանասեղծութիւն, գրականուրիւն» յլացքներուն մէջ աւանդօրէն մեզի եկած զգացումներն ու մտածումները, կը զարմանանք այն տարօրինակ խորութեան, այն խոկապէս անպարազիլի ընդարձակութեան, որոնք այդ երգերէն ումանց մէջ, ծրաբուեր հասեր են մեզի, և որոնք երբ կը բացուեն

մեզի, կը ներկայացնեն անակնկալ գեղեց-
կութիւններ» (Սին 1940, էջ 177):

Ասոնք լոկ քանի մը նմոյշներ էին ը-
սելու համար որ հոգեոր սնունդի ամենօր-
եայ հացի կողքին, որ «հաստատէ զսիրտ
մարդոյ», կան նաև այնպիսի զրութիւններ
որոնք կը կազմեն օիւզը և գինին» որոնք
հոգին կը զուարթացնեն և կ'ուրախացնեն:
Այս զրութիւնները աշխարհիկ հասկացողու-
թեամբ «նորութիւններ» ըլլալով հանդերձ
երբեք շեղումներ չեն, այլ նպաստներ Ա-
ւետարանի և Եկեղեցւոյ ուսուցմանց լա-
ւագոյն հասկացողութեան համար:

Ո՞րքան ծառայած է Սինի իր յառա-
ջազբած կրօնական նպատակներուն: Այս
հարցին պատասխանը պիտի տային ընթեր-
ցողները, որոնցմէ ոմանք, աւաշ, ոչ ևս
են, անդարձ մեկնած ըլլալով անցնող 30
տարիներու ընթացքին: Օրհնեալ ըլլալ: ա-
նոնց յիշատակը: Մենք վստահ ենք, որ
եթէ հրաշքով մը իրենց տրուած ըլլալը
պատհութիւնը վերապրելու այս կեանքը,
աւելի ժամանակ պիտի յատկացնէին հոգե-
ւոր կեանքի մշակման՝ որուն միջոցներէն
մէկն է Սինը: Եթէ սա պահուս հարաւոր
չէ ունինալ հաւասարութեան Սինի կրօնա-
կան մարզի մէջ ունիցած օգտակարութեան
մասին անոր հին և նոր ընթերցողներէն,
գէթ պիտի յիշէի վկայութիւնը տղեկի մը՝
որ երուսաղէմ եկած էր Սինի ծննդեան
տարին (1927) և եղած անոր կանոնաւոր
ընթերցողներէն մէկը և ապատաշխատաւորը:
Իր կրօնական գտատիարակութեան և կազ-
մաւորութեան մէջ կարև որ բաժին ունիցած
է Սինը, յատկապէս սկզբնական ըրջանին:

Կը փափաքինք փակել մեր այս հեռա-
հայեաց ակնարկը՝ նետուած Սինի 30 տա-
րիներու կրօնական սպասարկութեան վրայ,
իր իսկ էջերէն մէջբերութեան ընկելով:
«Սին աշխատեցաւ հասկնել իր ընթեր-
ցողներուն թէ հայ ժողովուրդը չի կրնար
անկրօն և անաստուած ըլլալ»: Արօգնեան
իր էութեան արմատները թալուած են
կրօնքի մէջ: Ամբողջ իր պատմութիւնը,
մանաւանդ իր մշակոյթը և նկարագիրը կը
կրեն զօրաւոր կնիքը քրիստոնէական կրօն-
քին: Եթէ փորձէ զայն նետել իր վրայէն,
կարծես կը դադրի՛ ինքզինքը ըլլալէ . . .
Շարունակենք մէջբերումը:

«Աւետարանէն տրուած դասերը և եղած
խորհրդածութիւնները կը կազմին Սինի
կրօնական բաժնի գեղեցիկ էջերը, որոնք
միշտ պիտի խօսին այս սիւնակներէն»:
Արօգնեան պիտի ըլլայ հնարաւորութիւնը
որևէ ժամանակ բանալու անոր էջերը,
պահուած հատորներէն, և կրկին վերծա-
նելու զանոնք՝ նման Աւետարանի խմաս-
տուն մարզուն որ «հանձէ ի զանձէ իւրմէ
զնոր և զին»:

«Հայ ժողովուրդը պէտք ունի ներքին
խաղաղութեան, ամրապինդ սիրոյ, համե-
րաշխ զործակցութեան: Աւետարանի սկզբ-
ունքներով և անոր բարձր բարոյականով
ապրած, պահուած ժողովուրդ մը, պէտք
է հաւատարիմ մնայ Աւետարանին, և անոր
ներշնչումներով մաքրագործէ այն ապակա-
նութիւնները, որոնք ներմուծուած են իր
մէջ: Վասնզի պատմութիւնը մեզի կը սոր-
վեցնէ որ հայ ժողովուրդը հա՛յ է իր կրօն-
քով, իր ազգային աւանդութիւններով, իր
մայրենի լեզուով և իր Մայրենի Եկեղեցիով՝
որ զանձարանն ու պահապանը եղած է այս
բոլորին» (Սին 1930, էջ 370):

Ու որչափ պատշաճ և գեղեցիկ կը
հնչին մարզարէին խօսքերը այս կապակ-
ցութեամբ. «Ել ի վերայ լերինդ բարձու,
աւետարանիչդ Սինի. բարձրացո զօրու-
թեամբ զբարբառ քո, աւետարանիչդ Երու-
սաղէմի, բարձրացո՛ և մի՛ երկնչիր. ասա
ցքաղաքող Յուղայ. Ահաւասիկ Աստուած
ձեր . . .» (Ես. Խ. 9):

Արդարե քաղցր է գերը աւետարանչի,
որ լսելի կ'ընէ խաղաղութեան, բարու-
թեան, զօրութեան և փրկութեան ձայնը:
Սին, հնարաւորութեան իրեն ընծայած
չափով, իր մէջ հիւրընկալած կրօնական
յօդուածներով, այդ գերին լծուած եղաւ
անցնող 30 տարիներու ընթացքին: Պիտի
շարունակէ ան նոյն դերը, իւրովսանն,
գալիք նոր տարիներուն:

Այս յայով և այս հեռանկարով կրկին
ձեռք կ'առնէ ան իր լոյսէ ճամբան:

ՃՆԱՐՃՅ ԵՊԻՍԿՈՊՈՅ

Գնցնող առւոյն Յունիսին, Գահիրելի մէջ մեռաւ բանառեղծ, երապարակազիւր, ուսուցիչ և գրող Արքուն Տառենան:

Ենած էր 1909ին: Կախակրուքիւնը ստանուով Գահիրելի Ազգ. Գայլուստեան վարժարանին մէջ, առաւենակած էր իւ ստումբ Պալապրի (Յարանս) եւկրազութական բարձրագոյն վարժարանին մէջ ուր պատրաստ էր ուրիշ մասնացէս-նոդանես և պահանջ զիսուրեանց տիպուներով:

Գահիրելի մէջ պատրաստավառ է հայ և օստար վարժարաններու մէջ և պարզեւարուած ուրիշ օժիտի ս'անակի օգնուանով:

Հիմնադիրն էր «Զանալիյ» գրական-ընկերույթն ըերբին: Եր զեղեցիկ լեզուն, ոճը, մատուցական մարզական պարկից կիցաւածեր և հայ արժէններու ինչպէս նուու Հայց. Սկիզբեցւոյ հանդէպ իւ խորուելի սէր սիրուած զրի մը դարձուցած էին զիներ:

Աւելի բազմարի երապարակազրական էջեր, որոնք իրենց ուսինով, բարձուրեամբ և մասնաւու պահուարքամբ յատկանական տեղ մը ապահոված են իրեն մեր մատանակակից գրականութեան մէջ: Եր մասնով բաց մը կը բողու:

Խմբ.

Ն Ա Ր Ե Կ

Թորգոն Արքեպո. Գուշակեանին

Ո.մէն զիւեր դողալով, ես դողալով կը բանամ
Լուսացնցուղ զիրքըն այս շարականի մը հանգոյն...
Մուներու պէս կը վառին բառերը խորն իմ հոգւոյն.
Ու կը շնչեմ ումայ առ ումայ Սուրբին հոգին խնկանամ...:

Ա.մէն զիւեր ես կ'իջնեմ այս ծովուն մէջ ալեկոծ
Առազասի մը նըման ... կ'երբամ նեռո՛ւ, շատ նեռու,
Ալիբներուն համբոյրով իմ խեղն հոգիս լուալու.
Ա՛ն, վերադարձն, Ասուած իմ, զրկած նոր յոյս մ'ոսկեզօծ ...:

Խաչի մը պէս կը դողայ լամբարին-լոյսն իմ բարի.
Ծառէս ծաղիկ առ ծաղիկ աղօքքը դեռ կը բափի.
Մինչ կը լեցուին աչերն իմ արցուններով արծարի ...

Զայն կը փակեմ: Լոյսերու նեղեղ մը զիս կ'ողողէ.
Իմ խորհուրդէս ըսպիտակ շատրուաններ կը ժայթին.
Աղաւնիներ մի առ մի կ'իջնան սրիս տանիին ...

Ա Ն Ց Ա Գ . . .

Ո. Ծագա՞ր, անցա՞ր իմ քովէս կապոյս երգի մը նըման,

Ես դողլացի ու կեցայ . . .

Մերկ ոժերուդ հետերուն վրայ լոյսեր բացուեցան՝

Զերք ծաղիկներ արձաբեայ . . .

Երկա՞ր, խորոննել ակօսներչիմ սրտին մէջ ձգեցին

Զոյզ արօսներն աշխերուդ . . .

Պիտի ծաղկի*, Ս. Ասուած իմ, ծիլ մը պզտիկ ու մեկին

Անապատին մէջ այս մուք . . .

Քանիդակեցի զիծ առ զիծ ես ըզբեզ մէջն իմ հոգւոյն,

Արձանի պէս մարմարեայ,

Արակէսզի դուն չըմեռնող երազն ըլլաս մաքրազոյն՝

Իմ օրերուս ապագայ . . .

... Ըսէ՛, Տարի՞ր աշխիդմէջ ֆիչ մը մոխիր ինձմէ դուն,

Ար զերք մացառ մ'այրեցայ . . .

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

ԵՐԵԿՈՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏՈՒՄ

Հաւաքեց արեւն երանգակալի գոյները մաս - մաս,

Մանիշակագոյն երանգը թողեց հայոց լեռներին,

Մասիսին տուեց իր բոլոր ոսկի բոյլերը երազ,

Որ փայլատակի ծարաւ սրտիս դէմ՝ իր հեռուներից :

Յետոյ խըտացրեցէ կապոյտ երանգը՝ զով ու տրտմաշուրք՝

Ու թուաց կապոյտ այս խաղաղութեան թաւիշն է եղել,

Թուաց աշխարհն իմ չի սուզուել երբեք արեան մշուշում,

Չի եղել ասես այստեղ կմտորած եւ ոչ էլ եղեռնի:

Ցնդեցին ոսկի խաղերը վերջին այգու ծառերից,

Վազը խաղողի սուզուեց կապոյտի փափուկ ծալբերում,

Այգու դռները բացուել են ասես այդ կապոյտ լոյսից,

Չկայ ցանկապատ ու չկայ սահման իմ հայրենիքում:

Թուում է աշխարհն իմ հայրենական այգի է եղել,

Ու նրա կապոյտ աստղէ երազն է մինչ լոյս դեգերել . . .

ԱՐԺԱԼՈՅԱ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ա. Դ. Ա. Զ Ա. Ն Ք

Տուր ինձ՝ անկիւն մը բու հողէն,
Իմ սրբազն հայրենիք,
Ուր իմ սիրտէն ծըլի ծաղիկ,
Հայ աղջիկներ զայն բաղեն:

Ու մասնակցիմ կեանիդ եռուն,
Գոնէ ծաղկի մը բոյրով,
Չանկանամ, հոգիս խըռով,
Օտարութեան մէջ նեռուն:

Ք Ա. Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Բառ մըն ես գուն այս Մեծ Գիրքին՝ թերեւըս կէտ մը միայն,
Նետ մը թերեւս բառի մ'վերեւ, նըշան մը հարցական,
Անունն ինչ փոյք նեղինակին, կամ խկութիւնը անոր,
Դիսցիր սակայն թ'առանց նեզի թերի է զիրքն անպայման:

Անցնիլ այսպէս կեանին մէջէն, իբրեւ նամբորդ մը ծարաւ,
Սիրտըդ, ինչպէս պարապ սափոր նետրդ տանիլ ամեն տեղ,
Ու երազել կարօսազին ակն աղբիւրի մը բիւրեղ,
Լըսել նոյնիսկ ձայնը ջուրին, բայց չըզըսնել զայն բընաւ:

Մ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ս Ն



Զ Գ Ա Յ Ն Ա Ր Ե Ց Ե Խ Ա

Գարունին պէս որ մեղմիւ կը յաջորդէ ձըմեռուան
 Կը սողոսկի ինէ ներս ըող մը յուժէդ զողունի
 Ու կը բռնեմ զայն նեշիւ, կրծիկ մ'ամբողջ բակելու.
 Չմեռը ցուրտ տրտութեանս կը փոխուի նեշ զարունի . . . :

×

Կ'զգամ կազդոյր ու բերկրանի, երբ արեւին պէս զարնան
 Կը փաքքուի էութեանս կեանի պատառն այդ անցեալ
 Ու կ'ողողէ նեշաննով զորէ, անժպիտ այս ներկան
 Կ'ըլլայ խայտանի ու բրիու ու խենթ պատրանի ծովացեալ . . . :

×

Տղու մը պէս որ կ'ուզէ դաւանկար մը ամբողջ
 Պարագրկել լոկ աչքով, տանելու զայն միւս իր նես,
 Ես կը գրկեմ միամիտ, բաղցր տեսլիքն այս բողբոշ
 Պահ մը արբետ զարնայնի միջոցին մէջ լուսաւէս :


×

Սւազին պէս ծովափի, արդ կը հոսի մատներէս
 Ռոկեֆուչին օրերու, մայրամուտին նման պերն
 Գիտեմ կ'անցնի պատկերն այս բոլոր պատրաններուն պէս
 Ու կը մնայ լոկ մրուր, ցուրտն ու բախիծը կեղերչ . . . :

×

Համատարած ձմերան մէջ, մոռցուած որ զարունի . . . :

ԶԱՒԵՆ Վ. 2.



169-58



ԲԱՆԱՐԱՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ ՎԵՐՍՎՐՈՒՄԸ ԽՐԱՏ ՄԸ



երջերս լոյս տեսաւ, Հ. Պօղոս Անանեանի խնամով, խրատներու փոքր հաւաքածոյ մը, որոնք հրատարակիչը Վարդան Այգեկցիի կը զերսպրէ (Վարդանայ Վարդապետի Այգեկցւոյ Խրատ; Վենետիկ, 1956). Այս ինը խրատներէն միայն առաջինին խորագիրը Վարդանի անունին Այգեկցի մակդիրը կ'աւելցնէ (տես Յառաջարան, էջ 15), հետեւալ վեցը Վարդան Վարդապետի մը անունը կը կրեն, իսկ վերջին երկու քը առանց հեղինակի անուան են: Խրատները առնուած են Ս. Ղազարի մատենագարանի երկու ձեռագիրներէ՝ Ե և Զ խրատները թիւ 257 (986) Ասկեփորիկէն, իսկ մրւոները թիւ 240 (57) Ասկեփորիկէն: Յառաջարանին մէջ հրատարակիչը նշանակած է միւս ձեռագիրները որոնց մէջ նոյն խրատները զամած է՝ Լազարեան ճեմարանի թիւ 1192 ձեռագրին մէջ կան Գ, Ե և Լ խրատները, Պետինի մատենագարանի թիւ 88 ճեռագրին մէջ Ա խրատը, իսկ մեացածներուն համար ուրիշ օրինակ չէ գտած:

Այսքան քիչ օրինակներ գտնուելու պատճառը թերես այն է որ խրատներէն ուժանք հարազատ չեն, կամ երբեմն տարբեր հեղինակներու անունները կը գրեն: Երբ այդ կարելի է օրինակ տալ Գ խրատը՝ «Երաս հոգեվարաց աւուրն յորժամ բակի ատուածաւէն տանարն հոգոյն՝ որ է մարմինն, եւ բաժանին ի միմեանց: «Արդ պարտ է ամենայն մարդոյ զայս զմտաւ ածել» են. (էջ 40-48): Միւնայն սկզբնաւորութեամբ ճառէ մը եօթը օրինակներ ծանօթ են ուրոնք կը կրեն հետեւալ խորագիրը՝ Մրբոյ թեփիլոսի ասացեալ յաղազ զլջման եւ արտասուաց: Այս օրինակներն են՝ Վենետիկ թիւ 247 (972) էջ 99 ա-101 ա, և 295 (320) էջ 89 ր-91 ա, Բարիզ թիւ 124, էջ 93 ր-95 ա, Վիեննա թիւ 524, էջ 104 ր,

Ավստրալա թիւ 521, էջ 194 ա⁽¹⁾, Անթիլիաս, թիւք 6, էջ 37 ր և 8 էջ 35 ա⁽²⁾: Դատելով այն օրինակներէն որոնք անձամբ տեսած եմ, այս ճառը փոքր հատուած մըն է, յար և նման Գ խրատի սկիզբի մասին՝ մինչև տող 47 (էջ 41):

Այս Գ խրատէն աւելի ընդարձակ հատուած մը կը գտնուի թէսփիլոսի վերագըրռուած ուրիշ մէկ ճառին մէջ՝ Վասն աւտասուաց եւ վասն խոսսովանութեան մեղաց: «Յորդամ միտք զրագեալ լինի հետ մեղաց» են: Այս ճառէն քսանըութը օրինակներ ծանօթ են՝ որոնցմէ մին, այն է Վենետիկ թիւ 257 (986), Վարդան Այգեկցիի խրատներուն համար զործածուած Ասկեփորիկներէն մին է՝ Զեռազիրները հետեւալներն են՝ Վենետիկ թիւ 234 (569) էջ 51 ր-54 ա, թիւ 257 (986) էջ 67 ր-71 ա, թիւ 271 (1048) էջ 216 ա-221 ր, Վիեննա թիւ 313 էջ 93 ր-96 ա, թիւ 364 էջ 150 ր-157 ա, թիւ 791 էջ 59 ա-62 ր, թիւ 867 էջ 64 ա-67 ր, Երուսալէմ թիւ 9 էջ 151 ր, թիւ 425 էջ 438 ա, նաև թիւք 642, 669, 792, 1187, 1264, 1381, 1483. Երեւան թիւ 336 էջ 218 ր, Եջմիածին թիւ 108 էջ 39 ա-44 ա, Եջմիածին, Կարինեան Յուցակ, թիւ 888 հատուած ր, թիւ 893 հատ. իե, թիւ 894 հատ. իզ, թիւ 895 հատ. ը, թիւ 923 հատ. իե. Բարիզ թիւ 127 էջ 66 ր-73 ա. Սերատուիա թիւ 205. Եսր Զաւգայ թիւ 67 էջ 48 ր. Զմիառ թիւ 78 էջ 153 ա, Պուրեան հաւաքածոյ Ա. 71, էջ 200 ա⁽³⁾:

(1) F. Maeler, Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède, Paris, 1924, էջ 194.

(2) Հ. Ա. Ակինսան. Յուցակ Հայերէն Զեռագըրռ Նիկոսիայի ի սիարոս (Հանդէս Ամսօրեայ, 1954, էջ 523 եւ 536):

(3) Գեր. Հ. Ներաւազ Ա. Ակինսանի կը պարտիմ սեղեկութիւնները գերեւ յիշուած այն ճեռագիրներուն մասին որոնց ցուցակը տակաւին չէ հրատարակուած:

Ուշադրութեան արժանի է որ այս օրինակներէն ամենէն հինը, Վիեննա թիւ 364, գրուած է 1295 թուին, այսինքն Վարդան Այցեկցիին մեռնելէն մօտաւորապէս կէս դար մը վերջը, սակայն և այնպէս խորագիրը թէոփիլոսի անունը կուտայ:

Հիմ առնելով Վիեննայի թիւ 364 և Բարիկի թիւ 127 ձեռագիրները, որոնք անձամբ տեսած եմ, կարելի է թէոփիլոսի վերագրուած այս ճառը բաղդատել Վարդան Այցեկցիի անունով հրատարակուած Գ խըրատին հետ: Թէոփիլոսի ճառը կը սկսի համառօտիւ նկարագրելով ահեղ դատաստանի օրը զոր հանապազ պարտ է ածել զմտաւ և յիշել և զարդուրիլու: Որքան որ մարդ կենդանի է պէտք է փութայ զզջալ և Աստուծոյ ողօրմութիւնը խնդրել՝ զի աստ է աթոռ շնորհաց իսկ անդ աթոռ դատաստանի: Արտասուելով և ողբալով պարտ է թողութիւն խնդրել՝ ռասա ընդ միտս քո, եկն առաւոտ և Ան: Հոս կուգայ այն հատուածը որ կը համապատասխանէ Գ խրատին սկիզբէն մինչև տող 85 (Էջ 40-42): Կան փոքր տարրերութիւններ ինչպէս սովորաբար կը պատահին նոյն ճառի մը զանազան ընդօրինակութեանց մէջ: Տեղ տեղ թէոփիլոսի ճառը քիչ մը աւելի համառօտ է: Օրինակի համար փոխանակ հրատարակութեան 48-53 տողերուն (Որդեակ, ահա զայս ամենայն . . . կարձեցուք և յաւիտենականո), Վիեննայի և Բարիկի ձեռագիրներուն մէջ կայ հետեւեալը՝ «Զայդ ամենայն առաջի աշաց պարտ է ունել և ոչ համարել թէ զընկերն մեր տեսանեմք ի կիրա յայս, այլ զանձինս մեր: Եւ մի՛ իրք անմահ վարեսցուք զկենցալս մեր»: Երբեմն ալ թէոփիլոսի ճառը քիչ մը աւելի ընդարձակ է: Օրինակի համար փոխանակ Գ խրատին հետեւեալ նախազառութեան՝ և Խոստովանութիւնն ճշմարտութեամբ զաղտեղութիւն պայծառացուցանէ իրք զոսկին (Էջ 42 տող 69-70), ճառը ունի՝ և Խոստովանութիւն է որ կարէ թեթեացուցանել զծանրութիւն մեղաց: Խոստովանութիւն է որ զզեղս մեղաց հոսէ իրք զփոշի և իրք զզեղս փչոց կայծակամքք հրօյ: Խոստովանութիւն՝ որ ուստի ելանէ զանօթս ժանատակիրս իրք զոսկի պայծառազոյն գործէ, և ուր մեայ ոչ սրբացիք:

Գ խրատին մէջ խոստովանութեան մա-

սին գրուածներէն քիչ վերջը կուգայ բաւական երկար հատուած մը խոստովանողին մասին (տողք 90-137), յետոյ խօսքը կրկին կը դառնայ խոստովանութեան: Այս հատուածը հաւանաբար վերջէն բուն ճառին աւելցուած է, որովհետեւ անկէ առաջ և վերջը կրկնութիւններ կան: Այսպէս նախ կ'ըսուի՝ «Խոստովանութիւն մեղաց սրբիչ է, խոստովանութիւն անմաքրելոց մաքրիչ է: Խոստովանութիւն՝ ահազին գեհենին փրկող, և դրան դրախտին բացող: Խոստովանութիւն՝ մուտովանութիւն՝ երկնից բացող և առ Աստուծուած մուծանող: Խոստովանութիւն՝ մոլորելոց ճանապարհ, խաւարելոց լոյս» (տողք 77-85): Նոյն գաղափարները կը կրկնուին, աւելի ընդարձակ ձևով, խոստովանողի մասին գրուածներէն վերջը: («Խոստովանութիւն՝ աղտեղութեան մեղաց սրբող, անմաքրից մաքրող, ի տանջանացն ազատող, ահաւոր գեհենին փարատող, և դրախտին դրանցն բացող: Խոստովանութիւն՝ երկնից բացող և առաջի Տեառն մուծանող, ապաշխարութիւն հաւսեալ. ի մեղաց յապաշխարութիւն հրաւիրող, մոլորելոց կոչող, ի քաղաքն երկնաւոր առաջնորդող: Խոստովանութիւնն մոլորելոց առաջնորդ, խաւարելոց լոյս. որք ի միզի իցին՝ ճառագայթ, մանկանց գաստիարակ, անյուսից օրինակ լուսոյն» (տողք 144-156):

Խոստովանողի վերաբերող մասը, և հետեւաբար խոստովանութեանց կրկնութիւնները չկան թէոփիլոսի ճառին մէջ: Բաղդատեկուզ տպագրուած ճառին՝ 77 տողէն կ'անցնինք ուղղակի տող 144ին և կը չարունակուի մինչև տող 186: Ճառին վերջի մասը բօլորովին կը տարրերի Գ խրատէն: Հեղինակը կը բացատրէ որ առանց խոստովանութեան կարելի չէ արգարանալ և մեղքերէն աղատիլ, նոյնիսկ երբ մարդ չանայ ամենայն առաքինութիւնս գործել:

Բարիկի Ազգային Մատենագարանի թիւ 116-118 ձեռագիրը երեք հատորէ բաղկացած խոչոր ձառընտիր մըն է, գրուած 1307ին, որուն մէջ կան, ի միջի այլոց, թէոփիլոսի վերագրուած քանի մը խիստ հետաքրքրական ճառեր: Ասոնցմէ մին՝ որմէ ուրիշ օրինակ ինձի ծանօթ չէ, երկար ճառ մըն է հետեւեալ խորագիրով՝ Երանելոյն

Թէսոփիլայ ասացեալ ի հինգերորդ շաբարու Քառամնորդացն յաւուր յօրում եղեն շարժմանի մեծամեծք: Եւ վասն ամենայն առաջնորդեանց եւ պիրոյ: Եւ մեկնուրիւն լիս ներորդ ասլիմուխն: «Քանձաւ հոգեւորականու և անկողոպտելիս երաց մեզ զաւրութիւն քառամնորդացն, լցեալ մարդարտաւք մեծագունիւք և աստուածազարդ զգեստուք ան» (էջ 197 ա-204): Ինչպէս խորագիրէն արդէն կարելի էր հետեւցնել, յիսներորդ սաղմուը մեկնելով հեղինակը կը խօսի Դաւթի զգջման և ներումին մասին, և երկարօրէն կը բացատրէ մէկ ինչպէս կրցաւ խոստովանելով իր երկու մեծագոյն յանցանքները քաւել: Հոս հաս կը գտնենք հատուած մը (էջ 201 ա-201 բ) որ կը համապատասխանէ Գ խրատին և Թէսոփիլոսի նախորդ ճատին հատուածներուն: Թէսոփիլոսի այս երկու ճատերուն մէջ խոստովանութեան վերաբերող հատուածները յար և նման են և նոյն ձեւով կը տարերերին Գ խրատէն: այսինքն խոստովանողին մասին մէջ բերուածները չկան, և վերջի մասը (տող 186 էն սկսեալ) Գ խրատէն կը տարբերի: Թէսոփիլոսի վերագրուած այս ճառը նախորդէն շատ աւելի երկար է, խոստովանութեան հատուածէն վերջը հեղինակը կրկին ու կրկին կ'անդրագառնայ Դաւթին մեղքին և զգջման վրայ:

Միայն այս ճառերուն մէջը չէ որ խոստովանութեան հատուածը կը գտնենք: Բարիզի թիւ 127 և 116 ձեռագիրներուն վերև յիշուած հատուածը կրկնուած է Վասն ազգարից եւ արտասուաց եւ խոստովանութեան խորագիր կրող ճառին մէջ («Արդ շնորհ արտասուաց նշանակէ սիրելոյ գիրիստոս ևն»): Բարիզի թիւ 124 և Վիեննայի թիւ 395 ձեռագիրներուն ճառը հեղինակի անուն չունի (Բարիզ, էջ 84 թ-93 ա, հատուածը էջ 89 թ-92 ա. Վիեննա, էջ 126 ա-138 թ): Վիեննայի թիւ 535 ձեռագրին մէջ այս ճառը եփեմի վերագրուած է, իսկ Վիեննայի թիւ 524 և Աւֆուլայի թիւ 501 ձեռագիրներուն մէջ թէն հեղինակի անուն չկայ, այս ճառը Թէսոփիլոսի Յաղագս զըլջման եւ արտասուաց ճառէն ճիշտ առաջ կուգայ:

Խոստովանութեան հատուածին մեծագոյն մասը կը գտնենք նաև եփեմի վերագրուած ուրիշ մէկ ճառին մէջ՝ Յաղագս ապաշխարհութեան: «Ասէ երանելի մարդարէն եղեկիէլ ան» (Բարիզ թիւ 127 էջ

1 ա-33 ա, հատուածը՝ էջ 31 ա-32 ա, Վիեննա թիւ 371 էջ 34 ա-63 թ, հատուածը՝ էջ 61 ա-62 թ): Վերջապէս ասկէ մաս մը կրկնուած է Կանոն վասն խոստովանութեան խորագրով զրուածին մէջ զոր քանի մը օրինակներ Յոհաննէս երգնկացիին կը վերագրեն (Վիեննայի թիւ 257 (986), Վիեննա թիւ ք 4, 170 և 534), իսկ Վիեննայի թիւ 313 ձեռագրին մէջ Յոհաննէս Մանզակունիի ճառերուն շարքին զրուած է, և Բարիզի թիւ 127 ձեռագրին մէջ հեղինակի անուն չունի:

Ինչպէս արդէն ծանօթ է, միջնադարեան գրիչներ երբեմն երկար ճառի մը փոքր հատուածը առանձին կ'արտազրէին, և կամ տարբեր հեղինակներէ հատուածներ քաղելով իրար կը միացնէին և նոր ճառ մը կը յօրինէին: Երբեմն հեղինակներուն անունները կը լիչուին, օրինակի համար Վիեննայի թիւ 208 (1186) ձառընտիրին մէկ ճառին խորագիրը հետեւեալն է: Սոււրբ վարդապետացն ասացեալ Յովիաննու Ուկիբերանի, Եփեմի, Եւ Մայրէի, Եւ Զաքարիայի եւ Ստեփանոսի՝ վասն զալսեան ենաւոն յերուաղիմ (էջ 9 թ): բայց ինչպէս Հ. Բարսեղ Վ. Մարգիսեան նկատել կուտայ գդժուար է որոշել և զտահել այլ և այլ հարց անուանց վերաբերեալ յատուկ հատուածները. վասն զի ձառընտիրի հաւաքողն՝ անոնց մեկնութիւնները տիրաբարի մի ճռւլած է, քան թէ խորագրած ըստ անուան (Յուցակ, Բ, էջ 177):

Վերև նշանակուած ճառերէն, Թէսոփիլոսի Յաղագս զըլջման եւ արտասուաց ճառը («Արդ պարտ է ամենայն մարդ զայս մառածնել ևն») աւելի երկար ներբողի մը հատուածն է: Նոյնպէս յայտնի է որ Եփեմի կամ Յոհաննէս երգնկացիի վերագրուած ճառերուն մէջ՝ խոստովանութեան հատուածը վերջէն աւելցուած է: Նոյնը կրկնանք ըստել նաև Գ խրատին մասին որ իրը Վարդան Այգեկցիի հարազատ զրուածք մը կարելի չէ նկատել: Աւելի խրթին է Թէսոփիլոսի վերագրուած միւս երկու ճառերուն խնդիրը, այսինքն Յաղագս զըլջման եւ արտասուաց որմէ, ինչպէս տեսանք, քսանը ութը օրինակներ ճառօթ են, մին 1295 թուին օրինակուած, և ի հինգերորդ շաբարու Քառամնորդաց յաւուր են. ճառը որմէ ցարդ միայն մէկ օրինակ ճառօթ է: Այս երկու ճառերուն ունեցած կապակցութիւնը արդէն նշանակցինք, բայց եթէ

կարելի ըլլար բոլոր օրինակները իրար հետ համեմատել հաւանաբար ուրիշ մասերու մէջ ալ նմանութիւններ կը գտնէ: Այդ կը հետեւցնենք դատելով Վիեննայի թիւ 364 հաւաքածոյէն: Յաղագս արտառայց («Յորժամ միտք զբաղեալ լինի հետ մեղաց») ճառէն անմիջապէս վերջը կայ թէոփիլոսի վերագրուած ուրիշ հատուած մը սրուն սկզբնաւորութիւնն է: «Արդ պարտ է յիշել վասն այնը արդարութեան, զոր երէ կ առացի» (էջ 157 ա - 159թ) և այս հատուածը նոյնութեամբ կը գտննենք Բարիզի թիւ 116 ձեռագրին օի հինգերորդ շաբարու ևն ճառին վերջի մասին մէջ (էջ 203 ա - 203թ):

Այս խնդիրները լուսաբանելու համար պէտք է նախ հաւաքել և ուսումնասիրել թէոփիլոսի վերագրուած բոլոր ճառերը: Զարբհանէլեան տասնընթիւնը հատը ցուցակագրած է, առաջին հինգը իրը թէոփիլոս Աղեքսանդրացու գործ՝ իսկ միւսները իրը թէոփիլոս աշակերտ Ասկերեանի գործ (էջ 473 - 477): Խնձի ծանօթ են ուրիշ վեց ճառեր կամ հատուածներ, նոյնպէս թէոփիլոսի մը վերագրուած: Զարբհանէլեանի երկու խումբի բաժանումը կարելի չէ պահել, նախ որ թէոփիլոս աշակերտ Ասկերերանի վերագրուած ճառերը շատ մը ձեռագիրներու մէջ միայն սերանելոյն թէոփիլույ վերնագիրը ունին, յետոյ Ասկերեանի աշակերտ թէոփիլոս մը ծանօթ չէ Յոյն մատենագրութեան մէջ: Խնդիր է թէ արդեօք բոլոր ճառերուն հեղինակը Աղեքսանդրիայի եպիսկոպոս թէոփիլուն է: Այս քսանըհինգ ճառերէն մօտաւորապէս 140 օրինակներուն մէջ անգամ մը միայն Աղեքսանդրացի մակդիրը գտած եմ՝ Բարիզի թիւ 116 ձեռագիր, էջ 150 ա - 150թ՝ Թէոփիլայ եպիսկոպոսի Աղեքսանդրու՝ Յաղագս զրջման եւ վասն որուման հոգւոյն ի մարմնոյ: «Եթէ տգէտք իցէք եղբարք, որպիսի երկիւղ և գողութիւն»: Այս հատուածը, որ փոքր տարբերութիւններով կրկնուած է «Վարք հարանցոի մէջ (Վենետիկ, հատոր Ա. էջ 553 - 555) միակն է նաև որուն Յունարէն բնագիրը ծանօթ է, և որմէ Ասորերէն թարգմանութիւն մըն ալ կայ (4):

(4) Migne, Patrologia Graeca, vol. 65, col. 200A - 201A. M. Brière, Une homélie inédite de Théophile d'Alexandrie (Revue de l'Orient chrétien, 1913, p. 79 - 83):

(5) M. Richard, Les écrits de Théophile d'Alexandrie (Le Muséeon, 1939, p. 33 - 50):

Թէոփիլոս Աղեքսանդրու զրուած քներէն փոքր թիւով Յունարէն հատուածներ մնացած են, Արեւելեան լեզուներով կարդ մը թարգմանութիւններ կան որոնք իր առունը կը կրեն բայց այս վերջիններուն մեծամասնութեան հարազատութիւնը շատ կասկածելի է (5), մինչև ցարդ ինձի ծանօթ հայերէն ճառերուն ո՛չ մէկը (բացի վերև նշանակուածէն) կը համապասխանէ ուրիշ լեզուով գրուածներուն, չեն համապատասխաներ նաև հայերէն թարգմանուած հատուածներուն որոնք կը գտնուին Տիմոթէոսի Հականառութիւն առ ասհմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի գրուածքին մէջ: Կարելի պիտի ըլլար անշուշտ այս վերջիններուն լեզուն, ոճը և աստուածաբանական բացատրութիւնները ճառերուն հետ համեմատելով գաղափար մը կազմել թէ նոյն անձին հեղինակութիւնն են թէ ոչ: Առանց մանրամասնութեանց մտնելու ըսեմ որ ճառերուն մէջ կան մասեր որոնք, եթէ վերջը չեն աւելցուած, որոշ ապացոյց են որ թէոփիլոսի կողմէն չեն գրուած: Կը բաւէ միայն մէկ օրինակ մը: Մեծի աւուր զալսեան ևետև մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Բերանիս են. ճառին մէջ կը կարդանք հետեւեալ նախագասութիւնը՝ «Զի արհամարեսցուք զաղանդն և զչար հերձուածնն և զչար աւանդութիւն Նեստորի» (Բարիզի թիւ 116, էջ 210թ): Կարելի չէ որ թէոփիլոսի՝ որ Նեստորի պատրիարք անուանէն տասնընքց տարի առաջ և եփեսոսի ժողովէն տասնըննը տարի առաջ մեռած էր, Նեստորի հերձուածին մասին խօսէր: Թէոփիլոսի ճառերէն միայն մէկ հատը հրատարակուած է՝ ի գերեզման աստուածընիալ, և նոր երկինք այսաւը յերկրի հաստատուեցաւ են. (Արարատ, 1888, էջ 461 - 475): Էջմիածնի երկու ձեռագիրները (Կարինեան Ցուցակ, թիւ 889 և 920), որմէ այս ճառը առնուած է, զայն կը վերագրին Զաքարիայ կաթողիկոսին, բայց մօտաւորապէս քսան ուրիշ օրինակներուն խորագիրը թէոփիլոսի անունը կուտայ: Շատ փափաքելի է որ թէոփիլոսի վերագրուած միւս ճառերն ալ հարատարակուէին որպէս զի կարելի ըլլար զանոնք ուսումնասիրել: Յաջող և խնամով գրուած այս ճարտասանութիւնները, արժանի են բարձր տեղ գրաւելու մեր միջնադարեան գրականութեան մէջ:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ

ՊԱՊ ԱՐՃԱՎԱԿՈՒՆԻ

Գ Լ Ո Ւ Խ Թ.

ՎԱՂԷՍ ԿԱՅԱՐ



Բիւզանդիոնի արքունիքը բնաւ յօժար չէր յարգելու Յովլիանոս կայսեր կնքած զաշխնքին Հայաստանի վերաբերեալ մասը։ Այդ լեռնաշխարհէն Բիւզանդական ազգեցութեան վերացումը քաղաքան աղէտի համազօր բան մը կը համարուէր։

Տերենտիոս զօրավարին յանձնաբարուեցաւ Պապը տանելու Հայաստան, առանց սակայն Բիւզանդական լիգէոններ հայ հողը մտնելու, որպէսզի Շապուհ չըռդոքէ թէ կայսրը դաշնազրի պայմանները սոտքի տակ կ'առնէ⁽¹⁾։

Պապը Հայաստան չհասած, Արտագերսի հերոսական պաշարեալները, տաօնչորս ամիս դիմադրելէ վերջ, ստիպուեցան անձնատուր ըլլալ։

Շապուհ, կատղած Հայաստանի անցուգարձերէն և իր զօրավար Ալանաոզանի երկրէն վտարուելէն, ստուարաթիւ բանակ մը չարժման մէջ զրաւ, երկու պարսիկ զօրապետներու հրամանին տակ, և առաջնորդութեամբ Մեհրուժան Արծրունիի և Գղակի, Մարգարետական ցեղէն։

Արտագերսի գրուագը կուտանք Ամմիանոս Մարկելինոսի, Փաւստոսի և Խորենացիի գրածներէն Դէպքերու ամենահաւանական ընթացքը ի մտի ունենալով, քանզի, հարկ չկայ ըսելու թէ Փաւստոս, ինչպէս յաճախ, խառնաշփոթ է, իսկ Խորենացին խիստ համառօտ, հազիւ քանի մը տող։

Թշնամին պաշարեց Արտագերսը։ Հայրը, վստահ ամրոցի անառիկ բնոյթին, որ 360 տարի առաջ նոյնիսկ Օգոստոս կայ-

սեր լիգէոններուն դիմադրած էր յաջողութեամբ, խուճապահար չեղան։

Զմեուլ մօտենալուն, պարսիկ հրամանատարութիւնը անհամբեր էր ձիւն ու սառնամանիք չեկած։ Արտագերսի հաշիւը մաքրելու։ Այդ ատենն էր որ Գղակ ներքինին առաջարկեց, որ ինք և իրեն հետ հայ ընկեր մը ջանան ամրոցը մտնել և, ան յոյն յայտնից թէ, որպէս Արշակունի տան այնքան մօտիկ մէկը, պիտի յաջողէր Փառանձիմ թագուհին համոզել որ անձնատուր ըլլալ։

Ամմիանոս երկու անձի անուն կուտայ որպէս հայ գշխոյին հետ բանակցողներ, Cylages և Arrabanes, որոնք, կ'ըսէ, առաջուընէ դասալիք ըլլալով Շապուհին գացեր էին։ Առաջինը, ներքինի մը, որ նախապէս գաւառի մը կառավարիչը եղած էր, երկրորդը, զօրապետ մը։

Մենք կրնանք վստահօրէն ըսել թէ այս երկու քէն առաջինը Գղակ Մարգարետ է։ Միւսի պարագային, կը դժուարանանք նոյնացնել զայն Արծրունին, նկատելով Մերուժանին այնքան մոլեռանդ նուրիրումը Շապուհին և անոր չահուն համար Հայաստանի մէջ գործադրած քստմելի արտաքները, որոնց ընդզեցուցիչ մանրամասնութիւնները կուտան ետրենացի և Փաւստոս։ Անհաւանական կը թուի թէ այս Մերուժանը, Արտագերս մտնելէ վերջ թագուհին կողմը անցաւ։

Մենք Արքաբան (կամ Արտաւան) պիտի կոչենք երկրորդը, վոխտանակ Արծրունիի, նկատելով որ, ըստ Ամմիանոսի, այս երկուքը, Պապ Հայաստան գալէն վերջ անոր հետ կը գործակցին, բան մը որ Մե-

(1) Ammianus, XXVII, 12, 10.

բռւժան չէր կրնար ընել, քանզի Պապի գէմ մղուած պատերազմի մէջ սպանուեցաւ:

Երկուքը մօտեցան ամբոցի պարփռպին, և Փառանձեմ թագուհին հետ տեսակցութիւն մը խնդրեցին, պայմանաւ որ իրենց կեանքին խնայուի:

Թագուհին թոյլատրեց, և զոյգ բանագնացներ բարձրացան վեր և մասն Արտագերս: Գղակ, որպէս ներքինի, քաջավարժ կանանց շողոքորթելու և համոզելու արուեստին, երկար բարակ փառտարանից թէ միակ փրկութիւնը անյապաղ անձնատուր ըլլալու մէջ կը կայանար, որովհետև այդ կերպ կարելի կ'ըլլար ողոքել Շապուհը, և զսպել անոր սարսափելի անգթութիւնը:

Երկար վիճեցան: Փառանձեմ ողբացիր ամուսնոյն վիճակուած ահոնելի բախտը: Անոր, Հայաստանի թագաւորի, այս ողբացական կալանաւորութիւն պատասխանատուութեան բաժին հանեց Գղակին և ընկերոջ:

Ապա թագուհին ոչ մինակ մերժեց անձնատուր ըլլալ, այլ իր երկու խօսակիցներուն հազորդեց թէ, ոչ մէկ վախ ունէին, քանզի փրկութիւնը մօտ էր: Պապ Հայաստան պիտի հասնէր շուտով, Ընկերակցութեամբ հսկայ բիւզանքական բանակի: Ամէն շաբաթ, բերդի գաղտնի անցքէն պատգամաւորներ կուգային Բիւզանզիոնի զինուորական պատրաստութեան մասին տեղեկութիւններ հազորդելու: Պապ պիտի գար: Լեզէնները, Մուշեղի հայ գումարտակիներու հետ միասին, պիտի վանէին արիւնկղակ թշնամին Հայաստանէն: Այդ ատեն վա՛յ եկեր էր թշնամին հետ գործակցող թշուառականներուն:

Փառանձեմ Պապէն ստացած նամակներն ալ ցոյց տուաւ, որոնցմով Պապ կը յայտնէր թէ կայսերական բանակով մը շուտով ճամբար պիտի ելլէր, և չըլլայ որ Արտագերսի մէջ եղողները անձնատուր ըլլային:

Թագուհին համոզելու եկողները, իրենք համոզուեցան: Երկուքն ալ, մօտիկ ապագային ալ աւելի ճոխ վարձատրութեան մը ակնկալութենէն շլացած, իրենց հաւատաբրմութիւնը յայտնեցին Փառանձեմին:

Յետոյ, գաղտնաբար ծրագրեցին զիշերային յարձակում պարսիկ բանակի վրայ: Գղակ և Արաբան երդում ըրին, որ գաղտնի պիտի պահեն ըլլալիքը:

Անոնք պարսիկ բանակը վերադառնաւ լով ըսին թէ պաշարեալները երկու օր ժամանակ կ'ուզեն որոշում մը տալու համար: Ու այդպէսով պարսիկները անփոյթ սպասեցին:

Դիշերուայ որոշեալ ժամուն, մինչ պարսիկ բանակը խոր քունի մէջ էր, ամբոցի դաները բացուեցան և սուսերամերկ հայ զինուորներ անշշուկ խոյացան անհոգ քնացող թշնամին վրայ և կոտորեցին որքան կրցան:

Շապուհի կատաղութիւնը չափ չճանչցաւ: Նոր ուժերով ալ աւելի խստիւ պաշարեց Արտագերսը: Տանէորորդ ամիսը կը սկսէր: Գուրսէէն օգնութիւն չէր հասած, ոչ ալ գիտէին թէ երբ պիտի հասնէր: Պաշարուածներու մէջ հիւանդութիւն ալ ինկաւ, թերես ժանտախտ, որ օրական հարիւրաւորներ կը մեսցնէր:

Ճարահատ, Փառանձեմ թագուհին բաշցաւ վիթխարի բերդաքաղաքին դաները: Ողջ մնացածները թշնամին գերեվարեց, և ինն օր ինն գիշեր ամբոցի մէջ զտնուած առարկաները և հարստութիւնը կրեցին վար:

Հերոսական թագուհին տարուեցաւ Տիգրոն, և հոն, Շապուհի հրամանով, քաղաքի հրապարակին, անպատմելի խենէշ անարգանքներու հնթարկուելէ զերջ, սպաննուեցաւ ողբերգական հայուհին(5):

Փաւստոսի քինախնդրութիւնը սակայն, մինչև այսօր արգիլեց որ Փառանձեմ թագուհին հայ ժողովուրդի զնահատանքին արժանանայ, որպէս քաջարի ազգանուել հայուհի մը, որ սարսափի և յուսալքութեան քառային օրերուն զիտցաւ մաքառիլ յանուն հայրենիքի:

Պապ արքայորդին, ճամբար կ'ելլէր գալու Հայաստան: Ներսէս կաթողիկոս զիշեց այն նախարարներու, որոնք ուղղակի Պարսկական կուսակցութեան չպատկանելով հանդերձ, Արշակ թագաւորէն սրդողած, դժգոն մեկուսի քաշուած էին:

Հայրապետը յաջողեցաւ համոզել զանոնք, նոյնիսկ երիտասարդ Սպանդարատ կամսարականին, որուն տոհմը կոտորել տուաւ Արշակ, որ միանան իրեն, Մուշեղ

(5) Ammianus, XXVII, 12, 5-8, 11, 12: Փառանձուս, 7, 55: Խորենացի, 7, 35:

Մամիկոնեանին, Սմբատ Բագրատունիին և միւսներուն, և համաձայնին ընդունիլ Պապը որպէս թագաւոր:

Պապ տասնեօթ տարեկան եղած ըլլալու էր, և ամուսնացած Զարմանդուխտ դեռատի իշխանունիին, երբ Հայաստան ոտք կը կոխէր:

Սակայն Շապուհի բանակի ներկայութենէն զգուշանալով, չուզեց իր հօր և մեծ հօր նման անոր ճանկը իյնալ: Ուստի իր հետեւորդներուն հետ քաշուեցաւ կազիստանի մօս Խաղտեաց լեռներու անտառները, ուր հինգ ամիս պահուած մնացին:

Բայց փրկութիւնը հեռու չէր: Յովիանոսի անարդ գաշինքին օրերը համբուած էին:

2. ՎԱՂԷՍ ԿԲ ՄԻՋԱՄՏԵ

Երբ Յովիանոս կայսրը յանկարծ մեռաւ, հազիւ ութ ամիս կայսր ըլլալէ վերջ, գարձեալ զինուորականները անոր յաջորդը ընտրելու ձեռնարկեցին, և Վաղենտիանոսը կայսր հոչակեցին:

Նոր կայսեր բարեկամները խորհուրդ տուրին, որ ան իրեն գահակից մը ընտրէ, որպէսզի մահուան պարագային՝ տազնաւպալի անորոց կացութիւն մը չստեղծուի, ինչպէս եղած էր Յովիանոս կայսեր մահէն վերջ: Հաւանելով այս խորհուրդին, Վաղենտիանոս իրեն կայսերակից ընտրեց իր եղբայրը Վաղէս⁽⁶⁾:

Երկու եղբայրներ Բանոնիայէն (Հունգարիա) էին: Վաղէս 36 տարեկան էր երբ կայսրութեան արեւելեան մասը կը տրուէր իրեն 364ի Մարտին: Առաջին անգամ է որ հակայական աշխարհասասան կայսրութիւնը երկութիւ կը բաժնուէր, բան մը որ քառասուն տարի վերջ մշտատե պիտի ըլլար:

Վաղէս Արիսոսեան էր: Կայսրներու ամենէն մօլի և վերջին Արիսոսեանը, որուն տակաւին կ'անդրադառնանք:

Իր պաշտօնավարութեան առաջին մէկ երկու տարիներուն Հայաստանի խնդիրներուն միջամտելէ զգուշացաւ: Յովիանոսի գաշնազիրը մէկ կողմէ, միւս կողմէ Պրոկոպիոս զօրավարի ապստամբութիւնը, որ ինքինքը կայսր հոչակած էր, իրը թէ Յով-

լիանոս կայսեր կողմէ նշանակուած ըլլալու հանգամանքով: Եւ վերջապէս, Դանուերէն անդին Գոթերու հետ ունեցած դժուարութիւնները, որ 367ին պատերազմի յանգեցան: Վաղէս յաղթական դուրս եկաւ այս պատերազմէն 369ի գարնան:

Այժմ ան կրնար իր ուշագրութիւնը արեւելք դարձնել: Յացորոց էր որ Հայաստանէն Բիւզանդական ազգեցութեան վերացումը կը վտանգէր ամրոգ Եփրատեան սահմանագծի, և թերեւս Փոքր Ասիոյ ապահովութիւնը:

Կոմո Արինթէսո, Փիզիքական արտակարգ վայելչութեամբ օժտուած փորձառու զօրապետ մը, Հայաստանի սահմանները դրկուեցաւ մեծ բանակով մը, զիտելու պարսիկ թագաւորի շարժումները, և ի պահանջել հարկին, օգնելու հայերուն:

Վաղէս ինքը թէս ուազմական կարողութենէ զուրկ մէկն էր, բայց բախտաւոր էր որ իրեն կը ծառայէին հմուտ և քաջավարժ հրամանատարներ, ինչպէս Արինթիոս, Տրայանոս, Տերենտիոս և Վատոմար: Այս վերջինը՝ առաջ Գերիման կարգ մը ցեղերու թագաւոր եղած էր, և Յուլիանոս կայսեր կողմէ գերի բռնուելէ վերջ, Հոսմէսական բանակի մէջ զօրապետ եղած էր: Հակառակ այս զօրավարներուն ամենուն ալ Աւելզափառեան ըլլալուն, Վաղէս կը պահէր զանոնք, գիտակցելով անոնց ուազմական հմտութեան: Եւ շատ չանցած, վերոյիշեալ զինուորականները Հայաստան կամ անոր սահմաններուն մօտ պիտի ըլլային իրենց լեզուներով:

Շապուհ զիսպան զրկեց Վաղէսին բողոքելու որ կայսեր առած քայլը՝ Հայաստանը պաշտպանելու, բռնաբարումն էր Յովիանոսի հետ կնքուած զաշինքին⁽⁷⁾:

Միաժամանակ, Մուշեղ Մամիկոնեան իր շուրջը հաւաքած համախոհ նախարարները, փախածներն ու մնացածները, օգնութիւն ուզեցին Բիւզանդացիներէն, որ լեզունները միանան հայ զինուորներուն և պատերազմին Շապուհի դէմ⁽⁸⁾:

Շապուհի բողոքը մերժուեցաւ կայսեր կողմէ: Հաւանաբար Շապուհ ինքն է, որ Վասակի դէմ առած քայլով, անուզզակի

(7) Ammianus, XXVII, 12, 15:

(8) Փաւստոս, Ե. 1.

պատճառ մը հայթայթած կրնար ըլլալ Բիւզանդիանի դիւանագէտներուն թէ Պարսիկը՝ կայսրէն առաջ դաշնագրի պայմանները յարգած չէր:

Եապուհ, իր յաջողութիւններէն զիւնովցած, ո՞չ մինակ Հայաստանէն այլ Կովկասէն ալ բիւզանդական հեղինակութիւնը ջնջելու մտքով, Վրաստան մտաւ և Սուրմակ թագաւորը փախուստի մատնեց: Սուրմակ Բիւզանդիանէն նշանակուած էր և կը վայելէր կայսեր պաշտպանութիւնը:

Եապուհ Սուրմակի տեղ թագաւոր կարգեց անոր եղբօրորդին Սորակուրէսը, որ Պարսիկի մարդն էր, և որուն զաւակը Եապուհի մօտ պատանդ էր⁽⁹⁾:

Եապուհի առած այս քայլը յարմարագոյն պատրուակ մըն էր Բիւզանդիանի համար: Յովիանոսի ստորագրած դաշնագրի մէջ Վրաստանի անունը չէր յիշուած: Վրաց օրինաւոր թագաւորին, Բիւզանդիանի պաշտպանելին գէմ Եապուհին ըրածը անարդարնալի էր: Այդ ուրիշ բան չէր, եթէ ոչ խզել երկու պետութեանց միջն գոյութիւն ունեցող այն խաղաղութիւնը, որ, դաշնագրի համեմատ, երեսուն տարի շարունակելու էր:

3. ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ներսէս կաթողիկոսի և Մուշեղ Մամիկոննեանի դիմումին զրական պատասխան տրուեցաւ: Բիւզանդական լեգէոններ մտան Հայաստան, օգնելու Մուշեղին որ պարսիկները վտարէ հայ աշխարհէն:

Ոչ ալ Վրաստանի խնդիրը անահետ պիտի առնուէր:

Տերենտիոս զօրավար տասներկու լեգէոններու գլուխն անցած, Սուրմակը ետքերաւ Վրաստան: Ասրակուրէս կամ յանշարժակի եկաւ, կամ Եապուհէն անմիջապէս զինուորական օգնութիւն ստանալէ յուսահատած, պաղատեց Սուրմակին որ երկու քը մէկ, երկու եղբօրորդիներ, միասին իշխն: Քանզի, կը պատճառաբանէր ան, եթէ ինք իշխանութիւնը ձգէ, կամ Բիւզանդացիներուն կողմը անցնի, իր զաւակը ուլթրա, որ պատանդ կը գտնուէր Եապուհ:

մօտ, պիտի սպանուէր անողորմ բռնակալէն:

Բիւզանդիանի հաւանութեամբ, երկուքը համաձայնեցան բաժնել Վրաստանի թագւորութիւնը իրենց միջն, կուր գետը սահմանագիծ համարելով: Սուրմակ պիտի իշխէր երկրի արեւմտեան մասին, Հայաստանի և Լազիստանի սահմաններուն կից հողամասը: Ասրակուրէս, արիւելի ան կողմը, Պարսկաստանի եւ Աղուանից երկրի սահմանակից⁽¹⁰⁾:

Հայաստանի մէջ Հայ-Բիւզանդական զօրագունդերը ճակատեցան պարսիկ բանակի դէմ Զիրաւ կոչուած դաշտին մէջ, որ կը տարածուէր Նպատ լիրան ստորոտին:

Պապ թագաւոր Ներսէս կաթողիկոսի հետ պատերազմը զիտեց լիրան գագաթէն: Հոն Հայրապետը, բազկատարած, կ'աղօթէր քրիստոնեայ բանակի յաջողութեան համար:

Պարսիկ բանակը պարտուած հեռացաւ⁽¹¹⁾:

Իսկ հայ աշխարհի մէջ այնքան արիւն, արցունք և աւերի գլխաւոր պատասխանատուն, Մերուժան Արծրունի, բռնուելով սպանուեցաւ:

Մերուժանի ե՞րբ, ո՞ւր և որո՞ւ ձեռքով սպանուելու պատմութիւնը բոլորովին տարբեր կը նկարագրեն Խորենացի և Փաւուսուս:

Խորենացին, Զիրաւի պատերազմին:

Մինչ Փաւուսոս կը յետածգէ տարիներով, Պապ թագաւորէն վերջ, անոր յաջորդ Վարազգատ թագաւորէն ալ վերջ, Ներսէսի և Մուշեղի մահէն շատ վերջ: Մանուէլ Մամիկոննեանն է, որ Պարսիկ թագաւորի թոյլատուութեամբ և օժանդակութեամբ Հայաստան վերագանալէն վերջ, կը պատերազմի Մերուժանի հետ, ուր գաւաճանը կը յաղթուի և կը սպանուի: Ինչո՞ւ Փաւուսոս այսքան կ'ուշացնէ Մերուժանի պատիժը: Արգեսօք Մանուէլը աւելի⁽¹²⁾ կը սիրէր քան Մուշեղ, և ուզեր է իր երկու սիրածներէն քիչ մը աւելի: ախորժածին տալ հրէշը պատերէլու վրէժխնդրական պատիւը:

Մենք աւելի հաւանական գտանք Խորենացիի պատմութիւնը: Եւ որովհետեւ Մերուժանի մահապատիժին նկարագրութիւնը եր-

⁽¹⁰⁾ Ammianus, XXVII, 12, 16, 17:

⁽¹¹⁾ Փաւուսուս, Ե. 4: Խորենացի, Գ. 37:

զիծական չեշտ մը ունի — հազուազիւտ
բան հայ հին մատենագիրներու մօտ — ա-
ւելորդ չենք համարիր կրկնել:

Պատերազմի մէջ Մերուժանի ձին վի-
րաւորուելով ան չկրցաւ արագօրէն փա-
խուստ տալ: Մմրատ Բագրատունի անոր
ետեւէն հասաւ, կոտորեց հետք գտնուող
զինուորները և Մերուժանը ձերթակալեց
կողայովաի եղէզնուտի ափին: Ի սկզբան
Մմրատ կ'ուզէր անօրէնը տանիլ յազթական
բանակի հրամանատարութեան մօտ, բայց
վախնալով որ ներսէս կաթողիկոս կրնայ
միջամտել և ազատել Մերուժանը, որոշեց
տեղն ու տեղին հաշիւը մաքրել:

Մմրատ տեսաւ խուժմբ մը վրանաբնակ-
ներ, որոնք կրակ վառած են, միս խորո-
վելու երկաթէ շամփուրով: Եշխանը շամ-
փուր մը վերցնելով տաքցուց և բոլորեց
այդ պսակի ձեւով: Յետոյ կրակի մէջ կար-
մըրցնելով, մօտեցաւ դաւաճանին և ըսաւ.
«Քիզ կը պսակեմ, Մերուժան, որովհետեւ
կը փափաքէիր Հայոց թագաւոր ըլլալ, և իմ
հայրենի իշխանութեան կաթողիկոս է
պսակել քեզ»: Ու չիկացած երկաթը Մե-
րուժանի գլխուն անցուց մինչև անոր մեռ-
նիլը:

Այսպիսով, անգամ մըն ալ Բիւզան-
դական հեղինակութիւնը կը հաստատուէր
Հայաստանի մէջ: Ներսէս կաթողիկոս, նա-
մանաւանդ Մուշեղ Մամիկոնեան, աւելի
քան իր հայրը Վասակ, որուն չարաչար
սպանման վրէմն ալ կրկնակի գրգիս էր
զաւկին, այդ հեղինակութիւնը ամբացնե-
լու տենդագին աշխատանքին պիտի լծուէին:

ՀՐԱՄԱԴ. Ք. ԱՐՄԵՆ

Շաբանաւուէլ (21)

ԵՐԱԺԾԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՒՐՆԵՐ

———— ♦ ——

17

ԵՐԱԺԾԱՄՊԵՏ ԳՐԻԳՈՐԻՈ



Իջնագարի հայ երաժշտական
արուեստի պանմութեան մէջ իր
ուրոյն էջն ունի նաև Գրիգորիո
երաժշտապետը, որի մասին յիշատակում
է «յոյժ մեղապարտ» գրիչ Խաչատուրը,
1247 թուին Դրագարկի մենաստանում
գրած սեարեկում և ինդրում է. . . .
Մեղաց թողութիւն հայցեցէք . . . Գրի-
գորիոսի երաժշտապետի. և ի ԱՊ.2 (696 +
551 = 1247) թուականիս հայոց . . . գրե-
ցաւ սա (Նարեկ) ի հոչակաւոր մեծ անա-
պատիս, զոր Դրագարկ վերածայնի . . . ի
հայրապետութեանն տեսուն Կոստանդեա և
ի բարեպատ թագաւորութեանն Հեթմոյ և
աստուածասէր իշխանաց իշխանին Կոս-
տանդեա . . . Գրեցաւ ձեռամբ իմոյ Խաչա-
տրոյ՝ ցցուն գրչի, սուտանուն կրօնաւորի
և յոյժ մեղապարտի: Աստանաւոր աղաչեմ
զամենեսեանս, մեղաց թողութիւն հայցե-
ցէք . . . և ի Գրիգորիոսի երաժշտապետի»:

13րդ դարի այս վաստակաւոր երաժըշ-
տապետի ստեղծագործութեան գլխաւոր
կինտրոնն է հանդիսանում Դրագարկի պատ-
մական վանքը, ուր նա ձայնագրում է և
գրի առնում հոգեսոր երգեր և աւանդ թող-
նում ապագայ սերունդներին:

Իր ստեղծագործութիւնների մէջ նա
երեան է գալիս որպէս վարպետ երաժիշտ
և իր գարաջրջանում փայլում է իր ինք-
նատիպ և ուրոյն երաժշտութեամբ և ա-
ռանձնայատուկ ոճով:

Հայ եկեղեցական երաժշտութեան մէջ
նրա ինքնուրոյն արտայայտութիւններից
մէկը, ձեռագիր յիշատակարանի վկայու-
թեամբ, իր արուեստի անմիջականութիւնն
է ու խորութիւնը: Թերես այդ երեսոյթով
էլ պիտի բացատրել, որ 13րդ դարի հայ
երաժշտութեան պատմութեան մէջ նա հըռ-



չակում է որպէս լաւագոյն երաժշտապետ, որն իր յօրինած երգերով հարստացրել է իր ժամանակի եկեղեցական երաժշտական մշակոյթի գանձարանը:

Այդ երգերը, որոնք ձեզ ցայտուն գաղափար են տալիս նրա երաժշտական փայլուն ձիրքի և կասուցողական արուեստի մասին, միջնադարեան հոգեոր երաժշտութեան պատմութեան համար անպայման նշանակալից են և ուշագրութեան արժանի: Ահա թէ ինչո՞ւ 13րդ դարի հայ եկեղեցական երաժշտութեան պատմութեան մէջ արուեստագէտ Գրիգորիոսը, որպէս հոգեոր երգեր յօրինող, որպէս ուրօյն և ինքնատիպ ստեղծագործող, ունի իր պատուաւոր տեղը:

18:

ԵՐԱԺԵՏԱՄԵՏ ՍՈՍԹՈՒԷԼ, ՎԱՐԴԱՊԵՏ

Միջնադարեան հայ երաժշտական մշակոյթի փայլուն գէմքերից մէկն է երաժշտապետ Սամուէլ վարդապետը, որի գեղարուեստական գործունէութեան պատմութեան էջերը մեզ տանում են 13րդ դարի կէսը:

Նա հանդիսանում է իր դարաշրջանի հոգեոր, եկեղեցական երաժշտութեան գարկ տուող լաւագոյն դրոշակակիրներից մէկը: Դա այն պատմաշրջանն էր, երբ Կիլիկիայում փայլում էին Դրազարկի գլորցի երաժշտապետ Յովաէքփը (1241 թ.), երաժշտապետ Գրիգորիոսը (1247 թ.), երաժիշտ Թոռորոսը (13րդ դարի վերջին և 14րդ դարի առաջին շրջանում) և ուրիշներ, որոնք ծաւալում են երաժշտական բազմակողմանի գործունէութիւն և նպաստում իրենց դարաշրջանի հայ ժողովրդի գեղարուեստական ճաշակի գարգացմանը:

Ահա նոյն 13րդ դարի կիսում նկարում է երաժշտապետ Սամուէլի պայծառ կերպարը, որ իրք երաժշտութեան դաստու աշխատում է Զորոյ բերդում և ամբողջ էութեամբ նուիրում է հայկական երաժշտական մշակոյթի գարգացման վեհ գործին:

Այս արժէքաւոր երաժշտապետի անունը 701 երկար տարիներ իր մի էջում գուրգուրանքով պահել է հնագոյն մի ձեռագիր, որի ճակատին կարդում ենք: «Մեկնութիւն կաթուղիկեաց» խորագիրը:

Դա գրուած է թղթի վրայ, բոլորզրով, հայոց ԱԴ.թ (699 + 551 = 1250) թուին, Զուրոյ բերդում, և մեղաւոր և յետին զրչի»: Ստեփանոսի ձեռքով: Զեռազրի յիշատակարանը հայ երաժշտութեան պատմութեան համար առանձին արժէք է ներկայացնում նրանով, որ այնտեղ երաժշտապետ Սամուէլ վարդապետի մասին կարդում ենք թէ չտա սեղմ, բայց այսպիսի թանկապին տողեր . . . Գրեցաւ ոգեշահ զիրս ձեռամբ մեղաւոր և յետին գրչի Ստեփի (անոսի) յանապատիս, որ կոչի Զորոյ բերդ . . . Եւ արդ, աղաչեմ հողացեալ բերանովս . . . յիշեսջի՞ք և զյառաջասացեալ վերայկացուք անապատիս և զնոգեոր հայրն և զբարի վարդապետ իմ զԱմուէլ երաժշտապետն և մակացոյ յաստուած այինն . . . զրեցաւ ի հայրապետութեան Տեղոն Կոստանդեա (յ) և ի թագաւորութեան հայոց քրիստոսապոսկ թագաւորին Հեթմոյ և աստուածասէր թագուհոյն Զապելի, որ է գուստը Լուսի թագաւորին . . . » (*):

Զորաբերդի պատմական վանքը լինելով հայ ժողովրդի հոգեոր մի կենտրոնը, միաժամանակ հանդիսանում է հայկական մշակոյթի կարևոր օջախներից մէկը: Այնտեղ բեղմնաւոր աշխատանք են ծաւալում վաստակաւոր գրիչներն ու նկարիչները, որոնք հայ գրչական և մանրանկարչական մշակոյթի զարգացման գծով խոչըր զեր են կատարում: Ինչ 1310 թուականին հանգէս է գալիս իգնատիոս գրիչը և զրում է մի «Նարակնոց», որի յիշատակարանում նա ընդգծում է հետեւեալ էական տողերը. . . Գրեցաւ եղանակաւոր տառո ի թուիս ԶԾթ (759 + 551 = 1310), ձեռամբ անպիտան և անարժան քահանայի իգնատիոսի, ի մենաստանիս, որ կոչի Զորոյ վանք, ընդհաննեաւ սրբուհոյ Աստուածածնիս . . . որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափարաւ, սրտի մտաւք յիշեսջի՞ք զգծող սորա զիգնատիոս և զազգայինսն մեր, և Սատուած յիշողացք ողօրմեսցի ի միւս անգամ գալուստն, ամէն»:

Զորոյ վանքի պարծանքն է կազմում նաև կոստանդին եպիսկոպոսի գրիչը, ուր նա ընդօրինակում է «Յայսմաւուրք» սի մի մասը:

(*) Տես Գարեգին Ա. Կաթողիկոսի «Յիշատակարանը ձեռագրաց», Անթիւիաս, 1951 թ.:

Նշանաւոր Զորոյ վանքի կամարների ներքոյ ստեղծագործում է մի այլ գեղագէտ գրիչ : Դա Առաքելն է, որ 1338 թուականին գրում է ԱՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔ ձեռագիրը : Ահա՝ զրչագրի վկայութիւնը Քրեցաւ եղանակաւոր տառո, որ կոչի մանրուսումն և առջնթեր կցուրդ փոխման Աստուածածնի, ի թվին 22է (787 + 551 = 1338), ի թագաւորութեան հայոց Լանիի, որպէս արքային Աւշի, և ի հայրապետութեան) տեառն Յակոբա(յ) յանապատու, որ կոչի Զորոյ վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և կինսարեր սուրբ հայնիս, ձեռամբ բազմամեկ, եղկելի և անիմաստ գրչի Առաքելին» :

Պատմական մենաստանում ստեղծում են նաև բարենպատ պայմաններ հայ երաժշտութեան զարգացման համար : Այնտեղ վաստակաւոր գրիչները ո՛չ միայն գրում են «Շարակնոց», «Մանրուսմունք» և հարլստացնում հայ երաժշտական արուեստի էջերը, այլև հանդէս է գալիս գեղարուեստագէտ Սամուէլ զարգապետը և իր մասնագիտական լուրջ կրթութեամբ փայլում է որպէս հմուտ ու ձեւակերպուած երաժշտագէտ, հոգեոր երգեր ճայնագրող և Զորոյ վանքի մշակութային գործիչ :

Նա մենաստանում, իրեն երաժշտութեան դասատու, առանձին ուշագրութիւն է գարձնում նոր սերնդի գեղարուեստական գաստիարակութեան վրայ : Իր շուրջն է համախմբում երաժշտական ընդունակութեամբ օժտուած երիտասարդ միաբաններին, որպէսզի նրանք սովորեն արուեստի անհրաժեշտ գիտելիքները և նույիրուեն ժողովրդի մէջ երաժշտութիւն տարածելու վեհ գործին :

Սակայն, սրաբի վարդապետա Սամուէլ երաժշտապետն իր հասարակական գործունէութիւնը չի սահմանափակում միայն մանկավարժական աշխատանքով, նույիրում է նաև ստեղծագործական-երգահանական արուեստին և իր յօրինած երգերով հարստացնում դարաշրջանի հայ եկեղեցական երաժշտութեան գանձարանը : Առհասարակ, որպէս հայ երաժշտական մշակոյթի վարդապատ նախանձախնդիր արուեստագէտ, նա առաջիններից մէկն է, որ Զորոյ վանքում ո՛չ միայն միշտ բարձր է պահում հայ երաժշտական արուեստի գրօշը, այլև

երաժշտական կրթութիւն է տալիս վանքի ընդունակ երիտասարդ միաբաններին և նրանց սրտերում վառ պահում երաժշտական մշակոյթի սէրը : Եոյնպէս նա է, որ իր միջավայրում տարածում է հոգեւոր սքանչելի երգեր, որոնք խոր տպաւորութիւն են գործում ժողովրդի վրայ և նպաստում նրա երաժշտական դաստիարակութեանը : Այդ բեղմաւոր աշխատանքների չնորհիւ էլ Սամուէլ երաժշտապետն արժանում է մենաստանի միաբանների յատուկ ուշագրութեանը և վայելում ժողովրդի սէրն ու համակրանքը : Ահա թէ ինչո՞ւ նրա կատարած բազմերանգ գերը հայ երաժշտութեան պատմութեան մէջ խոչոր նշանակութիւն ունի :

19.

ԵՐԱԺԵՏԱԳԵՏ

ՊԱՐԳՈՎԱՆ ՎՐԴԻ ԱՐԵԿՈՎԱՅՐ

13րդ գարը հայ եկեղեցական երաժշտութեան պարգեւում է մի այլ վաստակաւոր երաժիշտ : Դա իր ժամանակի համբաւաւոր զիտեական օխմաստուն և հանձարեղ մշակ վարդապետ Արեւելցին է, որի ծննդեան վայրը մինչև օրս էլ յայնի չէ : — Նրա Արեւելցի կոչումից երեւում է, — զրում է տաղանդաւոր բանասէր Մանուկ Արեղեանը, — որ նա Արեւելցան Հայաստանից է եղել, հաւանօրէն Գանձակ քաղաքից կամ նրա շրջականներից, ծնուած է մօտ 1200—1210 թուականների մէջ :

Ուսել է նա նշանաւոր և արգիւնաշատ հեղինակ Յովհաննէս վանական վարդապետի մօտ և աշակերտակիցն է նշանաւոր պատմագիր Կիրակոս Գանձակեցու :

Վարդան վարդապետի կեանքի պատմութեան էջերը նշում են, որ նա երկար թափառում է զանազան վանքերում : Ուսիտի է զնում նախ երուսաղէմ, վերադարձին մտնում է Կիլիկիա և մի որոշ ժամանակ ապրում հայոց Հեթում արքայի և նրա եղբայրների մօտ : Ապա անցնում է Հռոմեական կաթոլիկոսի մօտ, որ նրան տեսնելով՝ շատ ուրախանում է Զոր տեսեալ, ուրախացաւ յօյժ, և առ իւր պահեալ յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա և զի ոչ կամէր երբէք մեկնիլ

ի նմանէ»։ Հայոց կաթողիկոսը նրա ձեռքով էլ ՀԱՅ արքական թուղթ և եկեղեցական կանոններ է ուղարկում Հայաստանի քաղաքները, աւաններն ու վանքերը և երեւելի իշխաններին։ Այնուհետեւ, 1246 թուին, նրան տեսնում ենք Կայանոյ, «Եւ ինքն եկեղելի Կայանոյի ի միայնարանն իւր, զոր ուրբ Անգրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ գաղաքեալ յուսուցաննել զբացումօ, որք աշակերտէին նմա, գարգապետական բանին»^(*)։ Այնուհետեւ նա չըջում է մի շարք մենաստաններ — Խոր-Վիրապ, Թիգենեաց վանք, Սաղմոսավանք, Հաղպատ, Հառիճոյ վանք, Աղջոց վանք, որոնք իրենց մշակութային կեանքով նրա վրայ խոր տպաւորութիւն են թողնում։

Ուշագրաւ է այն, որ նրա համբաւը, որպէս լաւագոյն մանկավարժի և զիտնականի, ամէն աեղ տարածւում է և ամէն կողմից նրա մօտ են գալիս բազմաթիւ ուսումնատենչ ուսանողներ և զիտութեամբ ու գրականութեամբ պարապում։ Նրա լաւագոյն աշակերտների շարքում ուրոյն տեղ են գրաւում երկու պայծառ գէմքեր՝ Ներսէս Նշեցին և յայտնի մեկնող, բանաստեղծ և քերականագէտ Յովհաննէս Երզնկացին։ Նա իր իմաստութեամբ և անխոնջ վաստակով այնպիսի մեծ հոչակ է վայելում, որ 1264 թուին Հուրավու Եղղանը կանչում է նրան իր մօտ և պատւում։ Վերադարձին շարունակում է իր գրական-մանկավարժական զործունէութիւնը, մինչև իր մահը՝ 1271 թուականը։

Այս վաստակաւոր գրական մշակը հայ մատենագրութեան աւանդ է թողել գրական բազմաթիւ երկեր, որոնցից ամենանշանաւորը «Պատմութիւն տիեզերական օն» է (Մոսկուա, 1861 թ.)։ Աւոն Նաեւ մեկնութիւններ Երգ Երգոցի, Սաղմոսի, Դանիէլի և այլն։ Մանր երկերից յիշենք՝ «Յաղագս մեկնութեան քերականին», «Թուղթ . . . առ Հեթում թագաւորն» և ուրիշներ։

Սակայն, մի հանգամանք աւելի արժեքաւորում է նրա պայծառ կերպարը։ Իր անունը քանդակուած է նաև հայ երաժշտութեան պատմութեան մէջ։ Նա իր ձեռքում ո՛չ միայն բարձր է պահում հոգեսոր երաժշտական արուեստի գրութ, այլև հան-

գիսանում է իր գարաշրջանի երաժշտական գպրոցը զարգացնող վաստակաւոր մշակներից մէկը։ և ժողովրդի սրտում վառ է պահում երաժշտութեան սէրը։ Այդ տեսակէտից նա միջնադարի հայ երաժշտութեան պատմութեան մէջ ունի իր ուրոյն էջը։ Նրանից մեզ աւանդ են մնացել երաժշտական որոշ հատուածներ, որոնցից ուշագրաւ են Յովակիմայ և Աննայի, Երկուտասան Առաքելոց և Սահակ-Մեսրոպին (Թարգմանչաց) նուրիրած շարականները, որոնք գրաւիչ են իրենց երաժշտական արուեստի նրբութեամբ, զգացմունքի ջերմութեամբ ու գեղեցիկ պատկերաւորութեամբ և, որ էականն է, մինչև օրս էլ երգւում են։ Այդ եղանակների ետեւում ցոլանում է հմուտ և ձեւակերպուած լաւագոյն հայ երաժշտագէտը։

20.

ԵՐԱԺԻԵՏ ԹԱՐԱԾՈՒ

Ահա հայ երաժշտական արուեստի մի այլ վաստակաւոր մշակը։ Դա երաժիշտ Թորոսն է, որ ապրել է ու զործել 13րդ դարի վերջին և 14րդ դարի առաջին շըրջանում։ Նրա զործունէութեան զլիսաւոր վայրը հանդիսացել է Դրազարկի պատմական վանքը։ Կիլիկիայի հին մայրաքաջաք՝ Սսի սահմանում, անտառախիս մի ձորում, բարձրացել է ժամանակի լուսաւոր կենտրոններից մէկը։ Դրազարկի մենաստանը, որին ձեռագիր մատենաների յիշատակարանները գրուատում են մեծ, ականաւոր, հոչակաւոր, գերանչչակ, սուրբ, հրեշտակարնակ ածականներով։

Վանքի պատմութեան ամենափայլուն շըրջանը կազմում է 12-14րդ դարի կէսը։ Այդ ժամանակ է, որ մենաստանի իր կոչման բարձրութեան վրայ կանգնած միաբանութեան շարքում փայլում են գրական գեղարուեստական ձիբքերով օժտուած հոգեւորականներ։ Այդ վանքումն է, որ վարպետ գրչագրերը գրում են բազմաթիւ ձեռագիր մատենաներ, որոնց թանկացին մնացորդներն այսօր մեզ ցայտուն զաղափար են տալիս ժամանակի գրչագրութեան և գեղագրութեան արուեստների նրբութեան ու խորութեան մասին։ Սակայն, մի հանգամանք աւելի բարձրացնում է վանքի հմայքը։ Դա մենաստանի կամարների ներ-

(*) «Պատմութիւն Հայոց կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1908 թ., էջ 295։

քոյ կատարուած գեղարուեստական գործունէութեան գեղեցիկ պատկերն է։ Այստեղ, միաբանների շարքում, հանդէս են զալիս նկարչական հարուստ տուեալներով օժտուած խոշոր արուեստագէտներ, որոնք իրենց հմուտ վրձինով առանձին փայլ են տալիս մանրանկարչութեան արուեստին։ Այդ տաղանդաւոր նկարիչների շարքում առաջնակարգ տեղ է գրաւում մի համեստ, բայց փայլուն արուեստագէտ, մի վաստակաւոր քահանայ։ Դա Ասրգիս Պիծակն է, 14րդ դարի ամենատաղանդաւոր նկարիչը, ամենափայլուն ծաղկողն ու սոկողը։ Իր գեղարուեստական ստեղծագործութիւններով զարգարում է նաև բազմաթիւ ձեռագրերի էջերը, որոնցից շատերն իրենց ինքնատիպ ոճով, նրաւութեամբ ու խորութեամբ այսօր իրենց վրայ են կենտրոնացնում ամէն մի գեղարուեստագէտի հայեացքը և պատմում նրա վարպետ վրձինի և նկարչական նուաճումների մասին։

Նոյն գարագրչանում Դրազարկի վանքի միաբանների շարքում յայտնի է գառնում մի երաժշտ, որ նպաստում է իր ժամանակի երաժշտական արուեստի զարգացմանը։ Դա Թորոս երաժիշտն է, որ ապրել է և ստեղծագործել 13րդ դարի վերջին և 14րդ դարի առաջին շրջանում։ Նրա գեղարուեստական գործունէութեան գրեխաւոր վայրը հանգիստանում է Դրազարկի պատմական մենաստանը, ուր նաև ամբողջ էութեամբ նուիրում է հայ երաժշտական մշակոյթին։ Դա այն պատմաշրջանն էր, երբ Դրազարկի վանքն ապրում էր իր գրական, զիտական-գեղարուեստական գործունէութեան փայլուն շրջանը։ Ահա այդ ժամանակ մենաստանի իրենց կոչման և պարտականութեան բարձրութեան վրայ կանգնած արուեստագէտ միաբանների շարքում իր երաժշտական ընդունակութեամբ փայլում է երաժշտապետ Թորոսը։

Նրա մի այլ ուշագրաւ աշխատանքն իր ստեղծագործութիւններն են։ Իր երաժշտական գործունէութեան ընթացքում նաև արուեստին նուիրում է գեղեցիկ ձայնագրութիւններ, որոնցով նպաստում է միջնադարի երաժշտական արուեստի զարգացմանը։

Արուեստագէտի մի ուրիշ լաւագոյն ծառայութիւնն այն է, որ գաստիարակում և հայ ժողովրդին է նուիրում երաժշտա-

սէր մի ամբողջ սերունդ, որն իր ձեռքում բարձր է պահում հայ երաժշտական մշակոյթի գրօշը։

Ծնորհիւ իր մանկացարժական և գեղարուեստական բեղմնաւոր գործունէութեան՝ նաև իր գարագրչանում մեծ ժողովրդականութիւն է վայելում։ Սակայն, մի հանգամանք աւելի հոչակում է նրա անունը։ 1307 թուին Լեւոն Գ. և Հեթում Բ. արքաները, բարձր զնահատելով նրա մտաւոր պատրաստութիւնը և խոհեմ ու լուրջ բնաւորութիւնը, գեսաբան են ուղարկում նրան Անգլիայի եղուարդ Բ. թագաւորի մատԱյդ մասին Հ. Ա. Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարան»ի 593-4րդ էջերում կարգում ենք հետեւեալ բնորոշ տողերը. «... Դրազարկի վանքն, անշուշտ, իւր զրից պատճառաւ, և կամ անոր մէկ մասն կոչուած է «Փոսոյ վանք»։ վանքս կոչուած է նաև «Աւագ» վանք։ — Վանաց միաբաններէն յիշելու արժանի է նախ Թորոս երաժշտալ կամ գասապետ։ որ 1307ին Լեւոն Գ. էն և Հեթում Բ. էն գեսաբան զըրկուած էր Անգլիոյ եղուարդ Բ. թագաւորին։ Յիշենք նաև սրբասէր քահանայն Սարգիս Պիծակ՝ որ ժամանակին հայ նկարչաց, սոկողաց և ծաղկողաց մէջ առաջին կրնարհամարուի։ Դրազարկ չէն և բարգաւաճ եղած է գրեթէ ԺԲ. դարու սկիզբէն մինչև ԺԴ. դարու կէսը» (տե՛ս նաև Սիսուան, էջ 230-234)։

Նշենք մի այլ ուշագրաւ երեւոյթ։ Վանքն իր մատենագրական, գիտական ու գեղարուեստական գործունէութեամբ միջնադարում ոչ միայն մեծ հոչակ է վայելում, այլև գառնում է հայ թագաւորների, թագուհիների և բարձրաստիճան հոգեւորականների պանթէոնը։ Այստեղ են հանգչում Ռուբրինեան արքաններից Թորոս Ա. և Բ., Թուրէն Բ. և Հեթում Ա., որ թագաւորում է 45 երկար տարիներ։ Այստեղ են ամփոփուած հայ թագուհիներից Զարէլ Ա., ժամանակի գաստակաւոր հոգեւորականներից Գրիգոր Տղայ Պահլաւիկ կաթողիկոսը, Կոստանդնովին Բարձրերդցի, Կոստանդնովին Գ. Լամբրոսնացին և ուրիշներ։ Այս երեւոյթներն էլ վկայում են վանքի վայելած մեծ հեղինակութեան, համբաւի և ժողովրդականութեան մասին։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Տարումակելի՝ 10)

ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ “ՍԻՌՆ”Ի ՄԵԶ

(ԵՐԵՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Պերճանքի մը սիրո՞յն, կը տարուիս մտածել, զլխակարգուած են՝ Բանաստեղծական և Դրական՝ բաժինները Սիրն Արօնական և Բանասիրական՝ պաշտօնաթերթին, եթէ ոչ աւելի խորունկ պահանջքէ ծնունդ առած և դէպի արուեստի կալուածներ առաջնորդող պողոսաներ են անոնք:

Պերճանքի գաղափարը անտեղի նկատուելու պարագային, գործնական և տառետրական՝ միտք ունեցող մարդը պիտի վինտոէ պատճառ մը որ առեն հրատարակիչի մօտ կը գտնենք իրըն զլխաւոր մտահոգութիւն — ‘ինչպէ՞ս ծախսի և սպառել մէջտեղ զրուած ապրանքը, արտադրութիւնը’։ Սակայն թնչ հարկ այս մտահոգութեան։ Մեր ժողովուրդին մէջ, մեր ընդհանուր մարդահամարին և մտանաւորաբար ‘գիրի սպասին’, ‘զիրքի ճաշակին’, ‘ընթերցման վայելքին’ հաղորդ մարդոց գումարին համեմատաբար, այնքան բազմաթիւ են մարդական, հայրենակցական, կուսակցական, կրթական, ուսանողական, արուեստագիտական և հկեղեցական կազմակերպութիւններ, ընկերակցութիւններ, միութիւններ և հաստատութիւններ, որ մարդ ‘զլխու պտոյտ կ’ունենայ’։ Տակաւին, այդ ‘զլխու պտոյտը’ սաստկացնելու նախանձաւորութեամբ կարծես, իւրաքանչիւր խմբակ և հաստատութիւն իր պատօնաբարերը ունի եւ այս բերանը կամ բերանախօսը (տարօրինակ բարգութիւն և փոխարերութիւն) անհրաժեշտութիւն մըն է անհատին համար, ինչպէս նաև հաւաքականութեան։ Այս բերանախօսին հրապարակ հանած ապրանքը սպառելու հողը վերջին մտահոգութիւնն է նախաձեռնողներուն՝ որոնք նիւթական եկամուտի ակնկալութեամբ չէ որ կը բանան իրենց բերանը։ Այլ ընդհակառակն, նիւթական զահողութիւն յանձն առնելու զիտակցութեամբ ճամբար կ’ելլեն յաճախ։

Սիրն պաշտօնաթերթը չէր կրնար բացառութիւն կազմել։ Եւ հետեարար, ամ-

սական երեսունեւ երկու իր էջերէն ոմանց յատկացուիլը զիրի արուեստին, չէր կրնար առաջնորդուիլ բաժանորդներ բազմացնելու, թերթը ‘պէսպիտուն’ գարձնելու մտահոգութենէ։

Նկատի ունենալով հիմնադիրները պաշտօնաթերթին և Առաջին Համաշխարհային Պատերազմէն յետոյ աստանդական հայութեան մէջ արծարծուող սէրը հանդէպ զիրին ու զիրիքին’, կը համարձակինք մատնանիշ ընել շարժառիթ մը որ ըլլայ բխած բուն իսկ բանաստեղծական և գրական ըղանքէ։ Այսինքն ընդունիլ թէ, յանուն գրականութեան հրատարակուող որևէ թերթի մը առաջարութեանց նման, Սիրն յուսացած է Հայ Գրականութեան պարտէզին մէջ ածու մը յարդարել, ուր ժամացրուէին հայ վաւերական քերթողներ և գրագէտներ, և ուր նաև քաջալերութիւն գտնէին իրենց քերթողական և գրական տաղանդով խանդավառ նորածաղկ զրիչներ։

Աւելին։ Եղիշէ Պատրիարք Դուրեան, իր Հովուական Արքունիք հատորով, բացած էր վաւերական ակոս մը Հայ Գրականութեան կրօնական քերթողութեան անդաստանին մէջ։ Նուազ կամ բաւարար շնորհով օժտըւած ուրիշ հոգեսորականներ, նոյն անգամատանին մէջ, իրենց հոգիին քրտինքը փորձեր էին թափել, կանաչելու համար արտը իրենց հոգեղաշտին և մեր ժողովուրդին մէջ արծարծելու համար սէրը հոգեսոր իրաղութիւններու վայելքը Սուրբ Գրական զրուագներու նորաստեղծ նկարումին, քաջութիւնը՝ ապրելու իրբեք քրիստոնէական հաւատագով խանդավառ հոգիներ, համագօր՝ իրենց հայրերու հաւատարմութեան, անսնց աննկուն կամքին ու նուիրումին։

Հոգերանական վերլուծումներու հետամուտ միտքեր վեհացման (sublimation) ճիգ մը պիտի վինտեն այս բոլորին մէջ, քանի որ իրենց համար միակ իրականութիւն կազմել։

թիւնը մարմինն է իր ջիղերով, փափաքներով, ձգտումներով ու ցանկութիւններով։ Հոգիի կեանքը, ասոր ջիղերուն և ցանկութիւններուն արդիւնքիրագործումները, բատինքեան իրականութիւն մը չեն անոնց համար, այլ պատրողական վեհացումը մարմինի ջիղերուն մէջ իրենց ակը հաստատած անդիմագիր պահանջքներուն, որոնք կը վերածուին յաւերժացման, սերնդագործման և ստեղծումի ձգտումներուն։ Եւ հետեաբար, արուեստագիտներ, հերոսներ, սուրբեր և հոգիի ու մտքի սերնդագործման՝ հաւատացողներ կը դառնան անձեր՝ որոնք մարմինը և ասոր բխումները կը պատմունանեն վեհ զգացումներու, զգափարներու, գործի և կեանքի հանգերձանքով։ Այս վարդապետութիւնը սակայն, որքան ալ իր նախադրեալներուն մէջ անհաստատ և իր վերլուծումներուն մէջ խորաթափանց, ոչինչով կ'արժեհզրել իրողութիւնը հոգիի գոյութեան, ընթացքը հոգեկան աշխարհին և ասոր մէջ իրագործուած և իրագործելի վեհ ու յաւերժ զեղեցկութեանց։

Սլունի հիմնադիրներն ու գլխաւոր աշխատակիցները (Դուրեան, Բարգէն և Թորոգոմ Արքեպիսկոպոսներ), իրենց կարգին մտքի ու հոգիի պտուղներու մատուուակներ, անկասկած որ պիտի առաջնորդուէին հոգեկան շարժառիթներէ։ Անոնք պիտի ուզէին համախմբել բանաստեղծ ու գրագէտ դրիչներ կրօնական գրականութեան մը հանգիստարահին մէջ, և ապա ուղղել մտքի աչքերն անոնց՝ որոնք պիտի նուիրուէին Հայ Եկեղեցիոյ ծառայութեան, գէպի ազնւական բարձունքը իրենց իտէալին, վեհացումովէ իսկ իրենց տկար մարմիններուն, հաւատալով որ ստկարն Աստուծոյ հզօրագոյն է քան գմարզիկ, և յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զիմաստունս աշխարհիս այսորիկ։ Այս համոզումը չէր նշանակեր, անշուշտ, անտեսում այն զիտութեանց՝ որոնց նորանոր գիւտերով մարգուն քաղաքակրթութիւնը կը յառաջիմէր. և ոչ ալ արհամարհանք՝ այն բոլոր արդիւնքներուն նկատմամբ որոնցմով մարգկային ընկերութիւնը կը ջանար ինքզինք կազմակերպել և կատարելագործել։ Եկեղեցին, ի վերջոյ, աստուածային հիմնադրութեամբ գործարանաւոր հաստատութիւն մը, մար-

մին մըն է որուն բազկացուցիչ տարրերը անխուսափելի տկարութիւններով բեռնաւոր մարդեր են, այս աշխարհին մէջ գործելու սահմանուած և անոր քաղաքակրթութեան ճակատագիրը լուսաւորելու տեսակէտէն նոյնն է կոչումը Հայ Եկեղեցիին։

Այս գիտակցութեամբ, Դուրեան Եղիշէ Արքեպիսկոպոս, զիմաստորելով Ա. Յակոբեանց Միաբանութիւնը Երուսաղէմի մէջ, շարունակեց մնալ ու գործել իրու յաւերժական ուսուցիչը հոգիի ճշմարտութիւններուն։ Արմաշէն ու Պոլիսէն յետոյ, 1921ին, բացի սրբատեղեաց հանգիստավայր փառքէն, Երուսաղէմ զգեցաւ նաև պատմուճանը կրթութեան, իմացական լոյսի տարածման սպասարկողի ժառանգաւորաց Վարժարան, մինչև 1927, իր խաչանիշ թեներուն մէջ ամփակելով մատաղ հոգիներ, անոնց մտքի ու սրտի խոպան գուղձերուն մէջ ցանեց հունտը՝ զիր սիրելուն, զալամ սիրելուն։ Մէկ տարիէն (1928), կրթական այս անդաստանը կանոնաւորաբար պիտի տար իր հունճքը հոգեսոր մշակներու։ Ասոնք պիտի գառնային ոչ միայն՝ պահապաններ՝ սրբագան աւանդներու, այլ նաև՝ սպասարկողներ, նուիրեալներ՝, նոյնքան սրբազն ու կենդանի լոյսին որ կը տաքցնէ մարդուն սիրտը, կը խանդավառէ մարդուն միտքը, կը շարժէ մարդուն կամքը, և մարդը կը պայծառակերպէ իր էութեան մէջ որպէսզի ան գտնայ ‘անօթ պատուական’ աստուածային ներկայութեան։ Այս էր ճշմարիտ ըմբռնումը Քրիստոսի աշակերտ կոչուելուն։ մարդկային ընկերութեան ‘աղը’ գառնալուն։ Քրիստոսի մարմինին, Անոր հաւատքին մէջ կազմակերպուած անդամներուն, այսինքն Եկեղեցիին, և ասոր մաս կազմող Հայ Աղպին, ուսուցանողները, առաջնորդները, ‘անձնգիր հովիւնները’ նկատուելուն։ Հայ Երուսաղէմը պէտք էր դառնար Հայ Հոգիի և Հայ Մտքի վառարաններէն մին։

Հայ մտաւորականներ (հոգեսորական և աշխարհական), 1914ին, սարսափով նայեցան մահոււան աչքերուն։ և իրենց ստեղծագործ աւիշը առանց արդիւնաւորել կարենալու պառկեցան անապատներու խորը, ջախջախեցին իրենց գանկը անմարգաբնակ

քարքարուտներու մէջ, և 'արիւնով թաշախուած' ժառանգ մը կտակեցին իրենց չծնած ժառանգորդներուն։ Անձիտուած այդ սերունդին մասցորդը սակայն, տարտղնուելով Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի և Ամերիկայի մեծ ոստաններուն մէջ, վերաշինեց տաղաւարը իր հօգիին, և կրթութեան խարոյներ վառեց իր մտքին ձմեռը տաքցնելու համար։ Այսպէսով միայն, Հայ Գրականութեան ջահը անշէջ պիտի մեար, դրուելու համար ձեռքերուն մէջ յաջորդական սերունդներու։ Հեռաւոր Ամերիկաներէն մինչև Փարիզ, Աթէնք, Գահիրէ, Պէյրութ . . . Երուսաղէմ, հայ ժողովուրդը ամենուրեք կրթութեան տուներ հաստատեց, նոյն երազով գոտեպինդ, լոյսի կամարներ նետելու համար մէկէն միւսը և նոյն ոգիին ջերմութեան մէջ խանդավառելու համար գոյատեման յոյսը իր զաւակներուն։

Վերոյիշեալ իրողութեանց լոյսին մէջ աւելի կը յստակուի շարժառիթը զոր Սիոն Կրօնական և բանասիրական՝ պաշտօնաթերթը ունեցած է յատկացնելով յարկաբաժին մը 'բանաստեղծական և գրական' աշխարհներէ եկող հիւրերու։

Արդարե, երբ 'փոչուն աչքով' մ'իսկ սահինք Սիոնի երեսնամենի էջերուն մէջէն, այնտեղ ժամադրուած կը զտնենք վաւերական բանաստեղծներ։ 1927-1931, Դուրեան Պատրիարք միայն թարգմանութիւններ հրամցուցած է (առաւելապէս Վ. Հիւկոյէն և ֆրանսական քերթողներէ։ Իր այնքան հանրածանօթ Օտական քերթուածին երեւումը 1929 Յուլիսի թիւին մէջ արտատըպում մըն է Թարգմանչաց սուրբերու յիշատակին)։ Նմանապէս Թորգոմ Եպո։ Գուշակեան (Առաջնորդ Եղիպատոսի Հայոց) կրօնական-խորհրդածական իր զրուածքներու կարգին քերթուածներ թարգմանած է Ալֆրէտ Տը Միւսէէ, Ալելլի Բրիւտումէ, Ժան Էքարէ, Լը Քօնթ Տը Լիլէ, Բոլ Վէրլէնէ և այլ քերթողներէ, մասնաւորաբար ընտրելով քերթուածներ՝ ուր Աստուածաշնչական դէմքերու և երեսոյթներու, իմաստասիրական և բարյագիտական խորքի վրայ բանուած գաղափարներու խորհրդապաշտ վերակերտումն է տիրական։ Փարիզին Եպո։ Տրապիզոնի (Թիւրքիոյ Հայոց այժմու Սըրազան Պատրիարքը) ունի թարգ-

մանութիւն մը Ռոզմանտ Ժէրարէ — «Զըկնորս Մարթէնի Աւանդավէպը» — երկրորդ մը Շէլլի երկարաշունչ, ոսմանթիք քերթւածներէն, «Արտոյտի մը» ուղղեալ, և «Օրհնութիւնդ, Հայր» վերտառութեամբ քերթուած մը, Եղիշէ Պատրիարք Դուրեանին ձօնուած, ծննդեան եօթանասնամեակին առիթով՝ Նոյն ըրջանին, իրենց բաժինը բերած են, աշխարհական քերթողներէն մեծանունն Վահան Թէքէեան, ինչպէս նաև Արսէն Երկաթ, որ յարատե կանոնաւորւթեամբ աշխատակցող մը մեաց Սիոնի, Վ. Մալէզեան, Ակիւլինէ, Լեռն Էսաճանեան։ Առաջին տարիներուն, և մինչև 1933, գրեթէ ոչ մէկ գրական յօդուած տպագրուած է Սիոնի մէջ, արձակ գրականութեան որևէ մէկ մարզէն առնուած։ Խոկ 1932-1939 տարիները կարելի է նկատել երկրորդ ըրջան մը, խրբագրապետութեամբ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի։ Այս ըրջանին, գրական բաժինը հետզհետէ ստացած է յստակ և հաստատուն նկարագիր մը, արդարացնելու չափ իր գոյութիւնը պաշտօնաթերթին մէջ։ Վահան Թէքէեանին և Արսէն Երկաթի երկու կողմերը կուգան շարուիլ Վահէ-Վահեան, Հրաչ Քաջարենց, Եղուարդ Գոլանճեան, Ն. Կատար, Ս. Եափուճեան, Մ. Ա. Կիւրճեան և ուրիշներ։ Յակոր Օշական, ինքնատպօրէն գրագէտ և Հայ Գրականութեան ատրուշանին քրմօրէն քննադատ միտքը, 1934էն սկսեալ, կը բրգանայ Սիոնի էջերէն։ Իր ձեռագրին պէս, տպագրական մանր գիրերով՝ տեղութեան հակընդդէմ, խտացնելու համար տարածութիւնը էջերուն։ Թորգոմ պատրիարքի հրաւերով, ժառանգաւորաց վարժարանին մէջ իրեն կը տրուի Հայ Գրականութեան ամպիոնը։ Աւելի ճիշդ է ըսիէ՝ իր ներկայութեամբն խոկ ինք կը հաստատէ Հայ Գրականութեան ամպիոնը, մինչև անգամ հողաթափով, զոր իրեն յատկացուած գրասենեակէն ոտքը անցուցած կը բարձրանար վարժարանի սանդուխներէն։ Թիւտէր թէ, վարժարանի ուսունողները և վանքի վարդապետները իր խօսքը ինչպէս իր գիրը կը փնտոէին գասարաններու մէջ ու Սիոնի էջերէն։ Կարծես ուսուցանելու նոյն սէրէն բանուած, զիրի կախարգանքին կը յանձնէր իր զգայութիւնները ընտանիքով Երուսաղէմ հաստատուելու առիթով և բացուելով հայ աւանդութեանց շտեմարա-

նին։ Այսպէս կ'ունենանք իր զրիչէն շարքը Ասպիմական զգայութիւններու, երբ Պղտիկ Են (Նարեկի խորհուրդէն թելազրուած լիշտատկներ մանկութենէն, տունէն, ծննդարերքէն), Հրաբր, Այն Օրերուն (տրամասութիւն և խորհուրդ Աստուածառունչի թարգմանութեան 1500 ամեակին մէջէն յայտնըով), Երեմն, Մոսցուած Բաներ, Տիգրան Եւկար (այս վերջինները զրական վերլուծումներ և ընդհանրացումներ են): Գրագէտ Յ. Օչականի հետ, Ախոնի էջերուն մէջ իր անունին արժանի տեղը կը զրաւէ իմաստաէր Շահան Պէրպէրեան։ Իրմով, զրական նոր սեռ մը կը մշակուի։ Իմաստաիշրական հարցերու ներկայացումը խորհրդապատճու ու կրօնական մթնոլորտի մը մէջէն։ Ճեսով իմաստասիրական, Էարանական, խոկ խորքով մարդուն լինելութեան, արդի բառով՝ մարդուն խտէալին հետ կապուած հարցերու վերլուծումը, թափանցումը, և կրօնա - իմաստասիրական ներդաշնակութեան մը մէջ վեր-կառուցումը, վերածաղկումը, նորաստեղծումը։ Այս նիւթերուն մերձեցման և մշակման եղանակը ինքնին ոճ մըն է, առաջին անգամ կիրարկուող Հայ Գրականութեան մէջ, թէե իրբն յդացք այդ եղանակը իրագործուած կը գտնինք Պղտատօնի մօտ, Ասկրատի բերնով, ասոր աշակերտներուն և ընդդիմախօսներուն խօսսակցութեան ճամրով, «Ճշմարտութիւնը գտնելու» իրբն պարզագոյն և ապահովագոյն մեթոս։ Շահան Պէրպէրեանի արամաւութիւններու տարքի շիալովի շահական վայրի մը Արուեստի, Գեղեցիկ, Ներշնչումի, Ժամանակի, Պատմութեան, Սովորութիւններու, Ստեղծումի, Ոյժի, Լոյսի, Արբոյ, Կեանքի, Ներդաշնակութեան՝ ընդմէջ Արուեստը և կեանքը բազկացնող Անցեալ, Ներկայ և Ապագայ տարբերուն, ինչպէս ձայններու ներդաշնութիւնը երաժշտութեան մէջ։ Կարդացէք պարզ ու խորունկ և յատկանշականօրէն համագրիչ հետեւեալ կոչումները իմացական ու հօգեկան կոչունքներուն — Հոգեզալուս կամ Խորհուրդ Ներքնչման եւ Մխիթարուրեան. Ամանոր կամ Խորհուրդ Կեանքին. Սուրբ Ծնունդ կամ Խորհուրդ Նորաւեղծման. Պայծառակեր-

ողուրիւն կամ Խորհուրդ Գեղեցկուրեան. Աւազ Հինգաբրի կամ Խորհուրդ Խմասի եւ Հաղորդուրեան. Խաչվերաց կամ Խորհուրդ Տառապանիքի. Երկու Ժամանակիներ։

Թորգոմ Պատրիարք, մինչ և նախօրեակը իր մահուան, 1939 Փետր., 10. չարունակեց իր թարգմանութիւնները Քրանսոցի քերթողներէ և յօրինեց կարգ մը գուղարիկ քերթուածներ իր նախընտրած եռավանկ հատածներով։ Ասոնցմէ վերջինը՝ «Անձինք Խութեալք», Արբոց Յակոբեանց Տան ուսձացումին դիմաց ուրախութեամբ և յայսով լեցուող բայց թարիծոտ որտի մը մազթերգն է. —

«Մեր այ թիր հասաւ եեսուն եւ եօրի։

Ասուած իմ, սիրս ինչպէս դեպի թեզ կը յօրդի։ Բայց թիւն ի՞նչ կ'արժէ, Տէր, ընունէ որ ոռակին նորայ փայրը մեր մէջ, սրբութան զինջ ուկին։

Նոյն ոգիի արտայայտութիւնը կը զըտնենք իր միւս քերթուածներուն մէջ. «Ազգօթք Վասն Հայ Եկեղեցւոյ» և «Ասուք իր Հոգւոյն Հետա» (Խորէն Ա. Կաթողիկոսի և Կիլիկիայ Աթոռակից Կաթողիկոսի՝ Բարգէն Վեհափառի յիշատակին նուիրուած), «Զարթուցեալքս», «Եկոււր, Վիշտ», «Ցնծան Թարոր և Հերմոն», «Աղ Յոյու», «Ասոււածածնի Մատուցուած», «Աղօթք», «Գիրքերու Գիրքին» (վերջին չորսը՝ Արտոյ ծածկանուով)։

Երբորդ շրջան մը կորելի է նկատել 1940-1956 տարիներու կամարը զայն բաժնելով երկու քի, 1940-1946 և 1947-1956։ Առաջին վեցամետկին, Ամբազրական Մարմին մը կանոնաւորաբար ծրագրեց Սիրոնի բովանդակութիւնը, ջանալով զայն պահել նախորդող շրջանի կենսունակ բարձրութեան վրայ։ Ամբազրական Մարմինը կը բազկանար Եղիշէ Վրդ. Տէրտէրեանէ (Տեսուչ Ժամանականի և ապա Լուսարարապետ), Սիրովրէ Վրդ. Մանուկեանէ (Տեսուչ Ս. Թարգմանչաց վարժարանի) և Թորգոմ Վրդ. Մանուկեանէ (Տեսուչ Տպարանի), որոնք իրենց խորհրդական առին Յ. Օշականն ու Շահան Պէրպէրեանը՝ զաստիարակներ Ժառանշականօրէն համագրիչ հետեւեալ կոչումները իմացական ու հօգեկան կոչունքներուն — Հոգեզալուս կամ Խորհուրդ Ներքնչման եւ Մխիթարուրեան. Ամանոր կամ Խորհուրդ Կեանքին. Սուրբ Ծնունդ կամ Խորհուրդ Նորաւեղծման. Պայծառակեր-

նալ երկրէն) և օրուան Տպարանի տեսչին զրայ, որոնք հակառակ տնտեսական զըժուարութիւններու և աշխատակիցներու պակասին, չընդհատեցին Սիոնի յաջորդական կամ միացեալ թիւերու հրատարակումը:

Աւելորդ չէ մատնանշել թէ 1930 էն սկսեալ Սիոն քաջալեր հանդիսացաւ նորածաղկ գրիչներու, մամնաւորաբար անոնց՝ որոնք անդամ էին Սրբոց Յակոբիանց Միաբանութեան իրրեւ ուսանող կամ ձեռնադրեալ հոգեորական, և կամ որոնք կ'ապրէին այն օրերու Պաղեստինի չըջանակին մէջ։ Ժառանգաւորաց վարժարանէն չըջանաւարտ, վարդապետ ձեռնադրուած և եպիսկոպոս օծուած աշակերտներէն տասնեւեօթ հոգիներ բանտառեղծութիւն գրել կամ թարգմանել փորձած են։ Ասոնցմէ ոմանք յայտնաբերած են ընտանի խառնուածք մը բանաստեղծական չնորհէ, զոր հունտի մը պէս կրած են իրենց մէջ ու փորձած են զայն սնուցանել և իրրեւ չըացուած ծաղիկ արեին ու հոգին հանել։ Բանաստեղծական չնորհի ճառագայթներու կը հանդիպինք քերթուածներու մէջ, 1934—1946 տարիներէն, որոնք ստորագրուած են Աշտիշատ, Եղիպարգ, Շէն-Մահ, Տէրունի, Ցաւակ ծածկանուններով։ Վերջին տասնամեւակին ասոնց վրայ աւելցած են Գ. Մուշենց, Օշական Արեգայ, Զաւէն Ա. Չ., Պ. Ցունապ և ուրիշներ։ Մեծ մահերու և հանդիսական առիթներու ներշնչեալներու խումբ մը կարելի է համարել Աւելում, Հայկազուն Վ.րգ., Ցուգսէփ Սրէ., Նոր Արեգայ, Շաւարչ Վ.րգ., Պ. Հայկազն, ստորագրութիւնները։

Վանքի չըջափակէն գուրս, Երուսալէմի և չըջակայքի մէջ բնակող թթվուուն հոգիներ ևս իրենց առաջին քայլերուն զօրավիգ գտան ընդունուելով Սիոնի էջերէն ներս։ Թէս փոքրիկ թիւ մը կը ներկայացնեն ասոնք, բայց յարատեօրէն գիտցան տաքցնել իրենց սիրուը կեանքի ցուրտին ու այլումին զիմաց։ Ասոնցմէ ոմանք հատորներու մէջ իրենց քերթուածները համախմբելու արգար երանութիւնն իսկ ունեցան։ Մինչ Մ. Մահուկեան, Գ. Ճինիվիլեան, Ն. Չափատարեան, իրենց քերթուածները հատորիւ բախտին կը սպասեն, Զաւէն Եկէնեան լոյս կ'ընծայէ երկու հատոր Կեանքին Հետ և Մարզը Վեր Ասլերէն։ Վահրամ

Մավեան կը հրձուեցնէ իր Յամեցող Վերադրձով. և Անել կամարներ կը կապէ երեք հատորներով — Մուր Ցաւեր, Տեսիլ Գինովի և Պարը Ցոյսին։ Իսկ հոգեորականներէն, հատորի մէջ քերթուածներ ամփոփած ունին Եղիպարգ (Մազգաղինեն Մեղրամօնէ, Խորակման Գիւերներ, Անցուղը, Ակեղդամա) և Աշտիշատ (Միսիլի Տաւիլ)։

Երուսալէմին գուրս գտնուող քերթողներէն Մատի Աթմանեան, Մ. Իշխան, Արա Զովեան, Վահրամ Սօֆիեան, նաև Հայառտանի արգի գրողներէն հոյլ մը, իրենց մտքի, սրտի և հայրենասիրութեան խորհուրդները բացին Սիոնի էջերուն, այս չըջանին։

Արձակ գրականութեան մարզին մէջ, այս երրորդ չըջանին Շահան Պէրպէրեանէն աւելի Յ. Օշական իր ուսերուն առած է բեռը, իր Համապատեր Արեւմտահայ Գրականութեան կոթողական ձեռագիր աշխատանքն տպութերով և շարունակելով չարքը Մոռցուած բաներու, Կեանքին հետ, Աղաշեմ զանիփոխիսելի, Երեմիա Զելիքի, Սերմենցան, Վկայութիւններ, Միսէ և Սիրք . . .

Արձակ գրականութեան մարզին մէջ կարելի է գասիլ Եղիպարգի կրօնական թեմայով յօդուածները, որոնք աւելի են քան պարզ քարոզներ, նաև այն էջերը որոնք վերնազրուած են Ժամանակին հետ, Օտարականը, Նորէն կը հնչեն զանգակները, Մրէ խօսիեր։ Իսկ Թորգոմ Արեգայ փորձած է գրական վերլուծման ճամբով թափանցել Հայ Եկեղեցւոյ ժամերգութեանց գեղեցկութեան (Խաղաղական Ժամ, Գիւերային Ժամերգութեան Աղօրները) և էջմիածնի խորհուրդին (Պատմութեան Զայներէն)։ Գրական էջ մըն է Գուրոր հով ու անձրեւ, Մ. Մ. ստորագրութեամբ։


* * *

Հպանցիկ ակնարկով մը, հազիւ կարելի եղաւ հաւատաել միայն, թէ Սիոն պաշտօնաթիւները իր Բանասիրական և Գրական բաժններուն չնորհիւ յաջողած է մէկտեղել Հայ քերթողներ և գրագէտ գէմքեր։ Քաջալեր հանդիսած է նոր տաղանդներու ծլարձակումին։ Երուսալէմի չըջանակին 26 գրիչներու մելան և թուղթ հայթայթած է հրաւիրելով զանոնք իմացական կոչունքի, որոնցմէ 16ը աշակերտներ և անդամներ ե-

զած են Սրբոց Յակոբեանց Միարանութեան . նպաստած է Հայ քրականութեան տարածման ու վայելման մասնաւորաբար Պաղեստինի ըրջանակին մէջ, և կարելի դարձուցած է հատորումը քերթողական և զրական արդիւնքներու, որոնք թէ հեռու են՝ բացասիկ գագաթներ՝ նկատուելու բայց անվարտ կրնան կենալ մօտիկը Սփիւռքի ուրիշ ոստաններէն յայտնուող աստղերու:

Դուրեան պատրիարքի Հովուական Մրինգով յարդարուած անդաստանը, զըժրախտաբար, կը մնայ լքուած: Յուսալի է որ Երուսաղէմ և մանաւանդ Սրբոց Յակարեանց մայրավանքը դառնան պարաբռ հոգ մը, հարուստ՝ պատմական, աւանդուկան, առառուածաշնչական, հոգեւոր և իշմացական տարբաղադրութիւններով, որպէսզի արդար ակնկալութիւննը ունենանք Հայ գրականութեան մէջ կրօնական բանաստեղծութեան մշակումին: Կրօնական նիւթեր, արձակ կամ քերթողական զրականութեան օրենք մէկ սեռին մէջ, սքանչելի ատաղձներ կրնան հայթայթել ստեղծումի: Հազիւ ուրախացնող աստիճանով մը միւայն, հոգեկան և իշմացական այլ մարզանքը զգալի է Սինէի երեսնամեայ էջերէն: Սրբոց Յակարեանց Միարանութեան սարկաւագներուն և վարդապետներուն կը մնայ Սինէի յիսնամեակի համար պատրաստել կոչունքի սեղան մը, զոր զարդարել կարենան համագամներով մտքի, որտի, հոգիի դաշտերէն միախառնուած, մարզկային կեանքի ուրախութեան եւ արտօնութեան բարձունքներէն ու խորութիւններէն քաղուած, և հետեւարար կարսուզը յաւերժին, ներկայութեամբը մարդուն խորունկ ըդձանքներուն և սէրերուն:

ԹԱՐԳԱՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՓՈՔՐ ԲԱՅՑ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹ ՄԸ

Ո՞վ կրնայ մտածել թէ Ամերիկայի հեռաւոր մէկ անկիւնը Կալիֆորնիայ Սաքրամէնթօ քաղաքին մէջ կայ հազիւ 30 տնուոր Հայ զաղութ մը, որ իր ազգային և եկեղեցական կազմակերպութեամբ կրնայ օրինակ հանգիստանալ Սփիւռքի շատ մը Հայ զաղութներուն: Եսյն թիւը ունեցող Ամերիկանայ ուրիշ զաղութները՝ զուրկ եկեղեցին եւ ազգային կազմակերպութիւններէ, բռնած են ձուլման ճամբան: Սաքրամէնթոյի հայոց ճիգերով մարմին կ'առնէ Հայուն փրկարար լաստը, Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ խոնարհ մէկ յարկը: Կը գնուի հին սրահ մը, զոր սակայն Հայուն յարատեւող ճիգերն ու հաւատքը կը վերածին անհաւատալիօրէն նոր ու սիրուն Եկեղեցիի մը: Բանուորները զործին: Հայ ճարտարապետ մը՝ Սարգիս Շիրինեան, իր չուրջ հաւաքած զաղութին խումբ մը պատուական տարեց ազգայինները և ամերիկածին երիտասարդները, ամէն օր քիչ մը, իրենց աշխատանքին պահերէն վերջ, հնօրեայ այդ սրահը կը կերպարանափոխեն Եկեղեցիի մը: Յիշոյ Եկեղեցւոյ կողքին նոյն ձեռվ կը բարձրանայ զաղութին ի հիմանէ նոր և շատ զողտրիկ սրահը, ուր ամէն կիրակի ու շարթուան զբեթէ բոլոր օրերը պիտի հաւաքուին հեռաւոր այս զաղութի հայորդիները, ամէն օր բան մը աւելիով նորոգելու իրենց ժառանգութիւննէն, նախնեաց հաւատքէն ու աւանդութիւններէն, ամէն օր քիչ մը աւելիով ամրապնդելու իրենց հոգին ընդգէմ այլասերող ու ապազգայնացնող օտարերկրեայ պայմաններուն:

Սրտի ճմլումով միայն կրնաս տեսնել թէ ինչպէս Սաքրամէնթոյէն շատ աւելի մեծ թիւով, մինչև 5-600 անձերով Հայ զաղութներ, կը մնան անկազմակերպ, զուրկ եկեղեցական և ազգային վարչութիւններէ:

Ու տակաւին այս բոլորին վրայ տարանջառուած այս բեկորներն իսկ իրարուդէմ զինող, լարող, մեր հատուածական պայքարները, որոնց աւերիչ թաթը ապականած է, կազմակերպուած կամ անկազ-

մակերպ գաղութներու մինչև յետին տնկիւնները, անհամեմատ լայնցնելով այս թշուառ գաղութներու տագնապն ու յուսահատութիւնը:

Սաքրամէնթոյի Հայ գաղութը հզօր է սակայն իր բոլոր հատուածներու համերաշխ գործունէութեամբ: Գաղութի զանազան կազմակերպութիւնները (Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դաս, Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն (Ա. Ը. Օ.), Եկեղեցասէր Տիկնանց Միութիւն, Կիրակինօրեայ Դպրոց, եալին), բոլորն ի մի խմբուած են Հայց. Եկեղեցւոյ փրկարար նոյն հոգանիբն տակ. կը ջանան ու կը նիւթեն ի հաշիւ Եկեղեցական ու ազգային նոյն իսէւալներուն, ստեղծելով Եկեղեցական ու ազգային առողջ միութեան մը շինարար բարիքները:

Այս առթիւ գնահատանքով կարելի է յիշել տեղեւոյն այցելու Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Պետրոս Քհնյ. Գասուրձեան, որ լայն չափով կազմակերպիչը եղած է այս գաղութին ու անոր հոգեւոր և ազգային գիտակցութեան:

Գնահատանքով պէտք է յիշել Գալիքորնիոյ Առաջնօրդարանն ու իր Ա. Առաջնօրդները, որոնք բերած են իրենց խնամքն ու հոգածութիւնը, փոքրիկ այս գաղութի կազմակերպման գործին մէջ:

Գնահատանքով կարելի է յիշել տեղեւոյն ազգայիններէն Գուրգէն Արկ. Վարդանեանը, գիտակից ու պատուական Հայ մը որ իր հայեցի զարգացումով և Եկեղեցական առողջ ոգիով լաւագոյն զեկավար մը հանդիսացած է գաղութի անդամներուն:

Գնահատանքով պէտք է յիշել, տեղեւոյն ամերիկածին հայ Երիտասարդները, որոնք սակայն ազգային և Եկեղեցական առողջ նախանձախնդրութեամբ զիտցած են վառ և կենդանի պահել գաղութի Եկեղեցական ու ազգային կազմակերպութիւնը:

Ասկէ անդին խօսքը կուտանք տեղական թղթակիցի մը՝ ուր յարգելի պարոնը մեր վերի խորհրդածութիւնները արդարացնող իր ականատեսի վկայութիւնները կուտայ:

Կ. Վ. Գ.

Սաքրամէնթոյի հայ համայնքը թէն թիւով փոքր, բայց ներկայիս գործունեայ

և յարգուած գաղութ մըն է: Այս ալ շնորհիւ քաղաքին մէջ երեք տարիէ ի վեր հիմնը առաջ Հայց. Ա. Յակոբ Եկեղեցւոյ շուրջ հաւաքուած են և հնագնհետէ կը հաւաքուին քաղաքիս Հայերը առանց կուտակցական և նոյն իսկ գաւանական խարութեանց: Աւրախուլի է նշել թէ Եկեղեցւոյ վարչութիւնը ընդհանրապէս Եկեղեցւոյ նույիրուած երիտասարդ ուժիրուծն է: Եկեղեցին ուսնի իր յարմարութիւնը՝ բաղկացած 7 անձերէ: Աւնի իր Դպրաց գասը՝ զօր նույիրումով կը վարէ Տիկ. Արք Յազնանէսեան-Սփէնէլլը: Աւնի իր կիրակինօրեայ դպրոցը, որուն վարիչն է նոյնպէս իր գործին նույիրուած Տիկ. Հելէն Թաշճեան: Աւնի նաև հայերէնի գիշերային դպրոց փոքրերու և չափահաններու համար:

Բլլալով փոքր համայնք մը Սաքրամէնթոն տակաւին ի վիճակի չէ պահելու իր մեայուն Հովիւր: Օքլէնտի Հոգեւոր Հովիւր Տ. Պետրոս Քհնյ. Գասուրձեան կը հոգուէ նաև Սաքրամէնթոյի թէմը՝ ընկելով իր լաւագոյնը անոր բարգաւաճութեան համար:

Սաքրամէնթոյի հայ համայնքին մէջ ամենէն հին և զործունեայ կազմակերպութիւնն է եղած Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը որ հիմնուած է ասկէ աւելի քան քառորդ գար առաջ: Երկար տաեն երբ տակաւին Սաքրամէնթոյի Հայութիւնը զուրկ էր սեպհական Եկեղեցւոյ չէնքէն՝ Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնն էր որ կը պահէր Եկեղեցւոյ ոգին և ուրը այս համայնքին մէջ: Սեպհական Եկեղեցւոյ չէնք ունենալէ յիտոյ այս Միութիւնը զօրացուց իր գործունէութիւնը աւելի եռանգով և աւելի անդամներով:

Թանի մը տարիէ ի վեր Սաքրամէնթոյի և ըրջակայքի Հայութեան համար բացացանիկ և սպասուած գէպք մըն է Տիկնանց Միութեան տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսը: Պարահանդէսը հայկական-ժողովրդական պարերէ կը բաղկանայ, որուն համար մասնաւոր նուագախումբ մը կը հըրաւիրուի գուրսէն: Եկեղեցասիրաց Տիկնանց Միութեան ժրաջան անդամները արդէն գործի լծուած էին ամիս մը առաջ: Անսնք ջանացին իրենց լաւագոյնը ընկել յաջողութեանը համար այս երեկոյթին որ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ Բ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՃՈՒՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Հետևեալ երեք կոռուսերը կը քաղենք Մայր
Աթոռոյ պաշտօնական ամսագիր Էջմիածինի 1956
Նոյեմբեր-Դեկտեմբեր թիւէն, երուսաղմի հար-
ցերուն հետ ունեցած իրենց պաշտօնական կա-
պակցութեան համար։ Խմբ. ՍՄԻՒ

Գերազոյն Հոգեւոր Խորհուրդը իր սոյն
նիստում (Նոյեմ. 9ի) նորից զբաղուց Երու-
սաղմի խնդրով, այս հարցի վերաբերեալ
նոր փաստարդերի եւ նախակարական նիւ-
րերի նիման վրայ։

Նորին Ս. Օծուրիւն Վեհափառ Հայրա-
պետը Գերազ. Հոգ. Խորհրդի այս նիստում
յայնեց այն մասին, որ ինքը Տ. Եղիշէ Արք-
եպիսկոպոսի հետ ունեցած խօսակցութեան
ընթացքում Նոյեմբերի 4ին թելադրել է նրան,
Հայ Եկեղեցու ընդհանուր ժամերից ելնելով,
հրաժարուել Ս. Արքունու ունեցած իր պա-
տուններից եւ չվերադառնալ առհասարակ
Երուսաղմի։

Տ. Եղիշէ Արքեպաս.ը հիմնականում հա-
մամիտ է եղել Վեհափառ Հայրապետի թե-
լադրութեան եւ խոսացել է որու ժամա-
նակի համար հաւուել ամեն գործից։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 25)

ԼՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ Ա. ԷՋՄԻԱԾՈՒՆԵՐ

Նոյեմբեր 5ին, Մելուշաբերի, առաջօ-
եան ժամը 7ին, Մայր Արքունից դեպի Մոս-
կուա մեկնեցին ... Տ. Եղիշէ Արքեպաս. Տեր-
երեանը եւ Շահէ Վ.րդ. Անկմեանը: ...
Հիւրերը երեք որ Մոսկուա մեալուց յիսոյ
Նոյեմբերի 9ին նախապարհուղեցին դեպի
Ցիւրիս։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 27)

ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻ ԴԻՒԱՆԱՏՈՒՆԵՐ

Վերջին Սփիւրէի մի շաբէ թերեւում
եւեւաց մի հաղորդագրուրիւն այն մասին,
որ Նոյեմբերի 2ին Մայր Արքու Ս. Էջմիած-
ինի Լիզպոն են մեկնած Գերազուրի Տ. Եղիշէ
Արքեպաս, Տերերեանը եւ Հոգեւորի Տ. Շահէ
Վ.րդ. Անկմեանը՝ յատելուք առաջելութեամբ։

Այս առքիւ Մայր Արքուի Դիւանատունը
լիազօրուած է պատօնապես յայտարակելու,
որ Գերազ. Տ. Եղիշէ Արքեպաս. Տերերեանը
եւ Հոգ. Տ. Շահէ Վ.րդ. Անկմեանը Նոյեմ-
բերի 9ին Մոսկուայից մեկնել հետուից յիսոյ
ունեցել ոչ մի հարցի կապակցութեամբ՝ յա-
նուն Վ.են. Հայրապետի բանակցութիւններ
վարելու Լիզպոնում կամ այլուր։

(Էջմիածին 1956, Նոյ.-Դեկ., էջ 122)

5 Յունիւար 1956 թ.

Էջմիածին

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՈՒԻ

Հայկական ըլլալով մէկտեղ հետզհետէ մի-
ջազգային երեւոյթ մը կը ստանայ։

Արդէն ճաշկերոյթէն շաբաթ մը առաջ
տեղական թերթերը, ուստիսն և թելիվի-
ժընը սկսան ծանուցանել գալիք հայկական
ճաշկերոյթ - պարահանդէսը։ Թերթերը ար-
պեցին և թելիվիժընն ալ ցոյց պուաւ հայ
տիկիններու պատկերները ազգային տա-
րազներով։ Եւ ճաշկերոյթն անցաւ յաջող՝
ամէն կերպով։ Արդէն ժամը 6ին բազմու-
թիւնը սկսաւ գալ ճաշասրահը՝ ճաշակելու
հայկական համեղ կերակուրները։ Տիկին-
ներ և օրիորդներ ազգային գոյնզգոյն տա-
րազներով՝ կը սպասարկէին ժողովուրդին։
Զարմանալին այն է որ Հայերէ շատ աւելի
ստարներ էին որ եկան ո՛չ միայն ճաշա-
կելու հայկական կերակուրները, այլ նաև
անոնցմէ շատ մեացին մինչև վիրջ և Հայերէ
աւելի մեծ հռանդով մասնակցեցան հայ ժո-

ղովրդական պարերուն։ Իրապէս հաճելի ե-
րեւոյթ էր տեսնել աւելի քան 50 պարող-
ներ մէկ անգամէն հսկայ չուրջապարի մը
մէջ՝ կենսուրախ և թրգոսուն՝ թխահեր ու
խարտեաչ խառնուած իրար։

Եկեղեցասէր Տիկինաց Միութիւնը այս
առթիւ կերակրեց աւելի քան 400 անձեր
և ժամը 9ին արդէն կերակուրներն սպա-
ռած էին։ Սսիկա անշուշտ գիւրին գործ չէ։
Կը պահանջէ ծանր աշխատանք։ Բայց ու-
րովհետեւ այդ աշխատանքը մեր սուրբ ու
միրելի Եկեղեցիին համար է՝ ամէն տանին
անոնք սիրով յանձն կ'առնեն զայն։

Վստահ եմ թէ Մաքրամէնթոյի Հայու-
թեան զգացումներուն թարգմանն եղած
պիտի ըլլամ հրապարակաւ յայտնելով մեր
կիացումն ու գնահատանքը Եկեղեցասէր
Միութեան ժրածան անդամներուն իրենց
օգտաշատ գործունէութեան համար։

ԵՐԵՍՈՒԽՆ ՏԱՐԻ ԸԹԱԶ

ՄԱՆՈՅ. — Եթե այսուիկ Սի՛նի ամէն բիւի մէջ շահեկան կօր մը պիտի գնեցն, բաղելով պաշտօնաքրերին եւեսուն տարի առաջուան համապատասխան բիւէն: Յաջորդ եւկու կորոները առնուած են Սի՛նի առաջին առուան Յուն-ուար և Փետրուարի ամիսներէն:

Գ-ՊՐՈՑՍԱԿՈ. Ե. Ա. Բ Գ Ի Ւ Ե Ք Է

Ժառանձրաւացա Վարժարանին 1925-26 դպրո-ցական շրջանը նշանակալից եղաւ իր արդինքավ.

Ժառանձր. Վարժարանը այս շրջանին ունեցաւ չորս դասարան: Եւ իդելագէնիեան բարերարութեան շնորհի զորրորդ դասարանը եղած էր Ընծայարան: 1926 Հուն. 3. Կիրակի առուու, Սրբոց Յակովեանց Տաճարին մէջ, Ընծայարանի ուսուանադներ Աւագ Սար-կաւագութեան աստիճանին կոչուեցան Ամեն. Տ-եղիշէ Ս. Պատրիարքի ծեռնազրութեամբ.

Ընծայարանի զատերը ստանձնած է ուսուցչական մարմին մը. որուն զրուխն է Ամեն. Ս. Պատ-րիարք Հայրը. որ կ'աւանդէ այս շրջանին Պատմ. Հայ եւ օսաւ մատենութեանց, եւ Հայերեակիտական նիւթե: Բարգէն Սրբազն կ'աւանդէ չին եւ Նոր հայերէն. իւ Պատմ նոր հոգեբէկի. եւ Ներածու-թիւն Սուրբ Գրոց. Հայց. եւ Ծնդհանուր Եկեղեցւոյ սյաւանութիւն: Ամերիկացի Հայր Պրիմէն՝ անզի-րէն լիզու եւ զրականութիւնը Ֆրանսացի Մ. Պա-սան, Քրանիսիէն, Երուսալէմացի Մ. Ֆարան՝ ա-րաբերէն. Տիար Լ. Զիլինկիրեան՝ Եկեղեցական ե-րաժշտութիւնը Նորբնձայ Սարկաւագներն ութը հոգի են եւ իրենց անուններն են ծեռնազրութեան կար-զով. Կարապէս Զարգեսան, Խորգի Մանուկեան, Հայկ Արքանամեան, Ազնիկ Վրանիսեան, Գրիգոր Քաօփմ-եան, Ներւէս Տէր-Յակոբեան, Արքիան Մանուկեան, Մատրէս Գուլյամեան, ամէնքն ալ երիտասարդ, ա-մէնքն ալ հայկական հարածանքնի եւ տառապանքնի մէջէն անցած. զիտակից իրենց ազգին եւ Եկեղե-ցւոյն վիճակին, եւ օժտուած ծառայութեան եր-կիւզած ոգիով:

Ընծայարանի ութը Սարկաւագներուն հետ պէտք է յիշէլ, մեր միւս երեր Սարկաւագներու ախուն-ներն ալ. որոնք զարծեալ ժառանձր. Վարժարանի 1924-25 զարցական տարիէն, մասնաւոր խնամքի տակ առաջ տարին եւ զեր կը տանին իրենց ու-սանուութիւնը, եւ նույրուեցան Եկեղեցւոյ ծառա-յութեան:

Այս երեր Սարկաւագունք են. ծեռնազրութեան կարգով, Նորայր Պարտեան, Ալբրանիկ Փիլալիլեան, Ներւէս Տէր-Յակոբեան: Նորայր եւ Ներւէս Սարկաւագները, թէ՛ կ'ուսանին այժմ եւ թէ՛ ժառանձր. Վարժարանի եւ Երուսալէմացիներու զարցին մէջ կ'ուսուցաննեն:

(Սի՛ն, 1927 Յունաւար, էջ 30)

ՕՐՄԱՆԵԽԱՆԻ ԿԱՐՇՈՒՐԸ

1866 — 1877 ի Սի՛նի մասին

Օրմանեան Սրբազնի, իր Ազգապատմին Գ-րդ եւ վերջին մասին մէջ (§ 2789), որ մամուլի տակ է. Խայի պատրիարքի շանրերով Ս. Յակոբայ տպա-րանին վերակազմութիւնը պատմելէ Խորը, կ'ըսէ.

«Տպարանի տեսազութիւնը յանձնուեցաւ Սու-լալանեանի, եւ անոր ու անոր յաջորդող տեսուչ-ներուն ձեռքով, Խայիի 20 տարիներուն մէջ. մեծ ու պատմիկ առաջին կամ կրկնուած տպագրութիւն-ներէն, **169** հրատարակութիւնն կը հաջուուի Երու-սադէմի տպարանէն Ելած. զլիաւորապէս Եկեղեցա-կան զիրերը; Նախնեաց մատենազրութիւններ եւ դպրոցական դպասգրբերը (Նու. 41-51):

«Երուսադէմի տպարանին հրատարակութեանց կարգին յանուկ կերպով նշանակելի է **Սի՛ն** ամսա-գիրը, 16 երեսէ բազկացեալ. մեծութածալ երկիշեան պրակներով, որոց առաջինը լոյս տեսաւ 1866 Յուն-ուարին, եւ որ 12 տարի կեանը ունեցաւ: Սրո-սութիւնը ստացուեցաւ կառավարիչ հզգէթ փաշայի միջնորդութեամբ. իսկ խմբազրութիւնը դարձեալ Սա-ւալանեանի յանձնուեցաւ, որ զարց զայն զրիթէ միայնակ. ուսկից եսքը գործ անցաւ Մուրաստեանի մեռքը իր հասցուցած աշակերտներով (Նու. 52-54): «**Սի՛նը** նմանաբրինակ հանդէսներէ աւելի բան մը չէ եղած. եւ որ եւն է յայունի չէ թէ ո՞ր շրջանակի եւ ո՞ր զամակարգի սամանուած է, զի իմաստու-սիրական եւ կրօնական ուսումնասիրութեանց նետ աշխարհաւական շարագրութիւններ կը յաճախինեն»:

«Նշխարէ ազգային պատմութեան մակարդին ներ-քեւ Երուսադէմի զրազիրները շատ աւելի նիւթ կրնային մատակարաբել բան որչափ ինչ օգտուած է Սաւալանեան: իսկ իւր յաջորդները զայն բնաւ իսկ զանց ըրած են. որ պատմական ուսումնասի-րութեսնց համար շատ պիտանի զրուխ մըն է:

«Երուսադէմի Աթոռին պատմական յիշաւակնե-րուն եւ ժամանակակից զիստաւածներուն ալ մեծ ու շազրութիւնը դարձուած չէ. բայց այս զիստու-թիւններով մէկտեղ առաւելազոյն օգուտին տեսա-կիւտը պէտք չէ մուշէւ կեածը ուրանալու:

«Ո՞ւր էր թէ Երուսադէմ այսօր ալ ունենար իւր Սի՛ն ամագիրը. զոնէ պարագայր ներէին **Կուր** Սի՛ն մը հրատարակել»: (1916 Յուլիս 25/7 Օգաստու):

(Սի՛ն, 1927 Փետրուար, էջ 63-64)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԱԹՈՌՈՅ ԴԻՒԱՆԷՆ

Նախորդ հաղորդագրութեամբ, երուսաղէմի դէպքերը բերուած էին այն կէտին՝ երբ Տէրտէրեան Արքեպս. դատ բացած էր ներքին Գործոց Նախարարին եւ Ս. Աթոռոյ Տեղապահին դէմ, եւ ի հետեւանս որոյ Բարձր. Ատեանը առժամեայ կերպով կեցնել հրահանգած էր պատրիարքական ընտրութեան գործողութեան երկրորդ մասը: — Այս դատավարութիւնը սկսաւ Փետր. 13ին: Դատարանը նախ մերժեց նկատի առնել Տէրտէրեան Արքեպս.ի պահանջը որ իր տեղապահական պաշտօնէն դադարեցուիլը ապօրէն յայտարարուի: Ապա ունկնդրեց Պատրիարքարանիս փաստաբաններուն պաշտպանած թէզը թէ Բարձր. Ատեանի իրաւասութեան սահմանին մէջ չիյնար Պատրիարքարանիս ներքին ընտրական գործերով զբաղիլը: Դատին համար տրամադրուած ժամանակը սպառած ըլլալով, նիստին շարունակութիւնը յետաձգուեցաւ Մարտ 10ին:

Գեր. Տեղապահ Ս. Հայրը Փետր. 13ին Ս. Էջմիածնէն ստացաւ հետեւեալ հեռագիրը: «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Փետր. 8ի նիստին առաջարկով Վեհափառ Հայրապետը Փետրուար 10ին Տէրտէրեան Արքեպիսկոպոսի յից հետեւեալ հեռազիրը: — Վերջին անգամ ըլլալով Զեզ կը դիմենք յորդուելով որ ժամանակն է որ բառուիք ամեն գործ ու ես կենաք Զեր Արոնին եւ Միաբանութեան դէմ Զեր բոլոր ձեռնարկներէն: Լսեցէ Եկեղեցիին եւ Ազգին ձայնը. օգնեցէ զուր ձեզի որպէսզի մեեք ալ կարողանանք Զեզ օգնել: Կը սպասենք Զեր պատասխանին մինչեւ 16 Փետրուարի: Վազգէն Առաջին»:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Կ. Պոլսոյ Ամենապատիւ Տ. Գարեգին Պատրիարքին կողմէ էջմիածնէն ստացուած հեռագրի մը մէջ կ'ըսուէր հետեւեալը: «Տէրտէրեան 12 Փետրուար հեռագրով կը մերձէ ես կենալ իր դատական գործեն»:

Մինչ այդ, Ս. Աթոռոյս Տնօրէն ժողովը, գործադրելով Միաբանական Ընդհ. ժողովի իր 1956 Դեկտ. 20ի նիստին մէջ տուած հրահանգը, քննութեան ենթարկեց Եղիշէ Արքեպս.ի Ս. Յակոբեանց Ուխտի Միաբանութենէն արտաքսելու առաջարկը որ բերուած էր Միաբանական Ընդհ. ժողովի նոյն նիստին: Եւ ապա գտած ըլլալով որ Եղիշէ Արք. Տէրտէրեան ինը ծանր յանցանքներով մեղանչած էր Եկեղեցական ու Միաբանական կանոններու դէմ, այս պարագան հաղորդեց Տէրտէրեան Արք.ին 15 Փետր. 1957 թուակիր նամակով մը, եւ առժամանակեայ կերպով զինք կախակայեց Միաբանական իր իրաւունքներէն, եւ հրաւիրեց զինքը յետս կոչել իր զրպարտութիւնները եւ անիրաւ յայտարարութիւնները ու ներողութիւն խնդրել այն իշխանութիւններէն եւ անձերէն՝ որոնց դէմ մեղանչած էր, եւ պաշտօնապէս խոստանալ ուղղել իր ընթացքը: Տէրտէրեան Արք. 25 Փետր. 1957 թուակիր ընդարձակ նամակով մը, եւ բարձրաստիճան Եկեղեցականի մը անվայել ուսուր պատասխանեց Տնօրէն ժողովոյ յիշեալ պաշտօնագրին: — Տնօրէն ժողովը կրկին նկատի ունենալով, մէկէ աւելի նիստերու մէջ, իր քննութեանց արդիւնքը եւ Տէրտէրեան Արք.ի նամակը, 2 Մարտ 1957 թուակիր ընդարձակ տեղեկագրով մը խնդիրը ներկայացուց Միաբանական Ընդհ. ժողովին, եւ միաձայնութեամբ առաջարկ բերաւ որ Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան արտաքսուի Ս. Յակոբեանց Միաբանութենէն:

Միաբանական Ընդհ. ժողովը իր Մարտ 5ի նիստին մէջ ունկնդրեց Տնօրէն ժողովոյ տեղեկագիրը, ինչպէս նաև Եղիշէ Արք.ի Վերոյիշեալ նամակը, եւ համաձայն Միաբանական Կանոնի 15 րդ յօդուածի տրամադրութեանց, որոշեց արտաքսել Եղիշէ Արք. Տէրտէրեանը երուսաղէմի Արքոց Յակոբեանց Ուխտի Միաբանութենէն:

Այս որոշումը Տեղապահ Ս. Հօր կողմէ ենթակային հաղորդուեցաւ 6 Մարտ 1957 թուակիր նամակով: Նոյնը հաղորդուեցաւ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին եւ Ս. Քաղաքի Վահամաշուր Կառավարիչին:

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

ՀԵՌԱՋԻՐՆԵՐ

**Ա. Արույոս Գեր. Տեղապահ Ա. Հայրը, Տ.
Տիրան Արքայու, հետեւալ հեռագիրը դրեց
Ն. Ա. Օ. Տ. Տ. Պազգէն Ա. Ամենայն Հայոց
Կարողիկոսին, Նոր Տարւոյ և Ա. Մննդեան
սօներուն առիրու:**

Երևանի, 30 Դեկտ. 1956

Ն. Ա. Օ. Տ. Տ. Պազգէն Վեհափառ

Էջմիածին

Նոր Տարւոյ և Ա. Մննդի հրաշափառ
սօներուն առիրով, Զերդ Վեհափառութեան
և Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ-
ներուն կը ներկայացնեմ մեր Միաբանու-
թեան յարգալիր մերժաւորութիւնները:

Ի արտե կ'ալօրենք որ Ամենակալը Զեզ
կարողութիւն պարզեւէ՝ խաղաղութեամբ
հովանելու և առաջնորդելու համար մեր Ա.
Նկեղեցին:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՈՒ.

Տեղապահ Առաք. Ա. Արույոս
Երևանի Արքայու

**Ն. Ա. Օ. Տ. Տ. Պազգէն Ա. Կարողիկոսի
անուան սօնին առիր փոխանակութ հեռա-
գիրներ:**

Երևանի, 28 Փետրաւ 1957

Նորին Ա. Օծուրիւն Տ. Տ. Պազգէն Ա.
Կարողիկոս Ամենայն Հայոց
Էջմիածին

Մրագին մերժաւորութիւններ Միաբա-
նութեան և ժողովուրդին կողմէ Զերդ
Վեհափառութեան անուան սօնին առիր: Գոհաբանական Մաղրանք կատարուեցաւ
Զերդ Վեհափառութեան արեւատութեան և
բարօնութեան: Տերը պահէ զեզ և Մայր
Արույ իր հովանիին ներեւ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՈՒ. ՆԵՐՍՈՑԵԱՆ

Տեղապահ Պատրիարքութեան Ա. Արույոս

Ա. Էջմիածին, 4 Մարտ 1957

Գեր. Տ. Տիրան Արքայու. Ներսոյեան

Պատրիարքական Տեղապահ

Երևանի Արքայութեան

Ընդունեցէք մեր զերմագին մեռհակա-
լուրինը մեր անուանակոչութեան սօնին
առիր ուղարկած Զերդ մեռհաւորութեան
համար, ընդ որս եւ մեր Մրագին բարեմաղ-
րութիւնները Զերդ բարձրութեան եւ ա-
րեւատութեան համար:

Օհնութեամբ

Վ. Ա. Զ. Գ. Է. Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Հետեւալ օհեկան եւ ուրախանիր հեռա-
գիր սահցուեցաւ Ա. Էջմիածին 5 Փետրին:

Գեր. Տ. Տիրան Արքայու. Ներսոյեան

Տեղապահ Հայոց Պատրիարքութեան

Երևանի Արքայութեան

Յունուարի 23ին, Մայր Արույին յանձ-
նուեց նոր Վեհարանի տէնքը, կառուցուած
բարեւար Մանքաւանի կողմից, որ 1914ին
անաւար վիճակում յանձնուել էր զինու-
րական իշխանութեանց: Տէնքի յանձնման եւ
ընդունման արձանագրութիւնը հանդիսաւոր
կերպով սուրագրուեց Պազգէն Ա. Կարողի-
կոսի եւ Սովետական Հայաստանի Կառավա-
րութեան ներկայացուցիչ Յովհաննես Խոջլ-
եանեանի կողմից: Նոր Վեհարանի տէնքը,
երկարականի, բարակէն, ունի բան հազար
խորանարդ մէր ծաւալ, 3123 բառակուսի
մէր ընդհանուր մակերես, բաղկացած 66
սահներից եւ մէկ մեծ գանիճնից: Ն. Վե-
հափառութեան յանձնարարութեամբ պատ-
րաստում են տէնքի հիմնական վերանորոգ-
ման ու կահաւուման յատակագծերը: Մրա-
գութ է զիսաւոր դահլիճները վերակա-
ռուցիլ հայկական մանրանկարչական ու
խաղաղագործական ոնով, մէկական զան-
լին նուիրելով Արտաքսեան, Արշակունեաց,
Բագրատունեաց եւ Ռուբինեաց պատմաբր-
ջաններին:

ԴԻԴԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

ՄԻԵԴԱՑՑՈՒԹՅՈՒՆ - ԲԵՄԱԿՈՒՅՆԻՒՅ

● Աւր. 4 Յուն. — Վազգուան մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահց Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Օքննեցէք զէկը» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

● Եր. 5 Յուն. — Ս. Գաւրի մարգարեին և Յակոյ Տեաննեղօր (Տօն Առաք. Ս. Արքունի Երևանի դեմքի): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գեր. Տ. Հայկազուն նպա. Արքահամեան և քարոզեց, բնարան ունենալով օրուան տօնելի Սուրբերէն Դաւիթ մարգարեի խօսքը. «Տէր հովանեցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեցի» (Սաղմ. Էֆ. 1), և մաղթան քններ ըրաւ Ս. Աթոռոյս պայմանութեան և անօսանութեան համար: Քարոզէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանդըստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս բոլոր հանդուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր:

— Օրուան տօնին առթիւ, Ս. Գերեզմանին վրայ գիշերային Ս. Պատարագը մատոյց Գեր. Տ. Շնորհ նպա. Գալուստեան:

● Կիր. 6 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ ժամարարն էր Տանն Կիլիկիոյ Միաբաններէն հիւրաբար Ս. Աթոռ զտնուող Հոգ. Տ. Զաւէն Արդ. Արզումանեան: Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրբն նպա. Քէմանձեանի, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանդստեան պաշտօն, հանգուցեալ պարագաներուն համար Պէտքանութեամբ Տեղ. Տեղապահ Ս. Հօր:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտըւեցաւ վազուան հանդիսաւոր նախատօնակը՝ նախագահութեամբ Գեր. Տ. Տեղապահ Ս. Հօրին բուրժակութեան որոնք երկաթեայ և պրոնզեայ գեղեցիկ վանդակ մը շինած և նույիրած էին Ս. Յարութեան Տանարի Ս. Աթոռուածածնայ ու շաթափման հայապատկան սրբավայրին վրայ զետեղուելու համար:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտըւեցաւ վազուան հանդիսաւոր նախատօնակը՝ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Հօր: Տօնին բուրժակութեամբ երկու բուրժապատկիր վարդապետներն էին Գեր. Տ. Ասողիկ Ս. Վրդ. Ղազարեան և Հոգ. Տ. Տիրայր Վերաբերեան:

● Բ. 7 Յուն. — Ս. Ստեփանոսի նախավկային: Բատովորութեան, առաւօտեան ժամերգութեան պահուն տեղի ունեցաւ Սարկաւագներու մասնաւոր հանդէսը: Անոնք, թիւով 10, առաջնորդութեամբ երկու բուրժապատկիր վարդապետներուն, մարգարտագարդ թագերով և արձաթագամ շապիկներով զգեստաւորուած, փառաւորեցին յիշատակը իրենց մտատիպարին: Ապա, Տաճարի Ս. Ստեփանոս մատրան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Հինձնեան: Օրուան սուրբին մասին քարոզեց Գեր. Տեղապահ Ս. Հայրը, բնարան ունենալով «Ատեփանոս» այլ լի շնորհօք» (Գործք Զ. 8):

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտըւեցաւ վազուան հանդիսաւոր նախատօնակը՝ Հանդիսապետն էր Գեր. Տ. Ս. Սուրբն նպա. Քէմանձեան:

● Դ. 8 Յուն. — Ս. Առաքելյան Պետրոսի և Պողոսի: Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գետրոսի վերնամատրան մէջ մատոյց՝ Հայփայի և շրջակայից Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Շահան Արդ. Մշանեան:

● Դ. 9 Յուն. — Վազուան մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահց Գեր. Տեղապահ Ս. Հայրը: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը «Որ էնն յէսթեան» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարքարան:

● Եշ. 10 Յուն. — Տօն Ս. Արքունի Առաման: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխաղղի մատրան մէջ մատոյց Գեր. Տեղապահ Ս. Հայրը և քարոզեց, բնարան ունենալով օրուան տօնելի Սուրբերուն Քրիստոն տուած պատասխանը. «Կարեմք» (Մարկ. Ժ. 39): Ս. Պատարագէն ետք, Տեղապահ Ս. Արքազը Սրբազնը, Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, ամպուժանի տակ նախագահց Մայր Տաճարին մէջ կատարուած երգաղարձ մեծահանդէս թափօրին, որմէ ետք Միաբանութիւնը «Որ էնն յէսթեան» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Տեղապահ Սրբազնը օրնուած նշխարներ բաժնեց ներկաներուն:

— Նոյն երեկոյին տեղի ունեցաւ Միաբանական ընդհանուր ընթրիք, որու ընթացքին եղան բարեմազթութեան ուղերձներ:

● Կիր. 13 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ ժամարարն էր Հոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան: Քարոզեց Գեր. Տ. Ասողիկ Ս. Վրդ. Ղազարեան, բնարան ունենալով օրուան ձաշուԱւետարանէն «Ո՞վ արդեօք մեծ իցէ» (Ղուկ. Թ. 46), բացատրելով թէ հոգեւոր չափանիշով մեծութիւնը կը կայանայ խոնարհութեան ու իրերօննութեան մէջ և ոչ թէ, ինչպէս յանախ սիսաւ կերպով կը մըրանենք, բարձր զիրքերու կամ նիւթական հարստութեան մէջ: Ս. Թարգմանչաց վարժարանի երկսեռ աշակերտութիւնն ու օտար վարժարաններու հայ ուսանողներ ստացան Ս. Հաջորդութիւն:

— Ըստ սովորութեան, երեկոյին ժամերգութեանէն ետք, Ս. Աթոռոյս ամբողջ Միաբանութիւնն ու պաշտօնէութիւնը բարձրացան Պատրիարքարան, ուր Գեր. Տ. Տեղապահ Ս. Հայրը նոր տարւոյ չնորհաւորական խոսքերէն ետք բաժնեց բոլորին 1957 տարւոյ Սրբացոյց:

● Բ. 14 Յուն. — Խաղանդ: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց ժամերգութեան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարարն էր Հոգ. Տ. Ասողիկ Ս. Վրդ. Ղազարեան: Քարոզեց Գեր. Տ. Հմայեակ Ս. Վրդ. Ինչպահեան, բնարան ունենալով «Օքննեցի պակ քաղցրութեան տարւոյ» (Սաղմ. Կ. 2), յայտնելով թէ

Ամանորը ուրբախութեան օր մը ըլլալէ աւելի օր մըն է խորհրդածութեան ու հաշուեյարդարի մեր ներքին եսին հետ ու ըսելով թէ նոր տարին կը զանոնայ անիմաստ եթէ մենք չկննանք հոգեպէս նորոգութիւն ու սրբազրել անցնող տարւոյն մէջ դորձած մեր թերութիւնները. վասնզի այս ձեռվլ միայն մեր կեանքը կ'իմաստառութիւն ու կ'արձեարութիւն. Ո. Պատարագէն ետք, Միաբանութիւնը չարականները երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքաբարանի լուսազարդուած զանիճը, ի հետեւ հետեւցաւ ժողովուրդի սուսւար բազմութիւնն մը, չափ Դեր. Տ. Առուրէն նպա. Քէմհանեան, ի զիմաց Միաբանութեան, չնորհաւորական խօսքեր ուղղեց Տեղապահ Ա. Հօր, ընելով նուա արևշատութեան ու գործոց յաջողութեան մազթանքներ, ապա Բար. Գրիգոր Արք. Անհակեան կարդաց խնամուած ուղերձ մը՝ ի զիմաց ժառ. վարդ. ի և լնձայարանի ուսանողութեան. իսկ Ա. Թ. վարժարանի Մանկապարտէկէն փոքրիկ մը ծազկի փունչով արտասանեց. ժառ. Աններ երգեցին Ամանորի ձօնուած երգ մը, որմէ ետք Տեղապահ. Ա. Հայրը չնորհաւորական փոխազարձ զզացումներով պատասխանեց եղած ուղերձներուն, ու Ամանորի առթիւ պատշաճ արտայայաւութիւններ ընելէ ետք մազթեց որ յառաջիկայ տարին մեր ժողովուրդին համար ըլլայ խաղաղ ու շինարար աշխատանքի տարի մը ու բաժնեց ներկաներուն մէկական նարինչ:

● Ուր. 18 Յուն. — Ճշագալոյց Ա. Նննդեան: Առաւոտեան ժամը 10ին, Գեր. Տեղապահ Ա. Հօր զիխաւորութեամբ, Միաբանութիւնը Մայրավանքի գռնէն ինքնաշարժերու մէջ տեղաւորուած մեկնեցաւ զէպի նեթղենէմ, ուր հասաւ կէսօրուան մօտ ու Ա. Ծննդեան վանքի հանդիպակաց հրապարակին մէջ զիմաւորուեցաւ տեղւոյն կառավարական կազմէն. Զանգերու զօղանչին ու ժողովուրդի բազմութեան ընզմէջէն թափորը յառաջացաւ զէպի Տաճարի գաւիթը. Դպիրները հնորհուրդ մեծ շարականը երգելով առաջնորդեցին Միաբանութիւնը զէպի վանք, ուր զիմաւորութեան եկողներ պատուասիրուեցան:

— Ժամը 2.30ին, Տեղապահ Ա. Հօր զիխաւորութեամբ Միաբանութիւնը ՀՀրաշափառտի կարգով մուտք դորձեց Ա. Ծննդեան Տաճարը և ուղղուեցաւ զէպի Ա. Այրը, որուն ուխտէն ետք, Տաճարի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ժամերգութիւն ու ձրագալոյցի արարողութիւն: Մատուցուեցաւ նաև Ա. Պատարագ: Ժամարարն էր Գեր. Տ. Ասողիկ Մ. Վրդ. Ղազարեան: Ապա, Գեր. Տեղապահ Արքապահնը Ա. Ծննդեան աշխազահութեամբ, կատարուեցաւ օրուան յատուկ ընդհանուր հոգեհանգստեան կարգը:

— Գիշերուան ժամը 10ին, խորհրդաւոր ու զուարթագին հնչեցին Տաճարին հայկական զանգերը ու քիչ յետոյ սկսաւ զիշերային պաշտամունքը մեթղենէմի Ա. Ծննդեան եկեղեցին մէջ:

● Եր. 19 Յուն. — Ծննդեան և Ա.Օ.Տ.Ա.Ա.Մ.Ա. ՅԱՅ. Ա. Կէս գիշերին, Միաբանութիւն ու ներկայ հաւատացեալներ իշան Սուրբ Ծննդեան Այրը, ուր կատարուած արարողութիւններէն մաս մը ձայնասփոռուեցաւ Ցորդանանի Ծատիօ կայանէն ի սիմուս աշխարհի: Կարդացուեցաւ Ա. Ծննդեան Աւետարան, երկուս երգչախումբի կողմէ երգուեցաւ Շատոք ի բարձունաց և Ալյոս տօն է Սուրբ Ծննդեան, որմէ ետք Տեղապահ Արքապահնը առուն հանուր հայութեան ուղղութիւն Ա. Ծննդեան պատզամը ու վերապարձաւ Սրուսաւգէմ: Ասկէ անդին մատուցուեցան զոյդ Ա. Պատարագներ: Աւաշինը մատուցյաց Հոգ: Տ. Կորին Վրդ. Մանուկէլեան, որուն աւարտին Հջորհնէքի արարողութեան նախազահեց և Քրիստոսի Ծննդեան վորքին շարք քարոզեց Դամասկոսի թեմին կաթ. Փոխանորդ Գեր. Տ. Շաւարչ նպա. Գույշումնեան: Առաւոտեան զէմ մատուցուեցաւ հանդիպաւոր վերջին Ա. Պատարագը Քրիստոսի Ծննդեան տեղույն վրայ, որուն ընթացքին ներկաներէն շատեր ստացան Սուրբ Հաղորդութիւն: Պատարագին էր Գեր. Տ. Ծննդեան պատասեան: Արարողութիւնները աւարտեցան արեածագին, Ա. Ծննդեան վանքին մէջ կատարուած Աւետարանի ընթերցումով:

— Աւանդական նախանաշէն ետք, Միաբանութիւնը ինքնաշարժերով նամբայ ելաւ զէպի երգուածէմ, ուր հասաւ ժամը 9ին ու բարձրացաւ Պատրիարքաբանի լուսազարդուած զանիճը ուր Տեղապահ Արքապահնը Ա. Ծննդեան աւետիսով ու արձակեց ամէնքը:

● Կիր. 20 Յուն. — Ցիւասակ մենուց: Էստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց Ա. Ալոոսոյ Աւագ Թարզման Հոգ: Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան: Քարոզեց Գեր. Տ. Հմայեակ Ե. Վրդ. Խնդոյեան, բնարան ունենալով Ամէն, ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ (Ցովէ. ԺԲ. 24): Էստ թէ այս նախազասութիւնը իր մէջ կը բովանդակէ հորունկ հմարտութիւններ: Ըլլալով մէկը մեր Տիրոջ ամենէն նշանակալից արտայատութիւններէն: Ներկայացուց մենելոցներու բուն նպատակը, որ տարբեր է մեռեներու վրայ սպալու օր մը ըլլալէ լոկ: Ա. Պատարագէն ետք, Գեր. Տ. Առուրէն նպա. Քէմհանեանի նախազահութեամբ, կատարուեցաւ օրուան յատուկ ընդհանուր հոգեհանգստեան կարգը:

● Ուր. 25 Յուն. — Անուանակոչութեան նախատօնակին ի Ա. Յակոր նախազահեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը:

● Եր. 26 Յուն. — Անուանակոչութիւն Տեան: Գիխաւորութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր, առաւոտեան ժամը 8.45ին, Միաբանութիւնը ՀՀրաշափառուով մուտք դորձեց Ա. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ օրուան հանդիպաւոր Ա. Պատարագը՝ Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ: Պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Շաւարչ նպա. Գույշումնեան, քարոզի բնարան ունենալով օրուան ձաշու Աւետարանէն «Եւ կոչեցաւ անուն

Նորա Յիսուս (Ղուկ. Բ. 21), յորդորելով ներկաները իրենց առաքինի կենցաղով ու գործերով արժանի ըլլալ իրենց Քրիստոնեայ կոչումին. Ա. Պատարագի ընթացքին, Ընծայարանի և Ժանդ. վարժարանի բովանդակ ուսանողութիւնը ստացաւ Ա. Հազարդութիւնը: Ա. Պատարագի երգեցիկ երկներ խումբը կը զեկավարէր՝ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան: Վանք վերազարձին, Միաբանութիւնը «Էյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարանը, ուր կատարեցաւ «Ճնօրհնէքի» արարողութիւնը. Նոյնը կրկնուեցաւ նաև վանքի փուռին, մառանին, խոհանուցին և սեղանատան մէջ. Օրնուեցան Ա. Աթոռոյ բարիքները, և ի միջի այլոց օրուան ներխայի աւանդական ճաշը:

— Նոյն օր, Գեր. Տ. Հայկագուն Եպս. Բեթղեհէմ զնաց Սարկաւագաց և աշակերտաց փոքր խումբով մը և հանդիսի պատարագեց Ա. Այրին մէջ:

● Կիր. 27 Յուն. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան: Քարոզեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը, նիւթ ունենալով օրուան ծաշու Աւետարանէն կանայի հարսանիքի զէպքը (Յովհ. Բ. 1-11), ու բացարեց ջուրի և զինիի փոխարերական իմաստն ու տարրերութիւնները:

— Կէսօրէ վերջ, Ա. Յովհ. Կարապետի ծննդեան նախատօնակին ի Ա. Յակոր նախագահնեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը:

● Բ. 28 Յուն. — Տօն ծննդեան Ա. Յովհաննու հարավետին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Կարապետի խորանին վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

● Կիր. 3 Փետր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան: Քարոզեց Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան, նիւթ ունենալով օրուան ծաշու Աւետարանին ընթերցուածը (Յովհ. Գ. 13-21): Ներկայացուց մեր կեանքին մէջ զերը աստուածային շնորհին՝ որուն ընդունակ կը դառնայ մեր հոգին ազօթքով ու բարեպաշտական արարքներով:

● Կիր. 10 Փետր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յակոր: Ժամարարն էր Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան: Քարոզեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, քրիստոնէական բարեպաշտական սովորութեանց մասին:

● Ուր. 15 Փետր. — Վաղուան նախատօնակին ի Ա. Յակոր նախագահնեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը:

● Եր. 16 Փետր. — Ա. Սարգսի զօրավարին: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան:

● Կիր. 17 Փետր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Յովհէփ Արեղայ Մամուր:

● Կիր. 24 Փետր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Պատարագին էր Գեր. Տ. Ասողիկ Ա. Վրդ. Դազարեան: Քարոզեց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան և սեեմ հացն կենաց (Յովհ. Զ. 48), բնաբանով:

● Դչ. 26 Փետր. — Տեղանընդառաջի մեծահանդէս նախատօնակին և Անդաստանին ի Ա. Յակոր նախագահնեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը:

— Գիրշերասկիզբին, Տեղապահ Արքանը նախագահնեց Մայր Տաճարին մէջ պաշտուած հանգստեան ժամերգութեան:

● Դչ. 27 Փետր. — Տեղանընդառաջի: Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Անդանին վրայ մատուց Գեր. Տ. Նորայր Եպս. Պաշարեան և քարոզեց, ներկայացնելով Քրիստուուր իրեն լոյս՝ խաւարի մէջ նստողներու ու յայտնելով թէ քրիստոնեաներ պէտք է ունենան այդ լոյսէն, չչեղելու համար Տիրոջ գծած ճամբէն ու լուսաւորելու միջնէ օրս հեթանոսական խաւարի մէջ յամեցող ժողովուրզները:

— Նոյն օր մեթղենէմ զնաց Գեր. Տ. Շնորհէ Եպս. Սարկաւագաց և աշակերտաց փոքր խումբով մը և նախագահնեց ու քարոզեց Ա. Այրին մէջ մատուցուած տեսչական Ա. Պատարագի ընթացքին: Հանդիսապետեց նաև յետ միջօրէի վարդանանց նախատօնակին:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Վարդանանց մեծահանդէս նախատօնը: Հանդիսապետն էր Գեր. Տեղապահ Ա. Հայրը:

● Եշ. 28 Փետր. — Ա. Վարդանանց զօրավարացն մերոց 1036 Վկալիցն: Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Անդանին վրայ մատուց, ըստ սովորութեան, ժամա. վարժարանի և Ընծայարանի փոխ-տեսուչը՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան: Քարոզեց Գեր. Տ. Հայկապուն Եպս. Արքահամեան, ծանրանալով Վարդանանց պատմի Եղիշէի ԵՄահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է՝ խօսքին վրայ: Քարոզէն ետք, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր, Կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, և Ա. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ: իսկ Ա. Պատարագէն ետք, Գեր. Տ. Հայկապուն Եպս. նախագահնեց օրուան յատուկ հոգինանդաստեան հանդիսաւոր կարգին:

Պ Ա Շ Տ Օ Կ Ա Խ Ա Կ Ո Վ

● Դչ. 1 Յուն. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի, նոր Տաճուոյ շնորհաւական այցելութիւն տուաւ երուաղէմի և Երիքովի երեսփոխան Տքի. Եսպուա Զէյէտինի:

— Նոյն օր, հիւրաբար Ա. Աթոռ ժամանեց Տաճան Կիլիկիոյ Միաբաններէն Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Արգումանեան և մեկնեցաւ Յունուար 10ի առաւատուն:

● Եշ. 3 Յուն. — Կէսօրէ վերջ, Քաղաքիս Ղալուց Վարժարանի թէթրա Պանդոկի սրահին մէջ տրուած Ամանորի և Ս. Ծննդեան հանդէսին Ներկայ եղաւ Հոգ. Տ. Յովսէփ Արդ. Մամուր:

● Իշ. 8 Յուն. — Կէսօրէ առաջ, Օրթօստօքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առթիւ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ բովանդակ Միաբանութեան, Հնորհաւորական այցելու թիւն տուաւ Յունաց Պատրիարքարքարանին, որմէ ետք, Գեր. Տ. Ծննդէք Եպս. Դալուստեան, Ընկերակցութեամբ վարդապետ Հայրերու, Նոյն առիթով այցելեց Դոլուց, Ասորւց և Հատէլաց Մեծաւորներուն:

● Եր. 12 Յուն. — Երեկոյեան, Քաղաքիս Ամերիկան Հիւսաստոսարանին մէջ տրուած Cocktail partyին ներկայ եղաւ Գեր. Տեղապահ Արքաց Հայրը, Հոգ. Տ. Թորգոմ Վրզ. Մանուկեան և Տիար Կարպիս Հինգիեան:

— Նոյն օր, Գեր. Տ. Ծննդէք Եպս. Ամման մէկնեցաւ, Նախագահելու տեղւոյն Ազգային Վարդարանի Ամանորի հանդէսին:

● Բշ. 14 Յուն. — Հին Տամարով Նոր Տարւոյ առթիւ, այս և յաջողդ օրերուն, Պատրիարքարքարան այցելութեան եկան Քաղաքիս վամ. Կառավարիչը, Քաղաքապետը, Ռոտիկանապետը, փոխ-Քաղաքապետը՝ Քաղաքապետական կազմով, Եղիպտոսի և Ակուտի Արարիոյ Հիւսաստուները:

● Եշ. 17 Յուն. — Կէսօրէ վերջ, Ս. Ծննդեան տօնին առթիւ հիւրաբար Ս. Աթոռ ժամանեց Դամակոսի թէմբին Կաթ. Փօխանորդ Գեր. Տ. Շաւարձ Եպս. Գույումնեան և Հայր Տաճար Ծննդուուցաւ Հրաշավառառով. Իրեն կ'ընկերակցէր Տաճար Կիլիկիոյ Միաբաններէն Հոգ. Տ. Բարգէն Վրզ. Վարժապետական: Գեր. Արքացանն ու Հոգ. Հայրը տոներէն ետք մէկնեցան իրենց պաշտօնավայրերը:

● Կիր. 20 Յուն. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, առաւստեան ժամը 10էն սկսեալ, յաջորդարար Պատրիարքարքարան այցելութեան եկան Ցունաց Պատրիարքարքական Տեղ առաջար, Ֆրանչիսկան Միաբանութեան Կիւսօթուը, Լատինաց Ս. Պատրիարքը, Ղալուց և Ասորւց Փօխանորդները՝ իրենց Միաբանութեան անդամներով, Մարոնիթ Արիսկապոսը, Անկլիքան Եպիսկոպոսը, Պապական Նորիկակի Փօխանորդը, Հայ և Նոյն Կաթոլիկ Փօխանորդները, Ռուսաց Երէցը, Նոր Քաղաքապետը՝ Քաղաքապետական կազմով, Mr. Willard Jones' Միչեկեղեցային Խորհուրդն:

● Բշ. 28 Յուն. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրզ. Պայլամեանի և Տիար Կարպիս Հինգիեանի, Փօխ այցելութեան դասց Քաղաքիս Նորընտիր Քաղաքապետական Ուուհի Էլ Խաթիպին:

— Նոյն երեկոյին, Գեր. Տեղապահ Ս. Հայրը Պատրիարքարան հրամիրեց ամրող Միաբանութիւնն ու Արկաւագները և անոնց կարգաց Վեհ. Հայրապետէն ստացուած յորդորական կոնդակը, ուղղուած համայն հայ եկեղեցականութեան. Միաբանութիւնը յատնկայս ունկնդրեց զայն: Այս սրբատակ կոնդակը պիտի հրատարակուի Միոնի յառաջիկայ թիւին մէջ:

● Եր. 9 Փետր. — Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Դիւտանապետ Հոգ. Տ. Տիբայը Վրզ. Տէրվիչեանի, մէկնեցաւ Ամման. զրազելու հոն չինուելիք եկեղեցիի և զպրոցի ձեռնարկով: Կազմուեցաւ Յանձնախումբը մը՝ այդ գործին համար: Յաջորդ օրը, Տեղապահ Ս. Հայրը քարոզեց Ամմանի Ս. Աստուածածին մատրան մէջ. պատարագեց Հոգ. Տ. Տիբայը Վրզ. : Երկուքն ալ յաջորդ օրը վերադարձան Ս. Աթոռ:

● Բշ. 11 Փետր. — Ընդառաջելով Տիկին Ֆրէտէրիք Վէսթթըրի հրաւերին, ի պատիւ Օր. Տօրօթի թամսընի տրուած թէյասեղանին, ի զիմաց Գեր. Տեղապահ Ս. Հօր, Ներկայ գտնուեցան Գեր. Տ. Ասորիկ Ս. Վրզ. Դազարեան, Հոգ. Տ. Միւռան Վրզ. Կաթիկէան և Տիար Կ. Հինգիեան:

● Իշ. 13 Փետր. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Հայկասեր և Զաւէն վարդապետներու և Տիար Կարպիս Հինգիեանի, այցելութիւն տուաւ քաղաքիս Նորընտիր Ոստիկանապետ Աստատ Գէյ Քամալի, Կեզր. Ոստիկանատան մէջ:

● Աւր. 15 Փետր. — Արար Աշխարհի Զրոսացը կիսուներու Յանձնախումբի հրաւերին ընդառաջելով, ի զիմաց Տեղապահ Ս. Հօր, Ընազիտական գրասենեակին մէջ տեղի ունեցած հաւաքոյթին ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Զաւէն Վրզ. Զինչինեան և Տիար Կարպիս Հինգիեան: Ներկայ էին Նաև Կառավարութեան Արտաքին Դործոց Նախարարը, Վահեմ. Մուհաֆզզը և այլ պետական բարձրաստին պաշտօնատարներ:

● Բշ. 18 Փետր. — Կէսօրէ վերջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տիբայը Վրզ. Տէրվիչեանի, վանական գործերով մէկնեցաւ Խորայէ և վերադարձաւ 24 Փետր., Կիրակի երեկոյ:

● Բշ. 26 Փետր. — Կէսօրէ առաջ, Քաղաքիս Զինուորական Հրամանատարը այցելութիւն տուաւ Գեր. Տեղապահ Արքացան Հօր:

— Կէմ ժամ ետք, փօխ այցելութեան եկաւ Քաղաքիս Նորընտիր Ընդհ. Ոստիկանապետը, Ընկերակցութեամբ Հին Քաղաքի Ոստիկանապետին:

● Եշ. 28 Փետր. — Կ. ա. Ժամը 10.30ին, Քաղաքիս Նոր Բրիտանական Ընդհ. Հիւսպառու Մr. Stewart իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Գեր. Տեղապահ Արքացանին:

Ա. ԽԱՆԴԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԵՐԸ ԵՐԱԽՍՑԱԿԱՄԱԿԻ ՄԷՋ

Բառ սովորութեան, Երաւանէմի մէջ, Ս. Ծննդեան ձրագալոյցի արարողութիւնները կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Դերեկմանի ատեանին մէջ պաշտուած Երեկոյեան ժամերցութենէն և ձրագալոյցի արարողութիւնները ետք, Հոգ. Տ. Զաւէն Վրզ. Զինչինեան մատոյց Ս. Պատրիարքը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. Ապա, Գեր. Տ. Նորայր Արքացան Նախագահեց Ս. Ծննդեան Նախատօնակին, որմէ ետք Ս. Գերեզ-

մանին շուրջանակի դարձմամբ և «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը ուղղուեցաւ զէպի մեր Տեսչարանը, ուր կարգացուեցաւ Ա. Ծննդեան Աւետարան ու երգուեցաւ Փառքի բարձունչ:

Խոկ Շաբաթ առաւօտեան ժամը 4ին, Ա. Յակոբեանց Տաճարին մէջ պաշտուեցաւ գիշերային և ապա առաւօտեան ժամերգութիւն: Խոկ Հանգիստաւոր Ա. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց, ըստ սովորութեան, Ա. Հրեշտակապետաց վանքի Տեսուչը՝ Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գատարաննեան և քարոզեց Ա. Ծննդեան խօրհուրդին շուրջ: Ա. Պատարագի ընթացքին, բազմաթիւ հաւատացեալներ ստացան Հաղորդութիւն: Ապա, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան Նախագահեց «Ձքօրհնեաց» սրտադրաւ կարգին:

Ի բացակայութեան ժառանգաւոր Աններու, թէ՛ երէկ և թէ՛ այսօր երգեցողութիւնները կատարուեցան տեղացի ազգայիններու կողմէ:

ԿՈՐԻՒՆ Վ.ՐԴ. ՄԱՆՈՒԵԼՈՎ ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ՓՈԽ - ՏԵՍՈՒ

Ա. Աթոռոյն Պատ. Տնօրէն Փողովը, Նկատելով որ երկար ատենէ ի վեր Ժառ. վարժարանի Փոխ-Տեսութեան պաշտօնը թափուր կը մնայ և թէ սոյն պաշտօնը շատ կարենու է զատակարակչական և տղոց նկարագրի կերտումին տեսանկիւնէն զիտուած, Հով. Տ. Կորին Վ.րդ. Մանուկյանը նշանակեց վարժարանի Փոխ-Տեսուչը՝ Հոգեշնորհ Հայրը տարւոյս սկիզբէն ի վեր ջանասիրութեամբ կը կատարէ արդէն իր նոր և պատասխանատու պաշտօնը:

Այս առիթով կը շնորհաւորենք դինքը և կը մաղթենք կարողութիւն և արդիւնաւորութիւն:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻՈՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

1956 Յունուար 2ին, Յունաց հանգուցեալ Տիմոթէոս պատրիարքի դագաղը կ'անցնէր մեր Մայրավանքին առջեւէն դէպի իր յաւիտենական հանգիստը: Խոկ 1957 Յունուար 31ին, Գեր. Տեղապահ Տիրան Սրբեաս., իր հետն ունենալով Ա. Աթոռոյ Տնօրէն ժողովի լման կազմը, շնորհաւորական այցելութեան կ'երթար Յունաց նորընտիր Պատրիարքին՝ Ամեն. Պենետիկոսի: Յունաց պատրիարքական ընտրութիւնը լման տարի մը ուշացաւ պարզապէս բնիկ Սրբար Օրթոսոքս ժողովուրդի յարուցուած — ապա հարթքւած — դժուարութեանց հետեւանքով: Այս ընտրութիւնը գործնական փաստ մըն էր որ Երուսաղէմի մէջ եօր կամ աւելի տարիներ սպասելու անհրաժեշտութիւն չկայ եղեր պատրիարք մը ընտրելու համար:

Յունաց նորընտիր պատրիարքը ծնած է 1892ին, Պրուսա (Փոքր Ասիա): Աւսած է Երուսաղէմի եւ Աթէնքի մէջ: Սարկաւագ ծեռնադրուած է 1914ին Երուսաղէմի մէջ, իսկ կուսակրօն քահանայ՝ 1929ին Աթէնքի մէջ, ուր կ'ուսանէր 1921էն ի վեր տեղույն համալսարանի օրէնսգիտական բաժնի մէջ: 1946ին Երուսաղէմ վերադարձած եւ Սինոդի անդամ եղած է: 1951ին ծեռնադրուած է եպիսկոպոս իբրև տիտղոսաւոր Տիբերիոյ: (Ցիշել որ մեր այժմու Կաթողիկոսն ալ նոյն թուականին եպիսկոպոսական անտիմանին բարձրացաւ): Ընտրութիւնը տեղի ունեցաւ Յունուար 29ին (18 Սինոդականներէ բաղկացեալ ընտրողական ժողովի մը, 10ի ծայնով): Արքայական վաւերացումը կատարուեցաւ Փետրուար 21ին, իսկ գահակալութիւնը տեղի ունեցաւ Մարտ 1ին, Ա. Յարութեան Տաճարին մէջ, որուն ներկայ եղաւ Գեր. Տեղապահ Ա. Հայրը, հետն ունենալով Աւագ Բարգման Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանը:

Սիսն, ի դիմաց Պատրիարքարանիս, կը շնորհաւորէ Յունաց նորընտիր պատրիարքը եւ կը մաղթէ իբն երկար տարիներու հետ արդիւնաւոր գործունէութիւն Յունաց քոյր Պատրիարքարանի եւ համերաշխ համագործակցութիւնը մեր եւ Լատինաց Պատրիարքարաններու հետ, միջազգային Ա. Տեղեաց մէջ:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Անցեալ տարւոյ Դիկտ. 6ին, ծանր հիւանդութենէ վերջ, ութսունամեայ տարիքին վախճաննեցաւ հայ ականաւոր գրագէտ Դերենիկ Դեմիրճեան:

Ան ծնած է Սխալբալաք (Վրաստան), 1877ին: Նախակրթութիւնը ստացած է իր ծննդավայրի ղարոցին մէջ եւ ապա իր ուսումը շարունակած՝ էջմիածնի Գէորգեան ծեմարանը եւ Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի մէջ: Բարձրագոյն կրթութիւն ստացած է Ժրնէվի համալսարանին մէջ, որուն մանկավարժական բաժինը աւարտած է 1909ին: 1910ին կը վերադառնայ Թիֆլիս եւ կը զբաղի ուսուցչութեամբ: 1920ին կը փոխադրուի երեւան ուր Կ'ապրի կեանքի մնացեալ մասը:

Գրական գործունէութեան սկսած է 1890ական թուականներուն: Իր երկերու առաջին ժողովածուն լոյս կը տեսնէ 1899ին: Վաթսուն տարիներ սպասաւորը եղած է հայ գրականութեան: Արտայայտուած է զրեթէ զրական բոլոր սեռերով, արծակ կամ չափածոյ, թատերական ու վիպական: Գրած է առհասարակ պատմուածքներ, թատրերգութիւններ, վիպակներ եւ պատմական վէպեր որոնցմէ զլիսաւորներն են Վ.-Ռ.-Ն.-Հ. եւ Մէրու Մ-Հ-Ջ- որ դժբախտարար մնացած է անաւարտ:

Դերենիկ Դեմիրճեան «ճանչցուած ու մեծարուած է Հայաստանի մէջ որպէս հայ բանաստեղծութեան եւ գեղարուեստական արծակի լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը»:

ՃԱՒԱՐՃ ՄԻՍԱՔԵԱՆ

Տարւոյս Յունուար 26ին Փարիզի մէջ վախճաննեցաւ Յ-Հ-Զ թերթի հիմնադիր-խըմբագիր Ճաւարչ Միսաքեան:

Ծնած է 1884ին Սեբաստիոյ Զիմառա գիւղը: Փոքր տարիքէն փոխադրուած է Պոլիս: Նախակրթութիւնը ստացած է Պոլսոյ ազգային վարժարաններուն մէջ: Ճաւարչ Միսաքեան կանոււիչն ինքզինքը նուիրած է լրագրական ասպարէզին: Իր նախափորձերը կատարած է Ս-Հ-Հ-Ն-Դ-Վ-ի մէջ եւ ապա 1905ին Օսմաննեան Սահմանադրութեան հոչակումէն վերջ հրատարակած է Ա-Դ-Վ- գրական շաբաթաթերթը, Զապէլ Եսայեանի, Գեղամ Բարսեղեանի եւ Վահրամ Թաթուլի հետ: 1916-1918 կը բանտարկուի թրբական կառավարութեան կողմէ: 1925ին կը հաստատուի Փարիզ եւ կը սկսի հրատարակել Յ-Հ-Զ թերթը մինչեւ իր անակնկալ մահը:

Ճաւարչ Միսաքեան կը գուրգուրար հայկական բոլոր արժէքներու վրայ անխտիր: Ունենալով հանդերձ իր ուրոյն ուղղութիւնը, «կը խանդավառուէր երը գաղութիւնիր համերաշխութեան նշաններ ցոյց կուտային»: Ան ծեռնհասօրէն եւ պատուաւոր կերպով կատարեց հայ գրին ու լեզուին անաղարտ պահպանման պատուաւոր պարտականութիւնը, իրեւ անոր աննկուն պահպաներէն մէկը:

Թող իր տառապած հոգին հանգիստ գտնէ գէթ յաւիտենականութեան մէջ:



Վերոյիշեալ ազգային զոյգ դէմքերը, մին ի Հայաստան՝ իսկ միւսը արտասահման, երկուքն ալ հաւասարապէս, իրենց զիտցած ու զաւանած ուղիով ու ծեւով, իրենց ժողով վուրդին ծառայելու անկեղծ կրակով վառուած հոգիներ եղած են: Երկուքն ալ իրենց ուրոյն շրջանակները գերանցնող, զանգուածներէն սիրուած ու յարգուած գրիներ եղան, իրենց նկարագրի պարկեշտութեամբ, հայ զիրին անկաշառ նուիրումով եւ անսահման ժողովրդասիրութեամբ:

Երկուքն ալ, իրենց խոհականութեամբ եւ ծանրագլուխ մտաւորականի մը պատասխանատուութեամբ, դէմ եղած են արկածախնդրական մարզանքներուն՝ ազգային շրջանակներէն ներս, որոնք աւաղ, այնքան սուղ արժած են մեր ժողովուրդին:

Դերենիկ Դեմիրճեանի թաղումը կատարուած է Երեւանի մէջ «համազգային վշտի եւ սգի մէջ ... Սգոյ հսկայական թափօրով մեծանուն գրողի դագաղը առաջնորդուեց պանթէոն» ուր կ'ամփոփուի բախտաւոր գրողի մարմինը: Բախտաւոր՝ որովհետեւ ոչ միայն հայրենիքի մէջ գործելու երջանկութիւնը տրուած էր իրեն, այլ նաև հայրենի հողին մէջ պատուով հանգչելու խաղաղութիւնը:

Իսկ տարագիր Շաւարշ Միսաքեանի համար կատարուած է «իսկական ազգային յուղարկաւորութիւն մը» Փարիզի մէջ: Թաղուած է «Փէռ Լաշչզ» եւ «յուղումնահար յուղարկաւորները» մեկնած են «զլիմիկոր, ձգելով Շաւարշ Միսաքեանը իր յափունական հանգիստին մէջ»: ... Դառն հակատագիրը՝ մեր բոլոր տարագիր հասարակական դէմքերու ...:

ՍԻՐՆ իր յարգանքի բաժինը կը բերէ հայ ժողովուրդի տաղանդաւոր եւ բազմավաստակ զաւակներուն եւ հայ զիրի ու լեզուի մեծ մշակներուն՝ այս վշտալի մահերուն առթիւ:

Տ. ԽՈՐԵՆ Ա. ՔՀՆՑ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

Հոկտ. 2, 1956 ին Ա. Էջմիածնի մէջ վախճանած է Տ. Խորէն Աւագ Քնյ. Շուշանեան, Վանեցի, ուսած վաղացայ վանք: 1919 ին ձեռնադրուած քահանայ Երեւանի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ վրայ: Իսկ 1940 էն սկսեալ կը պաշտօնավարէր Ա. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ: Իր Եկեղեցական գրքերն ու զոյքերը կտակած է Օշականի Ա. Մեսրոպ Եկեղեցիի: Եղած է քաջանմուտ Եկեղեցական երգեցողութեան:

Տ. ԳԵՐԵՐԻ Ա. ՔՀՆՑ. ԳԵՐԵՐԻԵԱՆ

Նոյեմբ. 16 ին Լենինականի մէջ վախճանած է Տ. Գերեր Աւագ Քնյ. Գերերանը, ծխատէը նոյն քաղաքի Ա. Աստուածածին Եկեղեցւոյ: Բնիկ Հայաստանցի, ձեռնադրուած է 1916 ին իր զիւղին վրայ Սառնադրիւր, ուր կը քահանայագործ է մինչև 1928, որմէ վերջ կ'անցնի Վրաստան քահանայագործելու Կախեթի Եկեղեցին: 1940-1947 կը պաշտօնավարէ Թիֆլիս, իսկ 1947 ին ծխատէը կը նշանակուի Լենինականի Ա. Աստուածածին Եկեղեցիին ուր կը քահանայագործ է մինչև իր մահը: Ստացած է լանջախաչ Գերեր Զ. Կաթողիկոսէն և աւագութիւն վեհ: Տ. Պաղպէն Ա. Կաթողիկոսէն անցեալ Յուլիսին:


Տ. ՅՈՎՀ. Ա. ՔՀՆՑ. ԿԵՎՃԵՐԵԱՆ

Առիս Ապագայի մէջ (Եթովպիա), Փետր. 1 ին վախճանած է, զաղութիւն ծերունազարդ Հոգեւոր Հոգիւ: Տ. Յովհաննէս Աւագ Քնյ. Աէլինէրեան: Յիշեալը Երկար տարիներ ժառայած էր Եթովպիայ Համայնքին և երեք տարի առաջ ուխտ եկած էր քաղաքու, յերկրագութիւն Տնօրինական Սրբավայրերու:

Եգիպտոսի Առաջնորդ Դեր. Տ. Մամբրէ Արքեպոս, Փետր. 7 ին կատարած է վերջին օծումն ու նախազանած է յուղարկաւորութեան:

Սիսի իր ցաւակցութիւնները կը յարտնէ Եթովպահայ դաղութիւ հաւատացեալ անդամներուն և կ'աղօթէ որ Տէրը լուսաւորէ հանգուցելոյն հոգին:

Տէր ի լոյս երեսաց իւրոց հանգուցե վերոյիշեալ պաշտօնէից հոգիները:



1957-ի «ՄԻՈՆ» ԿԸ ՆՍԻՒՐԵՆ

BRUNNEN

Գեր. Տեղապահ Ա. Հայր՝
Գեր. Տ. Առւրէն Եպօ. Քէմհաճեան՝
Գեր. Տ. Նորայր Եպօ. Պողարեան՝

Գեր. Տ. Հայկազուն Եպօ. Աբրահամիան՝

Գեր. Տ. Ասոզիկ Մ. Վ. Վ. Ղազարեան՝
Հոգ. Տ. Թորգոմ Վ. Վ. Մանուկեան՝
Հոգ. Տ. Մաշտոց Վ. Վ. Բարիլուսեան՝

Հոգ. Տ. Կիւրեհղ Վ. Վ. Գաբրիէլեան՝

Հոգ. Տ. Գէորգ Արդ. Եազարեան՝
Հոգ. Տ. Յավսէփ Արդ. Մամուր՝
Բար. Գրիգոր Սրկ. Սահակեան՝
Բար. Արմենակ Սրկ. Շիրքանեան՝
Բար. Կարապետ Սրկ. Գապագեան՝
Ժառ. Տիգրան Մէթանեան՝
Միաբան Մագիայէլ Ճէնազեան՝

Տեղապահ Առաքէնեան՝

Տիար Գէորգ. Ներսոյեանին (Հալէպ):
Տիար Գ. Տանձիկեանին (Պէլըռութ):
Պողարեան Գրատան (Հալէպ):
Տիար Հարօլտ Աղամեանին (Տօրքէսթըր):
Տիար Հայկ Օհաննէսեանին (Գաճիրէ):
Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէլըռութ):
Տիար Վահան Ալթունեանին (Բաստէնա):
Տիար Անդրանիկ Մանուկեանին (Պաղտատ):
Արժ. Տ. Գ. Քէրմանիկեանին (Հալէպ):
Տիար Մովսէս Էարիլուսեանին (Էջմիածին):
Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրզի):
Տիար Միհթար Գաբրիկեանին (Նիւ Եորք):
Տիար Մեսրոպ Պաճաքեանին (Նիւ Եորք):
Տիար Գրիգոր Նազարեանին (Թէհրան):
Կարտինալ Խօսէն Թիսսէրանին (Հառմ):
Տիար Վահան Ստեփանեանին (Էլալկաթա):
Տօքթ. Պահրի Քիթթէլ (Հալէպ):
Տիար Կարապետ Փաթանեանին (Հալէպ):
Տիար Աստիկ Մէթճեանին (Նիւ Ճըրզի):
Տիար Մարգար Հէքիմպաշչեանին (Պոլիս):
Տիբացու Նուգար Շապճեանին (Պոլիս):
Արժ. Տ. Վարդան Քհ. Ասատուրեանին
(Նիւ Ճըրզի):
Տիար Դավարոս Գարակէօղեանին (Պոլիս):
Աղգային Մարգական Միութեան (Ամբան):
Տիար Վարդան Վարդանեանին (Թօրօնթօ):
Տիար Խշան Առաքելեանին (Աղկ Քսանդրիս):
Տիար Մարգիս Մանուկեանին (Վիեննա):
Տիար Միհրան Գալպիկեանին (Լոնտոն):
Տիար Յակոբ Ճանոյեանին (Տիթրութ):
Տիար Յօվհաննէս Պագանեանին (Պոլիս):

Qibran Khalil

Հոգ. Տ. Գիւտ Արդ. Նազարեան:

Տիւր Ատեփան Քիւրքճեանին (Դամասկոս)։

Фурхокб

የብር. ሪ. በብንዳቤ ክሙ. በመከበረከዎን

Տիար Ա. Յովհաննէսեանին (Մօնթէվիտէօ):
Տիար Արքակ Սարդիխեանին (Թրէգնօ):

Ամերիկային

Արժ . Տ . Վարդան Քէ . Աւագեան՝
Օր . Խանըմ Սարգիսեան (Ֆրէզնօ)

Տիւար Տիգրան Պաղաւեանին (Եիւ Եորք)։
Տիւար Մ. Պարբիէլեանին (Սան Ֆրանչիսկօ)։
Յորէզնոյի Հանրային Մատենադարանին։
» Ո. Երրորդ, Եկղ. Մատենադարանին։